Էջմիածին
2001

ՍՄ 146

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ս է պ տ է մ բ է ր
2001

[illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՇԱԿ ՎՐԴ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Համազգային փարեգրության հոբելյանագարդ հանգրվանը 3

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆԱՑ ԳՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈՎՎԱՊԵՏԵՐԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ 1700-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Ալեքսի Բ-ի շնորհակալական գիրը 6
Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի շնորհակալական գիրը 8
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք Պետրոս Է-ի շնորհակալական գիրը 9
Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի շնորհավորանքի գիրը 10
Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Թեոկտիստի շնորհակալական գիրը 12
Ռիգայի և Լատվիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս Յանիս Վանագսի շնորհավորական գիրը 13

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի շնորհավորական գիրը 14
Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի շնորհավորական գիրը . . . 15

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մյուռոնօրհնության արարողությանը 16
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Երևանի Մայր եկեղեցու օծման ժամանակ 20
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը քրիստոնեության Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի և Հայաստանի Հանրապետության 10-ամյակի հանդիսությանը 23
Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության

հոչակման 10-ամյա փարեդարձի առիթով 26
Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը
ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած
ահաբեկչության առիթով 28
Համատեղ Հայտարարություն Նորին Սրբություն
Հովհաննես-Պողոս Բ Պապի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի 29

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
1700-ամյակի փոնակատարությունները Մայր Աթոռ
Ս. Էջմիածնում 32
Սրբալույս Մյուռոնի օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . 41
Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման
սրբազան արարողությունը 44
ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Հռոմի Սրբազան
Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդի այցելությունը
Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 53
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Եպիսկոպոսական ձեռնադրություն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 85
Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյան 89
Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյան 91
Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյան 93
Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյան 96
ՎԱԼՈՒԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Բազմախորհուրդ
իրադարձություններ 98

1700-ԱՄՅԱԿԻ ԽՈՐՀՐԴՈՎ

ՆԱՋԻԿ ԽԱՆՋՅԱՆ, ՄԻՐԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ - Սրբալույս Մյուռոնի
ցանկերը Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի ձեռագրերում 103
ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ - «Մեծ ուրախություն է քարի հետ աշխատելը» . . 110
ՍՏ. ՔՅՈՒՔՉՅԱՆ - Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ
Մայր եկեղեցին 114

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Հայրապետն ընդունեց լորդ
Ռասել Ջոնսթոնին և Զարգացման ու վերակառուցման
Եվրոպական բանկի ղեկավարներին 121

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Ատլանտյան դաշնագրի ասոցիացիայի ներկայացուցիչներին . . 122
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական
տնտեսական համագործակցության խորհրդի և
ԵՀԽ Հայաստանյան Կլոր Մեղանի նիստերի մասնակիցներին,
ինչպես նաև կենսաքիմիայի Հայաստանյան միջազգային
գիտաժողովի մասնակիցներին 122
Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիպումները
Արգենտինայի փոխարտգործնախարար
Նորբերտո Պադիժայի և Կիպրոսի պաշտպանության
նախարար Սոկրատես Հասիկոսի հետ 124
Եկեղեցական բեմ. լուրեր 125
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 127
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 130
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine 133

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱՋԱՐԴ ՀԱՆԳՐՎԱՆԸ

Պատմական դեպքերն ու իրադարձությունները նման են լեռան. քանի դեռ մոտ ես՝ մեծ են, մինչդեռ որքան հեռանում ես, այնքան մշուշվում ու փոքրանում են: Կան իրադարձություններ, սակայն, որոնք չեն ենթարկվում ընդհանուր օրինաչափություններին. դրանք նման են ոչ թե լեռան, այլ հորիզոնի և վեր են ժամանակային ու տարածական պայմանականություններից: Այո, նման են հորիզոնի, որին որքան մոտենում ես, այնքան ահագնորեն մեծանում, և որքան հեռանում՝ նույնքան շքեղորեն ընդլայնվում ու պայծառանում է:

Այսպիսին է ազգային մեր տարեգրության մեջ Քրիստոնեության պետականորեն ընդունման իրադարձությունը, որը տեղի ունեցավ 1700 տարիներ առաջ, 301 թվականին, Ս. Գրիգոր Լուսավորչի քաջեռանդ առաքելագործությամբ և Ս. Տրդատ արքայի գործուն աջակցությամբ:

Հոբելյանները, հարկավ, բազում են մեր ժողովրդի կյանքում. տոնակատարություններ՝ նվիրված ազգային ազատագրական պայքարի նշանակալից դրվագներին, արվեստի ու մշակույթի նվիրյալ սպասավորներին և այլն և այլն: Քրիստոնեության պետական կրոն հռչակման հոբելյանը, սակայն, այլ է, այլ է համազգային մեր կյանքում ստացած բացառիկ իր արժեքով ու նշանակությամբ, հաջորդ դարերի պատմության վրա թողած իր կնիքով և հայ ժողովրդի հետագա ընթացքը պայմանավորելու եզակի իր ներուժակությամբ:

Անշուշտ, կարելի է թվարկել մի շարք գործոններ, որոնք նախադրյալներ ստեղծեցին հաստատված ու չհանդուրժվող մի հավատի՝ քրիստոնեության ավանդական հին կրոնի հետ պայքարում հաղթանակող դուրս գալու համար: Մեծագույն պատճառը, սակայն, վեր է սովորական տրամաբանական եզրահանգումների առաջնորդող ճշմարտություններից. այն վերերկրային է, հավատքի արդյունք, սեփական առաքելության հանդեպ անսահմանորեն «սիրահարված» նվիրյալների սխրանք: Ժամանակի հոսքը առավել ընդգծեց Լուսավորչի և Տրդատ արքայի առաքելության բացառիկությունն ու եզակիությունը:

Ընթացիկ տարին մեր ժողովրդի համար այդ բացառիկությանը անդրադառնալու ևս մի հնարավորություն է, Հայոց Մեծ Դարձի վերարժևորման հրավեր, որին ընդառաջ գնաց տակավին Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երբ օրհնեց ու անմիջաբար նախաձեռնեց հոբելյանական տոնակատարությունների կազմակերպումը: Խանդավառված էր Երևանաշնորհ Հայրապետը նախախնա-

մության շռայլությամբ. քանզի Հայաստանի ազատ ու անկախ Հանրապետության եռագույնի ներքո տոնակատարվելու էր Քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակը: Վազգեն Վեհափառի մտահղացումը եղավ հոբելյանը նշանավորել Երևանի սրտում հոյասլաց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու կառուցմամբ, և ծերունազարդ Հայրապետի դողդոջ ձեռքով կատարվեց եկեղեցու հողօրհնեքը: Վազգեն Վեհափառի վախճանումից հետո, ձեռամբ Գարեգին Ա Կաթողիկոսի, ստեղծվեց տոնակատարությունների կազմակերպման հատուկ գրասենյակ. կատարվեց հիմնարկեքը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու: Նորին Սրբությանը, սակայն, ևս վիճակված չէր իրականացած տեսնել Իր ու Երջանկահիշատակ Իր նախորդի երազը:

Հոբելյանական տոնակատարություններից երկու տարի առաջ Հայրապետական գահ բարձրացավ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Տոնակատարությունների նախաշեմին իրականացվեցին վերջնական աշխատանքները և 2000 թվականի դեկտեմբերի 31-ին, Ամանորյա գիշերը, ազդարարվեց տոնական տարվա հանդիսավոր սկիզբը, երբ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ եկեղեցականաց ողջ դասը Խոր Վիրապի չարչարանաց գուբից դուրս բերված կրակը կանթեղով տեղափոխեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Գլխավոր տոնակատարությունները, սակայն, նախատեսված էին սեպտեմբեր ամսի երկրորդ կեսին: Հոբելյանական այս հանդիսություններին մասնակցելու համար հրավերներ ուղղվեցին քույր Եկեղեցիների պետերին, Նվիրապետական Աթոռների Գահակալներին, հայրենի ու տարբեր պետությունների ղեկավարներին և բարձրաստիճան պաշտոնյաներին, Մայր Աթոռի եպիսկոպոսաց ու առաջնորդաց ողջ դասին, աշխարհասփյուռ բազում հայորդիների:

Հայաստան ժամանած հյուրերի և ուխտավորների ներկայացուցչական կազմը շեշտեց հոբելյանի համաեկեղեցական ու միջազգային բնույթը: Համազգային հոբելյանի ուրախությունը մեր ժողովրդի հետ կիսելու եկան Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Ալեքսի Բ-ը, Հռոմի Սրբազան Պապ Հովհաննես-Պողոս Բ-ը, Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Ն. Ս. Բասիլեոս Մար Թովմա Մատթեոս Բ-ը, Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պապ և Պատրիարք Պետրոս Է-ը, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ն. Ս. Թեոկտիստ Ա-ը, Սեզլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերին և շուրջ քսան այլ Եկեղեցիների պատվիրակություններ ու ներկայացուցիչներ:

Եկեղեցիների պետերի ու պատվիրակությունների հետ Նորին Սրբություն Գարեգին Բ-ը համատեղ աղոթքի կանգնեց ու ողջագուրվեց, կատարեց օծումը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու, հայրական աջով օրհնեց հոբելյանական Սրբալույս Մյուռոնը:

Հայոց թագավորության բարձումից շուրջ յոթ հարյուրամյակ հետո անկախ Հայաստանում կրկին թնդաց Լուսավորչի ոգին: Սեպտեմբերյան տոնակատարությունները դարձան քույր Եկեղեցիների հետ եղբայրական հարաբերությունների զո-

բացման ու փոխադարձ ճանաչողության ևս մի գեղեցիկ առիթ: Առավել ընդլայնվեցին Առաքելական մեր Եկեղեցու ճանաչվածության սահմանները:

Այս ամենից բացի փոնակատարությունները նաև դարձան լուսարձակ՝ ընդգծելով անաստվածության գարիներին գործված ավերների տակավին չհաղթահարված հետևանքները: Բնականաբար հոբելյանական փոնակատարություններով միայն անկարելի էր լինելու զգալի արդյունքների հասնել Եկեղեցու ներքին կյանքի վերակազմակերպման բնագավառում: Այս առումով Հայոց Մեծ Դարձի հանդիսակատարումը չի ավարտվել, այլ դարձել է սկիզբ շարունակական մի գործընթացի, որը նշանավորվելու է հասարակական կյանքում մեր Եկեղեցու ամբողջական ներգրավվածությամբ, Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության շաղկապմամբ և, որ ամենակարևորն է, հոգևոր ներքին կյանքի բարեփոխմամբ: Այս է Հայոց Մեծ Դարձի խորախորհուրդ պատգամը և այս է արդի մեր կյանքի հրամայականը:

ԱՐՇԱԿ ՎՐԴ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆԱՑ ԳՐԵՐ
ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈՎՎԱՊԵՏԵՐԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ 1700-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-Ի ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն, Սիրեցյալ Մեր եղբայր.

Ամբողջ հոգով շնորհակալ եմ Ձեզ, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսաց և հոգևորականաց դասին՝ Հայոց նվիրական երկիր կատարած այցելության ընթացքում Մեր և Մեր շքախմբի անդամների նկատմամբ ցուցաբերած ջերմ ու սիրալիր ընդունելության համար: Մենք Ձեր երկիր եկանք սրտի կանչով, որպեսզի մասնակցենք Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին, և ուրախ եղանք կիսելու Ձեզ հետ այդ մեծ ուրախությունը:

Վկայում ենք, որ դա եղավ քրիստոնեական հավատքի իսկական հանդիսություն Հայոց հողում: Մենք ականատես եղանք ժողովրդի համախումբ ցնծությանը, «միասնական շուրթերով և միասնական սրտով» Արարչին մատուցված գոհաբանությանը՝ Իր անճառելի ողորմածության համար, որն տեսանելի կերպով արտահայտված է երաշալի փաճարի պատկերում անվանակոչված ի պատիվ Ս. Գրիգորի՝ Հայոց Լուսավորչի: Չնայած այն դժվարություններին, որ ապրում է եղբայրական հայ ժողովուրդը, այդ վեհասքանչ փաճարը կառուցվեց ամենակարճ ժամանակահատվածում և դարձավ որպես քրիստոնյա պետության վերածննդի խորհրդանիշ:

Մենք ուրախ ենք, որ եղանք Ս. Էջմիածնում՝ Հայ Առաքելական Եկեղեցու պատմական կենտրոնում, նրա հոգևոր գանձարանում, որտեղ բաբախում է ձեր հիասքանչ երկրի քրիստոնյա սիրտը: Մենք հավատում ենք, որ մեր Եկեղեցիներն ու ժողովուրդները ավանդաբար միավորող եղբայրական կապերը 21-րդ դարում կամրապնդվեն և կտան նոր բարի պտուղներ: Եվ մենք, մեր քահանայապետական խաչը տանելով,

մեր ծառայությունը մեր ժողովուրդներին ու Եկեղեցիներին կմատուցենք Քրիստոսի սիրով միաբանված:

Ինչպես ասվում է Ձեզ մոտ՝ Հայաստանում՝ «կանաչ մյուռոնը վկա», մեզ կապող ջերմ եղբայրական զգացումները երբեք չեն կորցնի իրենց ուժն ու խորությունը և կօգնեն մեզ մեր Եկեղեցիների ու ժողովուրդների առջև ծագող բոլոր խնդիրները լուծելիս:

Շնորհակալ ենք Ձեր թանկագին նվերի՝ 10-րդ դարի Ս. Ավետարանի լուսատիպ հրատարակության համար, որ զարդարված է ավելի վաղ շրջանի հիանալի մանրանկարներով: Այդ գիրքը և մյուս ընծաները Մեզ հիշեցնելու են Ձեր սիրո և եղբայրական սրտագին զգացումների մասին՝ որն առատորեն արտահայտվեց Հայոց հիասքանչ հողում մեր կարճատև կեցության ընթացքում:

Վերստին Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ, Ձերդ Սրբություն, ջերմ և սրտագին ընդունելության համար, որին մենք արժանացանք Հայաստանի և Հայ Առաքելական Եկեղեցու մեծ հոբելյանի տոնակատարության օրերին: Աղոթքով Ձերդ Սրբությանը մաղթում ենք Աստծո զորակցությունը հովվապետական դժվարին ծառայության մեջ, հոգու և մարմնի եռանդ ու կորով, կյանքի երկար օրհնյալ տարիներ և առաջնորդություն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու:

Եղբայրական սիրով ի Տեր՝

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀՌՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ

Վերադառնալով Վատիկան՝ շտապում ենք Ձերդ Սրբությանը հայտնել Մեր սրտաբուխ շնորհակալությունը՝ Մեր կարճատև, սակայն հագեցած այցելության ընթացքում Ձեր և Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մեր հանդեպ ցուցաբերած հարգալիր վերաբերմունքի համար:

Մենք առանձնակի ուրախություն ապրեցինք, որ հնարավորություն ունեցանք կիսելու քրիստոնեությունը Ձեր երկրում պետական կրոն հռչակելու 1700-ամյա եռբնյանի փոնական ուրախությունը:

Ընդունեցեք Մեր երախտագիտությունը անձամբ Ձերդ Սրբությանը՝ Վեհարանում Ձեր սիրալիր ընդունելության, ջերմ խոսքերի և եղբայրական սիրո Ձեր դրսևորումների, ինչպես նաև Ս. Էջմիածնում եղյ կաթոլիկ համայնքի հետ Սուրբ Պատարագ մատուցելու և հաղորդվելու հնարավորություն ընձեռելու համար:

Էկումենիկ արարողությունը նորաոծ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում հաստատեց մեր հույսը, որ Կաթոլիկ և Հայ Առաքելական Եկեղեցիների միջև հարաբերությունները, չնայած առկա երկուստեք մտահոգիչ մի շարք հարցերի, առավել պիտի գորանան ու արդյունավորվեն:

Մենք պիտի աղոթենք, որ Ձեր Եկեղեցին հայության համար շարունակի մնալ հավատքի, ներողաշնակության և ազգի զարգացման թթխմորը, հատկապես այժմ, երբ Հայաստանը ի մի է բերում իր հոգևոր և մշակութային արժեքները՝ ազատության և բարօրության ծաղկման նոր դարաշրջանի կառուցման համար:

Թող Աստվածամայրը և Ս. Գրիգոր Լուսավորիչն առաջնորդեն և պահեն Ձեզ և հայ ժողովրդին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի բերկրանքի ու խաղաղության մեջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԵՏՐՈՍ Է-Ի ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ

Ձերդ Սրբություն,

Սիրելյալ Եղբայր ի մեր Տեր Հիսուս Քրիստոս.

Մեծ ուրախությամբ ենք դիմում Ձերդ Սրբությանը:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանն այն ջերմ հյուրընկալության համար, որ ցուցաբերվեց Մեր հանդեպ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը նշանավորող տոնակատարություններին մասնակցելու նպատակով սիրելյալ Հայաստանյայց Եկեղեցի կատարած Մեր վերջին այցելության ընթացքին:

Այցելությունը մեծ օրհնություն էր Մեզ համար, քանզի հնարավորություն ունեցանք ականատես լինելու Հայ Ուղղափառ Եկեղեցու կենդանի հոգուն: Նաև հնարավորություն ունեցանք ականատես լինելու հայկական ավանդական հյուրընկալությանը, մեր հայ եղբայրների ու քույրերի եղբայրական վերաբերմունքին:

Մենք աղոթում ենք, որ մեր Տերը Ձերդ Սրբությանը և Ձեր ողջ հոտին շնորհի իր աստվածային ոգեշնչումն ու զորությունը Ձեր բոլոր մտահղացումներն իրականացնելիս և պարգևի Ձեզ բոլորիդ առողջություն, արևշատություն, առաջնթաց՝ խաղաղության, միասնության և սիրո մեջ, ինչպես նաև ամենայն շնորհ, բարիք և կատարելություն, որ գալիս է ի Վերուստ:

Ձեր Սիրելյալ եղբայր ի Քրիստոս՝

ՊԵՏՐՈՍ Է
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ
ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ Բ-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն, սիրելի եղբայր ի Քրիստոս.

«Թող Տիրոջ անունն օրհնյալ լինի այսուհետև մինչև հավիտյան»:

(Սաղմոս ՃԺԲ 2)

Ընդամենը մեկ տարի առաջ ողջ աշխարհը նշեց Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը: Քրիստոնեությունը լիովին փոխեց մարդուն և շատ հարցերում կանխորոշեց աշխարհի զարգացման ճակատագիրը: Դա հատկապես վառ արտահայտվեց այնպիսի հին քրիստոնյա ազգերի պատմության մեջ, ինչպիսիք են վրացիները և հայերը:

Կարելի է ամենայն վստահությամբ ասել, որ քրիստոնեությունը ոչ միայն ազդեց մեր պատմության վրա, այլև փրկեց մեր երկրները ոչնչացումից:

Այսօր հայ ժողովուրդը տոնում է քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Քրիստոնեության պետականորեն ընդունումը եղավ բացառիկ կարևոր քայլ, որը կանխորոշեց Ձեր երկրի հետագա ճակատագիրը: Քրիստոնեությունը հանդիսացավ այն ամուր հիմքը, որի վրա հայ ժողովուրդը կառուցեց, կերտեց իր յուրօրինակ մշակույթը, ճարտարապետությունը, գրականությունը և այն բոլոր հոգևոր ու ազգային արժեքները, որոնցով այսօր հպարտանում է ոչ միայն հայ ժողովուրդը, այլ նաև ողջ քրիստոնյա աշխարհը:

Այնպիսի հոբելյան, ինչպիսին է քրիստոնեության ընդունման 1700-ամյակը, ոչ միայն մեր ժողովուրդների և պետությունների փառավոր անցյալն է, այլ նաև ապագային ուղղված հայացք, մեր ժողովուրդների կյանքում մեր Եկեղեցիներին վերապահված դերը տեսնելը: Մենք համարում ենք, որ քրիստոնեության 2000-ամյա պատմության ողջ ընթացքում դեռևս երբեք մեր Եկեղեցիների ուսերին չի ընկել այնպիսի ծանր ու դժվարին պատասխանատվություն, ինչպիսին մենք այժմ ունենք: Մենք չենք կարող հանգստությամբ նայել, երբ որոշակի ուժեր փորձում են խեղել մեր կրոնական հոգևոր և ազգային արժեքները, երբ մեր երկրներ են թափանցում ամբողջատիրական աղանդներ՝ թաքնվելով կեղծ մշակույթի և ժողովրդավարության անվան ներքո:

Մենք պետք է պահպանենք մեր Եկեղեցիներն ու ժողովուրդներին այն ամենից, ինչ որ օգտակար է մեզ, ինչ որ կարող է վնասել մեր ժողովուրդների բարոյական կեցության հիմքերը:

Այն ահաբեկչական գործողությունները, որ վերջերս տեղի ունեցան Ամերիկայի Միացյալ Նահանգներում, աշխարհին կանգնեցրին երրորդ համաշխարհային պատերազմի վտանգի առաջ: Մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, թե որքան իրական և վտանգավոր է մոլեռանդության վրա հիմնված ահաբեկչությունը: Ողջ աշխարհի բարի կամքի մարդիկ պետք է միավորեն իրենց բոլոր ջանքերը՝ կանխելու այդ չարիքը ոչ թե վրիժառության, արյան և կործանման միջոցով, այլ նպատակամղված, խոհեմ, խելամիտ և խաղաղ միջոցներով, որովհետև, ինչպես ասում է Ս. Բարսեղ Մեծը, հնարավոր չէ չարը բուժել չարով:

Ձերդ Սրբություն.

Հրաց Ուղղափառ Եկեղեցու և Մեր անունից սրտանց շնորհավորում ենք Ձեզ և համայն հայ ժողովրդին՝ քրիստոնեության ընդունման 1700-ամյա փառավոր հոբելյանի առիթով:

Մաղթում ենք Ձեզ առողջություն, երջանիկ արևշատություն, իսկ Ձեր Եկեղեցուն և երկրին՝ խաղաղություն և հետագա ծաղկում, բարգավաճում:

Խաղաղության և սիրո Աստվածը թող լինի մեզ հետ և մեր միջև:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԻԼԻԱ Բ
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ

ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԹԵՈԿՏԻՍՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն,

Սիրեցյալ եղբայր ի Տեր մեր Հիսուս Քրիստոս.

Հայոց Եկեղեցու ու հայ ժողովրդի մեծագույն տոնին մասնակցելուց հետո հոգու անհուն ուրախությամբ վերադարձանք Բուխարեստ՝ Մեր նստավայրը:

Այցելության ընթացքում Մենք զգացինք Սուրբ Գրիգոր Լուսավորչի խորհրդավոր ներկայությունը: Հուզիչ հոգևոր արարողությունը հայ ժողովրդի նահատակների եիշատակը հավերժացնող հուշահամալիրում, ինչպես նաև քրիստոնեության 1700-ամյակին և անկախության տասնամյակին նվիրված տպավորիչ տոնակատարությունները համապատասխան էին այն զոհողություններին, որ դարեր շարունակ կրել է Հայաստանը:

Մեծապես շնորհակալ ենք եղբայրական այն սիրո համար, որ Դուք դրսևորեցիք անձամբ Մեր և Մեր պատվիրակության նկատմամբ: Հուսով ենք, որ այսուհետև մեր երկու Եկեղեցիների փոխհարաբերությունները առավել պիտի զորանան, և Ձերդ Սրբությունը պիտի կարևորի աստվածաբանական երկխոսությունները (և Դուք կշահեք դրա արդյունքներից), որպեսզի երկու Ուղղափառ Եկեղեցիները՝ մինչքաղկեդոնյան և էկումենիկ յոթ ժողովներն ընդունողները, հասնեն լիակատար հաղորդության:

Ողջագուրվում ենք եղբայրական սիրով ի Տեր մեր Քրիստոս:

ԹԵՈԿՏԻՍՏ
ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

ՌԻԳԱՅԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆԻՍ ՎԱՆԱԳՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Թող Ձեզ ուղեկից լինեն Աստծո, մեր Հոր և Տեր Հիսուս Քրիստոսի ողորմածությունն ու խաղաղությունը: Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում քրիստոնեություն պետական կրոն հռչակելու 1700-ամյա տոնակատարություններին մասնակցելու հրավերի համար: Մեծապես ափսոսում ենք, որ մեր պարտականությունները մեր Եկեղեցու հանդեպ թույլ չեն տալիս ինձ Ձեզ հետ լինելու սեպտեմբերյան այս օրերին:

Կամենում եմ օգտվել առիթից և երախտագիտություն հայտնել Լատվիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հետ Հայ Առաքելական Եկեղեցու Ռիգայի համայնքի համագործակցության համար: Մեկ անգամ չէ, որ մենք միասին մասնակից ենք եղել էկումենիկ արարողությունների և աղոթքների: Հանդիպումների ընթացքում Մենք զգացել ենք հայ եղբայրների և քույրերի ցանկությունը՝ ապրել և աշխատել հանուն Լատվիայի պետության բարգավաճման: Վստահ ենք, որ Ռիգայում Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունը ոչ միայն հարստացնում է Լատվիան՝ մեր քաղաքում իր հինավուրց ավանդների ներկայությամբ, այլև իրական ներդրում է հասարակության համախմբման գործում և իր որոշակի նպաստն է բերում Լատվիայի զարգացմանը և ապագային:

Թույլ տվեք Լատվիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հավատացյալների և իմ անունից սրտագին շնորհավորել Ձեզ այդչափ նշանակալի տոնի առիթով: Մենք երախտապարտ ենք Աստծուն անցած տարիների և Ավետարանի լույսի համար, որ փայլատակում է մինչև մեր օրերը: Հավասարապես երախտապարտ ենք նաև նրանց, ովքեր կրել են այդ լույսը: Թող Ամենակարող Աստված օրհնի ձեզ բոլորիդ, թող համակի ձեզ իր ամբողջական ողորմածությամբ, թող ուղեկից լինի ձեզ՝ պարգևելով ուժ՝ կրելու Իր Թագավորության պտուղները :

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՅԱՆԻՍ ՎԱՆԱԳՍ
ՌԻԳԱՅԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձերդ Սրբություն,

Օգտվելով առիթից, որ «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամության սենատորական խմբի նախագահ, սենատոր Ժակ Ուդինը այցելում է Երևան՝ նրան խնդրել եմ Ձեզ փոխանցելու իմ գնահատանքի ուղերձը:

Քրիստոնյա Հայաստանի 1700-ամյա հոբելյանը մի բացառիկ հուզական իրադարձություն է, որին, ինչպես ես տեղյակ եմ, ֆրանսահայ համայնքը մասնակցում է մեծ ոգևորությամբ:

Ուրախ եմ, որ սույն թվականի նոյեմբերի 10-ին Ձեր այցը Փարիզ մեզ հնարավորություն կընձեռի բազմաթիվ կապեր ստեղծելու, որոնք ավելի առանձնահատուկ կերպով կմիավորեն հայ և ֆրանսիացի ժողովուրդներին:

Խորին հարգանքներով, ջերմ զգացմունքներով և անկեղծ բարեկամությամբ՝

ԺԱԿ ՇԻՐԱԿ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Փարիզ, 17 սեպտեմբերի 2001 թ.

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձերդ Սրբություն

Շնորհավորում եմ Ձեզ և հանձին Ձեզ՝ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր հավատացյալներին, նշանակալից իրադարձության՝ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի առիթով:

Հայ ժողովրդի կյանքում դարձակետային այս դարակազմիկ իրադարձությունը մինչև այսօր էլ որոշում է նրա հոգևոր-բարոյական ընթացքը և կողմնորոշումները:

Ուկրաինայում բարձր են գնահատում մեզ իրար միացնող դարավոր կապերը: Զարգացման ներկա փուլում մեր երկու պետությունները ընդհանուր շատ բան ունեն և առաջին հերթին՝ հոգևոր վերածնության բնագավառում, վերադառնալու համամարդկային ավանդներին:

Քրիստոսի հավատն ու ճշմարտությունը ուղեցույց աստղեր թող լինեն մեր երկու ժողովուրդների համար, և թող անխախտ մնա նրանց բարեկամությունը, և հարուստ պտուղներ տա նորայրական համագործակցությունը:

Ձերդ Սրբությանը մաղթում եմ քաջառողջություն, բարօրություն և հաջողություններ պատասխանատու և բազմաշխատ հովվապետական Ձեր գործունեությունում:

Հարգանքներով՝

ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱ
ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՆԱԽԱԳԱՀ

Կիև, 23 սեպտեմբերի 2001 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(Ս. Էջմիածին, 22 սեպտեմբերի 2001 թ.)

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ.

Նվիրական ու խորհրդավոր այս պահին հիշենք Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարված ահաբեկչության հազարավոր անմեղ զոհերին: Հարգանքի մեր տուրքը թող հնչի որպես բռնությունների դատապարտություն և ամենուր չարիքի մերժման ու բարու հաստատման կոչ:

«Այս նյութեղեն զանգվածը պանծալի
պատկերն է երկնքի Արարչիդ»:
(Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության. Բան ՂԳ. Դ)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Վերջին համայն հայոց հոգին է Իջման Սուրբ Սեղանի առջև:

Ամենայն Հայոց Մայր Աթոռը Մյուռոնօրհնեքի տոնական հրավերով սիրառատ իր գիրկն է բացել իր զավակների առջև: Համազգային մեր մկրտության և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին ձոնված Մյուռոնօրհնության սրբազան արարողությունն ենք կատարում մեր ազատ Հայրենիքի նվիրական հողում, Սուրբ Էջմիածնի հովանու ներքո, նորակառույց այս հանդիսադիր Բաց Խորանին: Աշխարհի տարբեր ծայրերից, Հայաստանի բոլոր կողմերից ուխ-տավորաբար համախմբվել ենք նոր Մյուռոնով առ Աստված մեր Ուխտը ու մեր Հայ Առաքելական միաբանությունը հաստատելու:

Դարակազմիկ հոբելյանի խորհրդի ներքո կատարվող Մեր անդրանիկ Մյուռոնօրհնության առանձնակի բերկրանքով ողջունում ենք մեր Եկեղեցու նվիրապետության Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պոլսո հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին: Ողջունում ենք ներկայությունը Հայաստանի Հանրապետության նախագահ Տիար Ռոբերտ Քոչարյանի, հայրենի պետական ավագանու և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանների, օտարերկրյա պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

Միրո Մեր ողջույնն ենք բերում այստեղ ներկա քույր Եկեղեցիների շնորհազարդ հոգևոր պետերին ու ներկայացուցիչներին: Մեր շնորհակալությունը Ձեզ, սիրելի

հոգևոր եղբայրներ մեր, որ ազնվորեն ընդունեցիք Մեր հրավերը ու այսօր կիսում եք հավատավոր մեր ժողովրդի տոնի ուրախությունը: Մեր ողջույնը նաև բոլոր նրանց՝ Եկեղեցիների հովվապետերին, հոգևոր և պետական ներկայացուցիչներին, մեր Եկեղեցու բարնպաշտ զավակներին, ովքեր չկարողացան մասնակցել տոնախմբությանը Միացյալ Նահանգներում տեղի ունեցած ողբերգական դեպքերի պատճառով:

Հայրական օրհնությամբ ողջունում ենք Տիրախնամ մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին, թեմական և համայնքային վարչական մարմինների պատվարժան անդամներին, ուխտապատ եկեղեցականաց ողջ դասին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մնծազնիվ բարերար զավակներին և համայն մեր հավատացյալ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս: Մեր գնահատանքը և օրհնությունը՝ գեղեցկազարդ այս կառույցների՝ Սուրբ Տրդատ Բաց Խորանի հովանավոր փիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մուտքի կամարի բարերարներ տեր և տիկին Սենիկ և Անահիտ Գևորգյաններին, ինչպես նաև՝ շինարարությունն իրականացնող ճարտարապետներ Ջիմ Թորոսյանին և Ռոմեն Ջուլհակյանին, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ռուբեն Ազատյանին, շինարարներ Գրիշա Գրիգորյանին և Գագիկ Գալստյանին, բարեկարգման աշխատանքները գլխավորած Ալեքսանդր Անանյանին:

Այսօր, սիրելի հավատացյալ ժողովուրդ, ինչպես շարականագիրը պիտի ասեր՝ երկիրը վերստին երկնքի է փոխվել՝ համակված Մյուռոնօրհնեքի ջերմության շառագույնով, մեր հոգիների աղոթաբույրով և մեր շուրթերից ասո Աստված վերառաքվող օրհներգությամբ: Արդարև, միահյուսել ենք մեր աղոթքները, ինչպես մեր նախնիները 1700 տարիներ առաջ, ովքեր ազգովին կանգնեցին Աստծո առաջ, կենդանարար սուրբ խաչով տյառնազրնցին մեր երկիրը որպես առաջին քրիստոնյա պետություն և Արածանիի ջրերում մկրտվելով՝ դարձան ուխտ մանկանց Եկեղեցվո և Աստծո: Եվ «երբ մտան գետը, սաստիկ լույս երևաց լուսավոր այան նման...,- գրում է Ագաթանգեղոս պատմիչը,- ու նրա վրա Տերունական խաչի նշանը... իսկ օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան կապարելով, մարդկանց շուրջն էր պտտվում: Եվ ամենքը զարմացած օրհնություն էին տալիս ի փառս Աստծո»:

Հավատակերտ այն օրերին նորաստեղծ հայությունը, իբրև ազգ սուրբ և Աստծո սեփական ժողովուրդ, նոր ազատագրված և Մեծն Տրդատի թագի ներքո միավորված Հայաստանի տարբեր ծայրերից հավաքվեց երկրի միջնաշխարհում՝ Արարատահայաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Լուսավորիչ Հայրապետի՝ Հայոց Ս. Գրիգորի հետ կատարելու Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաջին Մյուռոնօրհնեքը: Նոր Մյուռոնի մեջ հեղվեց Սուրբ Թադեոս առաքյալի ձեռքով Հայաստան բերված երանելի յուղը, որ օրհնել էր մեր Տեր Հիսուս Քրիստոս: Տերունական յուղն այդ, Լուսավորչի Աջով շարունակաբար խառնվելով նորաբեր Մյուռոնին, հասել է մեզ՝ որպես սրբություն սրբությանց, քանզի՝ այս նյութեղեն զանգվածը,- ինչպես Սուրբ Նարեկացին է փառաբանում,- պանծալի պատկերն է երկնքի Արարչի:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մյուռոնը ճշմարիտ կենքն է մեր հավատի և Սուրբ Հոգու էջքը մեր անձերին. որով Աստվածային շնորհն է բնակվում մեր մեջ՝ սրբագործելով ու շարունակ նորոգելով մեզ: Մյուռոնով սրբված՝ մենք դառնում ենք ժառանգակիցը Քրիստոսի և հանձնառու՝ Բարին ընտրելու, բարիք գործելու, քանզի մյուռոնադրոշմը ցրում է խավարը մեղքի և լուսավորում մեր մեջ Աստվածակերտ անեղծ պատկերը մարդու: Արարչագործ լուսեղեն այս խորհրդով սուրբ Մյուռոնը ձուլվել է հայ կյանքի բանվածքին, ինչպես գույնը՝ մաշկին: Սրբարար կանուչ Մյուռոնով շաղախված է մեր հող հայրենին՝ նահատակների սուրբ արյան հետ միախառնված: Մյուռոնով հայ ենք, Մյուռոնով՝ քրիստոնյա: Մյուռոնով «հայր մեր ճանաչեմք զՍուրբ Աւետարանն եւ մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»:

Ցոթնարդյա շնորհաց սրբալույս Մյուռոնը, ինչպես 301 թվականին Արածանիի ջրերում շրջան էր գործում նորադարձ մեր ժողովրդի շուրջ ու կայծկլտում խաչանշան երկնառաք լույսերի հետ, 1700 տարի պտույտներ է գործել հայոց կյանքից ներս և միավորել մեզ, զորացրել իբրև հայ քրիստոնյա, սրբությամբ շաղախել ու հավերժին է կամրջել մեր պատմությունն ու ներկան, հայոց բոլոր գալիք դարերը:

Այսօր Մյուռոնօրհնության սրբազան խորհրդով վերստին ողջագուրվեցին անժամանակն ու անցավորը, միավորվեցին Աստվածայինն ու նյութեղենը, և ծնվեց 1700-ամյակի սրբալույս մյուռոնը հայոց՝ կրելով իր մեջ անկախության ու վերածնունդի ոգին և հավատը հաղթանակների, որով պիտի մկրտվեն մեր զավակները, օծվեն մեր եկեղեցիները, սրբվի և օրհնվի հանուր հայ կյանքն ի սկզբանե, և Աստված պիտի բնակվի ու գործի հայոց մեջ: Արդարև, Մյուռոնը մեզ է սպասում՝ Երկնային Սիրո անուշաբույրով: Ընդունենք 1700-ամյակի Մյուռոնը այն խնդությամբ, միաբանության այն սիրով, որով մեր նախնիք դիմավորում էին սուրբ Մյուռոնը հայոց թեմեր փանող Մայր Աթոռի նվիրակներին:

Տեսնենք նախախնամական տնօրինությունը մեր կյանքում, որով կանչված ենք լինելու ազգ սուրբ և Աստծո սեփական ժողովուրդ, հրավիրված ենք Մյուռոն կրելու, Մյուռոնով շնորհընկալը լինելու Քրիստոսապարգև ազատությանը և որդեգրությանը հավիտենական կյանքի: Հիրավի, Աստծո կամքն է առաքելահաստատ Հայ Եկեղեցու Մյուռոնով մեզ հայ պահել, մահաբեր փորձությունների, ավերների, կոտորածների քառուղիներում հարության առաջնորդել, հոդմերից աշխարհաշխարհ սփռված՝ Հայրենիքով և Սուրբ Էջմիածնով մեկ ու միասնական պահպանել: Աստծո խնամատար ներկայության այս գիտակցությամբ ու հավատով ապրենք ու ապրեցնենք մեր սրտերում հայոց Մյուռոնի բազմափայլ խորհուրդը և հեռու լինենք օտարամուտ քարոզություններից, օտարացնող ու մոլորեցնող ուղղություններից: Ճանաչենք մեզ որպես Հայ Եկեղեցի, որպեսզի կարողանանք ճիշտ ըմբռնել մեր առաքելությունը՝ իմաստը մեր կյանքի, որպեսզի անսայթաք լինի մեր ուղին և հավետ առաջնորդի դեպի Սուրբ Տաճարն Աստծո:

Հայոց համազգային մկրտության լուսեղեն խորհրդի ներքո փառք տանք Բարձրյալին, որ անաստվածության ու բռնության դասանամյակներից հետո այսօր հազարավոր հայորդիներ՝ մեծ ու մանուկ, մեր Եկեղեցու սուրբ Մյուռոնի կենարար դրոշմն

են սրանում, և օրավուր զորանում է Հայ Եկեղեցին Հայաստանի անկախության դրոշի ներքո՝ հոգևոր անանց արժեքներով զորացնելով պետականությունը հայոց և հանուր հայ կյանքը:

Աղոթենք առ Աստված, որ հայրենական մեր կյանքի վերաշինության լայն ճանապարհին նորոգվի մեր մեջ սուրբ հավատը Տերունական՝ Սիրո հաղթության հավատը, որով կյանքն է հաղթանակել մյուռոնադրոշմ հայոց հողում ու լցվել արարման բերկրանքով:

Հայցով առ Աստված խնդրենք Երկնավորից, որ եղբայրական սիրո մեջ զորացնի մեր քույր Եկեղեցիները և նրանց հոգևոր առաջնորդներին, որպեսզի օրհնությամբ պսակվի Քրիստոսի Տիեզերական Սուրբ Եկեղեցու առաքելությունը՝ հանուն աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու համագործակցության:

Շնորհաբաշխ այս օրը միակամ ու միաբերան աղոթենք և հայցենք. «Տեր Աստված Ամենակալ, թող իջնեն սրա մեջ Սուրբ Հոգուդ երկրպագելի շնորհները, որ լինի սա անապական զգեստ, կատարելության կնիք...՝ ընդունելու սուրբ անվանակոչություն Միածին Քո Որդու անվամբ..., լինելու Քեզ ժողովուրդ հարազատ, ազգ սուրբ՝ կնքված այս անարատ Մյուռոնով և մեր սրտերում բնակվող Քրիստոսով»՝ այսօր և միշտ և հավիտյան, ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(23 սեպտեմբերի 2001 թ.)

«Տէր, բարւոք է մեզ աստ լինել»:
(Մատթ. ԺԷ 4)

Սիրելի եպիսկոպոսներ և քոյրեր, սիրելի ժողովուրդ հայոց.

Պատմական օրեր ենք ապրում, մեր անցյալով շաղախված ու գալիքի տեսիլքով լեցուն հոգեոր օրեր: Այսօր մեկ հոգի ու մեկ սիրտ դարձած՝ հայ քրիստոնյայի ինքնության խորհրդով միանյուսել ենք մեր աղոթքը Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման առիթով: Կանգնած հայոց ազատ ու անկախ նորօրյա կյանքի թաքուր լեռան բարձունքին, պայծառակերպության վստահությունը մեր հոգիներում առաքյալի խոսքով գոհաբանում ենք Տիրոջը և ասում. «Տէր, բարւոք է մեզ աստ լինել»:

Աստված կամեցավ, որ հայ ժողովուրդը սրբության տաճար կառուցի, երբ 301 թ. եպիսկոպի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աստվածատես հայացքի առջև լույսերի մեջ իջավ երկնքից Վաղարշապատ մայրաքաղաքում՝ ոսկե մուրճի հարվածով ցույց տալով տեղը իր աղոթքի տան: Մասյաց լանջերից բերված քարերով Միածնաէջ սուրբ վայրում Լուսավորիչ Հայրապետն ու Տրդատ թագավորը կառուցեցին հայոց Ոնկի Խորանը՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, որտեղից նոր ճառագումով տարածվեց Սուրբ Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ Հայաստանում անթեղված Լույսն Ավետարանի: Հայոց երկնքի տակ լույսի աշտանակ դարձան խաչակիր գմբեթները եկեղեցիների ու համատարած լուսավորեցին Հայաստան աշխարհը:

Աստվածակառույց Միածնաէջ մեծ գմբեթի ներքո եկեղեցի դարձավ մեր Հայրենիքը: Ինքնացանք մեր սուրբ հավատով, զորացանք Քրիստոսով և Տերունական խաչը կանգուն պահեցինք մեր հողում: Միասնացան, նույնացան և մեկ դարձան Ազգ, Հայրենիք, Պետություն և Հայոց Եկեղեցի:

Աստծո կամքով այսօր՝ 1700 տարիներ անց, քաղաքամայր Երևանում հառել է մի նոր տաճար, որը սրբագործեցինք Լուսավորիչ Հայրապետի սուրբ անունով: Օծեցինք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ամենայն Հայոց Հայրապետության նոր հազարամյակի Մյուռոնով՝ հայցելով, որ Տիրոջ հրաշակերտ զորությամբ լինի այն պայծառակերպության թաքուր լեռն առաջնորդող Ոնկի նոր Խորան, Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի հաղթակամար, ուր փոխադրել ենք Միածնի Իջման Սուրբ

Սեղանի Կաթողիկեն՝ խաչկալը, որի հովանու ներքո ամփոփված են նշխարները Հայոց երկրորդ Լուսավորիչ և առաջին Կաթողիկոս Սուրբ Գրիգորի: Օծեցինք եկեղեցին՝ հիշելով այն օրը, երբ երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետը կատարեց եկեղեցու հողօրհնյաց կարգը և օծման այսօրը հոգու հայացքի առջև ասաց. «Երանի այն հայերին, որ այդ պահին, այդ օրը՝ 2001 թ., պիտի լինեն այստեղ»: Այս է օրը երանյալ, և այս է պահը պանծալի, ու մենք ենք շնորհընկալները, որ արժանացանք տոնախմբելու հայոց համազգային մկրտության 1700-ամյակը և Հայաստանի նոր անկախության 10-ամյակը: Հոբելյանական խորհրդով ներշնչյալ, շքեղակառույց այս տաճարի կամարների ներքո խոնարհումով ու աղոթքով հիշենք Վազգեն Ա և Գարեգին Ա Մեր նախորդ լուսահոգի Հայրապետներին, ովքեր երախտարժան վաստակ ունեն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման գործում, որն այսօր իր դռներն է բացել բարեպաշտ Մեր զավակների առջև:

Հպարտ ենք մեր ժողովրդով, որ դժվարությունների մեջ հանձնառու եղավ կառուցելու այս փառահեղ տաճարը՝ հայոց ամենամեծ եկեղեցին, քանզի հոգու իր ամենաազնիվ մղումը, մտքի լավագույն հորինվածքը և ձեռքի ամենաճարտար կերտվածքը միշտ մատուցել է Աստծուն, Ում օրհնությամբ Հայ Եկեղեցին եղել է և է «մեզ մայր անարատ, եւ ի սմանէ ծնանիմք որդիք լուսոյ եւ ճշմարտութեան»:

Հարության շունչն է կրկին Հայաստանում: Հառնում են խոնարհված եկեղեցիները, կառուցվում նորերը, և Աստված է իջնում ազատ ու խաղաղ ապրելու կամքով լեցուն հայոց հոգիներին: Սիրելիներ, այսօր քրիստոնյա առաջին ժողովրդի ու պետության ծննդյան 1700-րդ տարեդարձի խորհրդով վերստին գոհություն ենք առ Աստված բարձրացնում և ասում. «Տէր, բարւոք է մեզ աստ լինել»՝ նորակառույց Քո տուրք այս հարկի ներքո, արժանանալ Քո տեսությանը, լցվել եղբայրության սիրով, ընդունել խաղաղության բարի ավետիսը և սերունդներին ավանդել Հաշտության խոսքը Քրիստոսիդ Ավետարանի:

Բացվող հազարամյակի արշալույսին Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակը օրհնող երանյալ Հայրապետի նրջանիկ հոգով, եղբայրական սիրով ողջունում ենք այստեղ ներկայությունը Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, Կ. Պոլսո հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի: Հայրապետական Մեր ողջույնը՝ այստեղ ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ, փիար Ռոբերտ Քոչարյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ, փիար Արկադի Ղուկասյանին, Հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դեսպաններին, բարեկամ պետություններն ու ժողովուրդները ներկայացնող մեր եղբայրներին ու քույրերին: Սիրով ողջունում ենք այսօր մեծ հոբելյանի մեր խնդությունը առ Աստված ադոթքով կիսող մեր քույր Եկեղեցիների շնորհազարդ Հայրապետներին և բարձրաշնորհ ու արժանապատիվ ներկայացուցիչներին:

Այս բերկրաշատ առիթով Մեր գնահատանքն ենք բերում հայրենի պետությանը, որը, կարևորելով Հայ Եկեղեցու առաքելությունը ազգային կյանքում, պատրաստա-

կամ մասնակցություն բերեց Երևանի կենտրոնում այս փառատես եկեղեցու կառուցման: Մեծապես ուրախ ենք եկեղեցու նորաձև խորանից այսօր հնչեցնելու ազնիվ անունները ազգային բարերարների, ովքեր հովանավորել և հովանավորում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցաշեն ու ազգաշահ բազմաթիվ ծրագրեր: Մեր խորին գնահատանքն ու օրհնությունն ենք բերում տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին և Ռիչարդ Մանուկյանին, ովքեր հարգեցին երջանկահիշատակ իրենց ծնողաց՝ Ալեք և Մարի Մանուկյանների խուսափումը և հանձն առան նաև եկեղեցու կառուցման հիմնական բարերարությունը: Հայրապետական Մեր բարձր գնահատանքը տվեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյաններին, Նազար և Արփենիս Նազարյաններին, Գառնիկ և Անի Ցակուբյաններին, Սարգիս և Բոբի Հակոբյաններին, Նորայր և Լինդա Գևորգյաններին, տիար Էդուարդ Էոնեկյանին, տիկին Սիրանի և նրա երջանկահիշատակ ամուսին Սարգսի զավակներ տվեր և տիկին Մարկ և Անի Գարրիելյաններին: Ամենայն Հայոց Կաթողիկոսության եկեղեցաշինական ծրագրերի իրենց հիշխանական նպաստն ու աջակցությունն են բերել նաև բազում այլ հայորդիներ, որոնց անունները արժանիորեն պիտի հիշվեն այսօր պատշաճ առիթով:

Միրելիներ, եկեղեցու բարերարների արդար վաստակը, որպես քարևոեն աղոթք, մարմին է առել մայրաքաղաք Երևանում՝ նվիրյալ ջանքերով հայրենաբնակ շինարարների, ովքեր օրինիբուն քրտնաջան աշխատեցին, որպեսզի 1700-ամյակի փոնակատարությունները այսօր պսակվեն Մայր եկեղեցու օծումով: Մեր գնահատանքն ու օրհնությունը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գլխավոր ճարտարապետ, տիար Ստեփան Քյուրքջյանին, կոնստրուկտոր Ցուրի Դալլաքյանին, շինարար Վազգեն Պողոսյանին, Մայր Աթոռի ներկայացուցիչ Էդուարդ Բալասանյանին ու Հրաչ Գաթրջյանին և բոլոր շինարարներին, քարագործ վարպետներին, այսօր անուն առ անուն չհիշված բոլոր նրախպավորներին:

«Երանի եկեղեցի շինողաց» ասենք այսօր մենք և վստահ լինենք, որ նախնյաց հավատին մեր հավատարմությունը և Հայաստան, Արցախ ու Սփյուռք մեր միաբանությունը շենացնելու են մեր երկիրը, զորացնելու են հանուր հայ կյանքը՝ անենարին անգամ հնարավոր դարձնելով:

Այսօր Սուրբ Լուսավորչի, Սուրբ Տրդատ թագավորի և Աշխեն թագուհու բարեխոսությամբ նորաձև այս Լույս խորանից աղոթք բարձրացնենք առ Աստված և հայցենք, որ չիսնարհվեն երբեք մեր հոդում սրբությունները, ու մեր բոլոր ճանապարհներն առաջնորդեն մեզ դեպի Տաճարն Աստծո, որպեսզի ճանաչենք Աստծո Սերը մեր հանդեպ, սովորենք սիրել մերձավորին, որով փրեզերքն ու մարդկային կյանքը լցվում են իմաստով ու երջանկությամբ և առաջնորդվում դեպի Հարություն:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(21 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ, 2001 Թ.)

Մեծարգո Նախագահ,

Շնորհազարդ հոգևոր եղբայրներ,

Հարգարժան ներկաներ,

Սիրելի հոբելյանակիր ժողովուրդ հայոց ի սփյուռս աշխարհի.

Շնորհընկալներ ենք մենք այսօր, քանզի Հայաստանի անկախության առաջին տասնամյակն ենք տոնախմբում Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի լուսեղեն խորհրդի ներքո: Շնորհընկալներ ենք նույնքան, որքան 17 դար առաջ մեր նախնիները, ովքեր Հայաստանը հռչակեցին առաջին քրիստոնյա փերությունը աշխարհում:

Այն օրերին էլ Հայաստանը նոր էր ազատագրվել նվաճողներից: Տրդատ արքան վերականգնել էր հայրենի գահը և միավորել Հայաստանը իր թագի ներքո: Ազատ մեր հողում ազատ ապրելու կամքով յեցուն՝ազգովի արժանացանք շնորհին Աստծո, որ պարգևեց հայ կյանքին դեպի փրկություն առաջնորդող իմաստ ու առաքելություն, որպեսզի ճշմարտությունը խոսի մեր սրտերում և հավատով, սիրով ու հավատարմությամբ ամուր լինի մեր երկրի ազատությունը, ու օրհնյալ լինի մեր հողը հայրենի:

Հիրավի, չուշացան քրիստոնեության օրենության պտուղները: Հայոց Եկեղեցին դարձավ հայ հոգու ծննդավայրը, հայ հոգու ներշնչանքն ու ամրության վահանը: 301 թվականից 100 տարի անց առաքելահաստատ ու առաքելագործ Հայ Եկեղեցու շնորհաբաշխ ծոցից ծնունդ առան Մաշտոցյան գրերը, կյանք առավ Ոսկեդարը հայոց, և Թարգմանչաց արարող ոգին 17 դար առաջնորդեց հայ մշակույթը՝ հարուստ ու անբաժան մասը մարդկային քաղաքակրթության:

301 ոսկեդրոշմ թվականից ուղիղ 150 տարի անց, 451 թվականին, հայ ժողովուրդը, Հայոց Եկեղեցին Ավարայրի դաշտում առաջին մարտը մղեցին վասն հավատո և եռչակեցին՝ «յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք, եւ ոչ մարդիկ, ոչ սուր, եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք»: Վարդանանց իմացյալ մահով մեր ժողովուրդը կերտեց իր անմահության խորհուրդը, քանզի Ավարայրի ազատաբաղձ ոգին, որպես հայոց Աստվածասեր ու ինք-

նաճանաչ հոգու դրսևորում, արյան կարմիրի հետ մեկ ու կես հազարամյակ փոխանցվել է սերնդեսերունդ ու զորացրել մեզ իբրև հայ և իբրև քրիստոնյա:

Սիրելիներ. պատմության ընթացքում հաճախ զրկվել ենք ազգային պետականությունից, հաճախ ուտնատակ ավերվել է մեր երկիրը, բայց աննկուն ու անիմորպակ է մնացել հույսը և հավատը մեր, որով շարունակ արարել ենք, մաքառել, հավատացել Աստծուն և ապրել Աստծո հետ՝ Քրիստոսի Ազատարար Շնորհով շարունակ իմաստավորել մահն իմացյալ և կյանքն իմացյալ: Ապրել ենք որպես Հայոց Եկեղեցի՝ մեկ ու միաբան Տիրոջով, բազմիցս խաչված, բայց միշտ հարուցյալ Տիրոջով: Մեր ժողովրդի հանդեպ գործված Մեծ Եղեռնն անգամ ի զորու չեղավ սասանելու Հարության մեր հավատը, որ ազգովի խոստովանել եթե 1700 տարիներ առաջ: Կենսահաստատ մեր հավատով եղեռնահար հայությունը մոխիրներից և մահվան գուբից ծնունդ տվեց Հայաստանի Առաջին Հանրապետությանը: Ճշմարտապես տեղին է ևս մեկ անգամ հաստատել մեր խոսքը 1700-ամյակի Հայրապետական Կոնդակում. «Չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հավատը, քանի դեռ հայոց պատմության ընթացքով հաղթականորեն անցնում է լուսեղեն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հավատք ու խմորելով հոգի, հավատարմորեն պահելով մեր ժողովրդի ընթացքը դեպի Աստված»:

Այսօր վերստին անկախ է Հայաստանը, ազատագրված՝ Արցախը, և վերստին երկնային հրավերն է ենչում հայոց երկնքում՝ «Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք... սիրով ծառայեցէք միմեանց» (Գաղ. Ե 13): Այո, կանչված ենք ազատության սիրով միմյանց ծառայելու: Արդ, հավատքով ազատ մեր հոգով ծառայենք մեր անկախ պետականությանը, նրա հզորացմանն ու բարօրությանը: Հավատարիմ լիննենք ազատությանը, որը կենսահորդ ակունք է բարիքի:

Տասնամյա կյանք ունի մեր նոր Անկախությունը: Մենք հիշում ենք այն ցնծությունը, որ ապրեցինք, երբ մեր ժողովուրդն ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս միասնական կամքով ընդառաջ գնաց անկախության հրավերին: Մենք հիշում ենք բոլոր նրանց, ովքեր՝ մահկանացու ծնյալ, անմահ հիշատակ թողեցին՝ կերտելով 1991 թ. սեպտեմբերի 21-ը: Հիշարժան այդ օրն էլ պատմություն է դառնալու, բայց ոչ մեզ համար, որ ապրել ենք «Արցախյան» կոչված հերոսականությամբ ու մաքառումով լեցուն տասնամյակի ամեն օրը և այսօր կրում ենք պատասխանատվությունը, որպեսզի 10-ամյա մանուկ պետությունը զորանա հոգածության ու խնամքի մեջ և կորովի հասակ առնի:

Հիրավի, դար արժե անցնող տասնամյակը բերած հաստնությամբ ու փորձառությամբ, որակական փոփոխություններով, հետագա ժամանակների համար ուղենիշ լինելու արժեքով: Այսօր, կանգնած հայոց կրկնակ հոբելյանների տոնական բարձունքին՝ եռաղարձ հայացքով վերսրժնորենք մեր անցած պատմական ուղին և հայրենյաց ժառանգությունը: Փորձությունների ու կորուստների, հերոսացումի ու հաղթանակների անընդմեջ շարքում կարևորենք Եկեղեցի-պետություն անխախտ միության անհրաժեշտությունը, որ ազգաշահ է ու հայրենակերտ: Հոգ տանենք, որ

անխաթար լինի հայոց մեջ 1988-յան միաբանության ու սիրո ոգին, որով ստանձնեցինք ամեն զոհողություն՝ հանուն այսօրվա:

Փառք տանք Բարձրյալին և հոգու մեր աչքերը բացած՝ տեսնենք Աստծո ներկայությունը մեր կողքին և Նախախնամական տնօրինությունը Տիրոջ, որով զուգադիպեցին Հայոց Դարձի 1700-ամյան և Անկախության 10-ամյակը՝ մեզ վերստին ցույց տալով, որ հավատն է լուսավորում մեր Հայրենիքի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության ուղին: Չնկնչենք ու չտկարանանք դժվարությունների առջև, «Զի Աստուած ընդ մեզ է...»:

Աստված մեզ հետ է, քանզի հակառակ հազարամյակներով չափվող մեր պատմության ընթացքում կրած փորձությունների, մահերի ու կորուստների՝ ապրում է հայությունը իբրև ազգ ու պետություն, իբրև Եկեղեցի: Աստված մեզ հետ է, քանզի այստեղ է համահավաք ազգս հայոց՝ Հայաստան, Արցախ և սփյուռք՝ իր Սուրբ Եկեղեցու ամբողջականությամբ:

Աստված մեզ հետ է, քանզի Հայոց Եկեղեցու և պետության համար նշանակալի ու փոնական այս օրվա բերկրանքը մեզ հետ կիսում են բարեկամ ու եղբայր ժողովուրդներն ու պետությունները, քրիստոնեական քույր Եկեղեցիները: Այստեղ ներկա են քրիստոնեական Եկեղեցիների հոգևոր առաջնորդները և աղոթակից են մեզ՝ հանուն խաղաղության ամբողջ աշխարհում և քրիստոնյա առաջին պետության ու մեր ժողովրդի ատաջընթացի:

Արդ, «Երգս առեալ ի ձայն օրհնութեան հայրենի բարբառովն» (Գ Մակ. Զ 23), այսօր հուսառատ հոգով Հայրապետական աղոթքս եմ երկինք բարձրացնում և հայցում, «Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, որ ի վերայ հայրենի մեր երկրի ու ժողովրդի տարածեցեր զբազուկս Քո... արժանի արա զձառայս Քո վերստին նորոգման, պահեսա, պահպանեա աշխարհս համայն եւ զերկիրս Հայաստան, զպետութիւնն հայոց եւ զհաւատաւոր փոքր ածու հօտն Քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քո ի խաղաղութեան, փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 10-ԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

(Ստեփանակերտ, 2 սեպտեմբերի 2001 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրելի ներկաներ.

Տոն է այսօր ազատ Արցախի հայոց փոքրիկ հողակտորի վրա. տոն է համայն հայոց հոգիներում՝ ի Հայաստան և ի Սփյուռս, քանզի տասնամյակ առաջ այս օրը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Արցախի Անկախության 10-րդ տարեդարձի առիթով հոգու անսահման բերկրանքով ողջունում և շնորհավորում ենք մեր ժողովրդի բոլոր զավակներին և մասնավորաբար՝ Արցախի հաղթանակած մեր ժողովրդին՝ Մեր սերը և Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերելով Ձեզ:

Հպարտ ենք համայն մեր ժողովրդով, որ արդարության հաղթանակի հավատը հոգում 1988-ի վճռորոշ օրերին արձագանքեց հերոսական Արցախի ազատության սուրբ կանչին և միասիրտ ու միաբան զինվորագրվեց ազատագրմանը հայոց հինավուրց այն հողակտորի, ուր միշտ արթուն է եղել հայրենյաց սերը և հանուն անկախության պայքարի ոգին: Արդարև, բազում թշնամյաց ուժն է կոտրվել՝ բախվելով Արցախի երկնահայաց լեռներին: Բազում արցախահայոց պանծալի անուններով է հյուսվել մեր Հայրենիքի պաշտպանության փառապսակը: Արցախյան ազատագրական պայքարը փորձաքար եղավ նաև խորհրդային տերության համար՝ բացահայտելով, որ անհույս է բռնապետության և անաստվածության ուղին: Կեղծ արժեքներ փշրեց ու կուռքեր տապալեց Արցախի արդար պայքարը, և հաղթանակեց արցախցու հավատավոր հոգին, որով իր լեռներին եկեղեցի, վանք ու խաչքար է կանգնեցրել, ստեղծել բարիք ու շեն պահել իր տունը և միշտ հավատարիմ մնացել նախնյաց սրբություններին ու ավանդներին: Աստծո օգնությամբ հաղթանակեց մեր ժողովրդի միասնականությունը՝ ինքը զորանալով Արցախով:

Այսօր մենք խոնարհումով ու աղոթքով ենք հիշում հայրենյաց պաշտպան բոլոր քաջորդիներին, ովքեր Վարդանանց օրինակով ապրեցին «հոգին առավել է, քան մարմինը» գիտակցությամբ ու հավատով և իրենց կյանքը նվիրեցին, որպեսզի օր առաջ ծնունդ առնի Արցախի անկախությունը: Սրբոց Վարդանանց շարքում են նրանք, և նրանց հոգիներն այսօր երկնքից նայում են մեզ ու ցնծում մեզ հետ:

Սիրելիներ, Բարձրյալի նախախնամական տնօրինությամբ Արցախի և Հայաստանի Անկախության տասնամյակը տոնախմբում ենք հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդի ներքո: Հոգենորոգ այդ խորհրդով հուսավառ՝ ազատության երկնապարգև իր իրավունքը պաշտպանած հայությունն այսօր լավատեսությամբ ու

վստահությամբ է նայում գալիքին: Աո Աստված ապավինությամբ մենք հավատում ենք ազգային մեր իղձերի իրականացմանը, Հայաստան, Արցախ և Սփյուռք միաբանության արարող ուժին: Եվ թող Տերը աննկուն պահի սիրո և միասնության 88-յան ոգին հայոց մեջ, որով կերտվել է Արցախի անկախությունը, որը երաշխիքն է մեր հաղթանակների:

Մեր աղոթքն է նաև, որ Բարձրյալն Աստված Սուրբ Խաչի օրհնության ներքո անսասիկ ու խաղաղ պահի հայոց Արցախ աշխարհը, կենդանարար հավատով զորացնի և դեպի ստեղծարար կյանքի նվաճումներ առաջնորդի կորովի ու հերոսական արցախահայոց:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հոգին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ

ԱՄՆ, Վաշինգտոն

Խորապես վրդովված ենք Ամերիկայում անեսխադեպ հանդգնությամբ կատարված ահաբեկչության դեպքերից: Ձեր և Ամերիկայի բարեսեր ժողովրդի հետ մեծապես ցավում ենք ողբերգության հազարավոր զոհերի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և համայն հավատացյալ հայության անունից Մեր վշտակցությունն ենք հայտնում Ձեզ, Ամերիկայի ողջ ժողովրդին և մասնավորաբար՝ անմեղ զոհերի ընտանիքներին ու հարազատներին: Հայցում ենք Բարձրյալից, որ Իր օրհնության ներքո անփորձանք ու ապահով պահպանի Ամերիկայի ասփվածասեր ժողովրդին, զորակից լինի հաղթահարելու վիշտն ու դժվարությունները և պահպանի այն արժեքները, որոնցով հպարտ է Ամերիկան:

Թող Ողորմածն Աստված խաղաղության ու լույսերի մեջ ընդունի զոհվածների հոգիները և Սուրբ Հոգու զորությամբ մխիթարություն պարգևի նրանց սգացյալ հարազատներին:

Մեծարգո Նախագահ. առաջիկա կիրակի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, եփսրբազան Պատարագի, կկատարվի հոգեհանգստյան արարողություն՝ ահաբեկչության զոհերի հոգվոց հանգստության համար:

Մշտառաք աղոթք և օրհնություն զոհվածների շիրիմներին և հոգիներին:

Վշտակցությամբ աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

***

Գարեգին Բ Կաթողիկոսը ցավակցական հեռագրեր է հղել նաև Նյու Յորքի և Վաշինգտոնի քաղաքապետերին:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԵՎ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

(Ս. Էջմիածին, 27 սեպտեմբերի 2001 թ.)

Քրիստոնեության Հայաստանում կրոն հռչակելու 1700-ամյակի տոնախմբությունը ի մի է բերել Հռոմի Եպիսկոպոս և Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետ Հովհաննես-Պողոս Բ Պապին և Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Գոհություն ենք մատուցում առ Աստված, որ պարգևեց մեզ այս ուրախ առիթը վերստին միասնաբար աղոթելու՝ ի փառաբանություն Իր Ամենասուրբ Անվան: Օրինյալ է Սուրբ Երրորդությունը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, այժմ և հավիտյանս:

Հրաշափառ այս տոնակատարությունը նշելիս խոնարհումով, երախտագիտությամբ և սիրով ենք հիշում մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ինչպես նաև իր գործակիցներին ու հաջորդներին, ովքեր լուսավորեցին ոչ միայն հայ ժողովրդին, այլև Կովկասի հարևան երկրների ժողովուրդներին: Շնորհիվ իրենց վկայության, նվիրումի և օրինակի հայ ժողովուրդը 301 թ. ընդունեց աստվածային լույսը և ի սրտե դարձավ առ Քրիստոս՝ Ճշմարտությանը, Կյանքին և Փրկության Ճանապարհին:

Նրանք երկրպագեցին Աստծուն՝ իրենց Հորը, խոստովանեցին Քրիստոսին՝ իրենց Տիրոջը, և վկայակոչեցին Սուրբ Հոգուն՝ իրենց սրբարարին: Նրանք սիրեցին առաքելական տիեզերական Եկեղեցին՝ իրենց Մորը: Քրիստոսի գերագույն պատվիրանը՝ սիրել Աստծուն ամեն ինչից վեր և մեր դրացուն՝ ինչպես ինքներս մեզ, դարձավ կյանքի ճանապարհ բոլոր հայերի համար: Օժտված մեծ հավատքով՝ նրանք ընտրեցին կրել ճշմարտության վկայությունը, և երբ անհրաժեշտ էր, ընդունեցին մահը, որպեսզի հավիտենական կյանք ժառանգեն: Այսպիսով, ի սեր Քրիստոսի մարտիրոսությունը դարձավ բազում հայ սերունդների վիթխարի ժառանգությունը: Այդ մեծարժեք գանձի սերնդեսերունդ փոխանցումը նշան էր Ավետարանի նկատմամբ ունեցած երկյուղածության, որպեսզի Սուրբ Հոգու շնորհով երիտասարդները դառնան վճռակամ՝ իրենց նախնիների նման կրելու վկայությունը ճշմարտության նկատմամբ: Մեկ և կես միլիոն հայ քրիստոնյաների կոտորածը, որ ընդհանրապես համարվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, և դրան հաջորդող զանգվածային ոչնչացումը ամբողջատիրական նախկին ռեժիմի ներքո ողբերգություններ են, որ տակա-

վին ապրում են ներկա սերնդի հիշողության մեջ: Այս անմեղները. որ զազանաբար մորթվեցին. չեն սրբացվել. սակայն նրանցից շատերը վստահաբար եղել են Քրիստոսի անվան խոստովանողներ և նահատակներ: Աղոթում ենք նրանց հոգիների հանգստության համար և հորդորում. որ հավատացյալները երբեք չմոռանան նրանց զոհողության նշանակությունը: Գոհություն ենք հայտնում Աստծուն այն իրողության համար. որ քրիստոնեությունը Հայաստանում վերապրեց անցյալ 17 դարերի ողբերգությունները. և որ Հայ Եկեղեցին այժմ ազատ է իրականացնելու իր առաքելությունը՝ Բարի Լուրը տարածել Հայաստանի Հանրապետությունում և հեռու-մոտիկ այն վայրերում. ուր հայկական համայնքներ կան:

Հայաստանը վերստին անկախ երկիր է. ինչպես Տրդատ արքայի և Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրերին: Հավատի է. որ անցած 10 տարիներին Հայաստանի հանրապետության քաղաքացիները ազատորեն կարողացան պաշտել իրենց կրոնը: Հայաստանում և Սփյուռքում հայկական նոր հաստատություններ հիմնվեցին. կառուցվեցին եկեղեցիներ. բացվեցին դպրոցներ ու դպրոցներ: Այս ամենի մեջ տեսնում ենք Աստծո սիրառատ ձեռքը: Քանզի Նա ցեսանելի դարձրեց Իր հրաշքները փոքր ազգի շարունակվող պատմության մեջ. որն իր քրիստոնեական հավատքի շնորհիվ պահպանեց իր յուրահատուկ ինքնությունը: Շնորհիվ իր հավատքի և Եկեղեցու. հայ ժողովուրդը զարգացրեց քրիստոնեական եզակի մշակույթ. որը. անշուշտ. արժեքավոր ներդրում է ողջ քրիստոնեության գանձարանում:

Քրիստոնյա Հայաստանի օրինակը վկայում է. որ ի Քրիստոս հավատքը հույս է բերում մարդկությանը բոլոր իրավիճակներում՝ անկախ դժվարության չափից: Աղոթում ենք. որ քրիստոնեական հավատքի փրկարար լույսը ծագի փկարի և ուժեղի. աշխարհի զարգացած և զարգացող ազգերի վրա: Ի մասնավորի այսօր միջազգային հարաբերությունների բարդություններն ու մարտահրավերները պահանջում են ընտրություն՝ բարու և չարի. խավարի և լույսի. մարդկայինի և անմարդկայինի. ճշմարտության և կեղծիքի միջև: Իրավական. քաղաքական. գիտական և ընտանեկան կյանքում արդիական են և քննարկվում են մարդկության նպատակներին և նրա կոչմանը վերաբերող հարցերը. որոնցով զբաղվողները կոչված են լինել այսօրվա քրիստոնյաները. ոչ պակաս. քան այլ ժամանակների մարտիրոսները. որ վկայեցին Ճշմարտությունը նույնիսկ ի գին ամեն ինչի:

Այս վկայությունը կլինի ավելի հստակ. եթե Քրիստոսի բոլոր աշակերտները միասնաբար խոստովանեն միևնույն հավատքը և բժշկեն բաժանման վերքերը իրենց մեջ: Թող Սուրբ Հոգին առաջնորդի քրիստոնյաներին և. անշուշտ. բարեկամ բոլոր ժողովուրդներին հաշտության և եղբայրության ուղիներով: Այստեղ՝ Սուրբ Էջմիածնում. մենք վերանորոգում ենք հանդիսավոր մեր հանձնառությունը աղոթքով և աշխատանքով արագացնելու միության օրը Քրիստոսի հավատավոր հոտի անդամների միջև՝ ճշմարիտ հարգանքով հանդեպ մեր սրբազան ավանդույթները:

Աստծու օգնությամբ մենք պիտի շընդդիմանանք սիրուն. «Ուրեմն մենք ևս, որ մեր շուրջ վկաների այսչափ բազմություն ունենք, թոթափենք ամեն հպարտություն և ծանր մեղք, համբերատարությամբ ընթանանք դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առջև» (Երր. ԺԲ 1):

Հորդորում ենք մեր հավատացյալներին անդադար աղոթել, որ Սուրբ Հոգին լցնի մեզ բոլորիս, ինչպես մարտիրոսներին բոլոր ժամանակներում և ամենուր, իմաստությամբ և խանդավառությամբ հետևելու Քրիստոսին՝ Ճանապարհին, Ճշմարտությանը և Կյանքին:

1700-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հոբելյանական գլխավոր հանդիսություններին մասնակցելու նպատակով աշխարհի տարբեր երկրներից Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել քույր Եկեղեցիների պետեր ու ներկայացուցիչներ. Հայաստանյայց Եկեղեցու թեմական առաջնորդներ, հոգևոր ներկայացուցիչներ, թեմական վարչությունների անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, ազգային-հասարակական գործիչներ և այլ հյուրեր: Նրանք եկել էին մեզ հետ հաղորդակից դառնալու սրբազան արարողություններին և միասնաբար աղոթելու հանուն մեր Եկեղեցու և նորանկախ Մայր Հայրենիքի շինության ու պայծառացման:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման գլխավոր հանդիսություններին՝ ի մասնավորի Սրբալույս Մյուռոնի օրհնության և Երևանի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման արարողություններին մասնակցելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Մոսկվայի և համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսի Բ-ն, Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Նորին Սրբություն Բասիլեոս Մար Թոմա Մատթեոս Բ-ն, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պապ և Պատրիարք Պետրոս Է-ն, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Բուխարեստի Արքեպիսկոպոս, Ունգրո-Վալախիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն Թեոկտիստ Ա-ն, Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերին, պատվիրակություններ Ղպտի, Ասորի, Վրաց, Սերբիայի և Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցիներից, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը, ներկայացուցիչներ ԱՄՆ-ի Եպիսկոպոսական, Դանիայի Լյութերական և Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիներից:

Հանդիսություններին մասնակցում էին Հայ Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներ, Մխիթարյան միաբանության հայրեր: Հյուրերի թվում էր նաև Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար և Եվրոպական Եկեղեցիների խորհրդի ներկայացուցիչ Կոնրադ Ռայզերը:

Հայաստան էին ժամանել Հայոց Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ իրենց շքախմբերով, ինչպես նաև Հայոց Եկեղեցու թեմերի թեմական առաջնորդներ, Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր:

Սեպտեմբերի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ օծվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց Բաց Խորանը,

«ԱՌԱՔԵԼՈՑ ԱՂԱՒՆԻՈՑ»

ԻՍՄՎՍՅԵՆ ԵՎՎՍՇՅՍՎՆՅՍՎ ՄՎՍԵՆՅՎԻ ՅՍՎ

որը ստացավ «Ս. Տրդատ» անվանումը: Հավարտ օծման արարողության Տ. Ոսկան արքեպս. Գալֆաբյանը մատուցեց անդրանիկ Ս. Պատարագը նորաօծ խորանում:

Ս. Տրդատի կամարաձև խորանի առջև տարածվում է մի ընդարձակ բաց տարածություն, որտեղ բազում հավատացյալներ հնարավորություն կունենան մասնակցելու սրբազան արարողություններին: Խորանն ունի շուրջ 14.5 մ լայնություն և 17.5 մ բարձրություն:

Ս. Տրդատի խորանին կից կառուցվել է նաև 22 մ բարձրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր գլխավոր կամարաձև մուտքը՝ հենված չորս սյուների վրա, որը կրում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունը: Դեմ դիմաց գտնվող երկու սյուները միմյանց են միանում հայոց առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի և հայոց առաջին քրիստոնյա արքա Տրդատ Գ-ի քարաքանդակներով, որոնք իրենց աջ ձեռքին կրում են հաղթական Սուր-Խաչ: Մյուս երկու սյուների վրա պատկերված են Հայաստանում առաջին քարոզիչների՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարաքանդակները:

Այս երկու կոթողները վեր են խոյացել ճարտարապետներ Ջիմ Թորոսյանի ու Ռոմեն Ջուլհակյանի նախագծով և բարերարությամբ տիկին Լուիզ-Սիմոն Մանուկյանի ու տեր և տիկին Սենիկ և Անահիտ Գեորգյանների:

Սեպտեմբերի 21-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանությունը և Ս. Էջմիածին ժամանած քույր Եկեղեցիների հոգևոր պետերն ու պատվիրակությունները ուխտագնացության մեկնեցին Խոր Վիրապ, ուր Զարչարանաց գքից դուրս բերված լույսով վառված մոմերը բաժանվեցին մասնակիցներին: Ամենայն Հայոց Հայրապետը և քույր Եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչները աղոթք վերառաքեցին առ Աստված՝ հայցելով Տիրոջ խաղաղությունը համայն աշխարհին, սեր և համերաշխություն՝ բոլոր ժողովուրդներին:

Վեհափառ Հայրապետը 1700-ամյակի այս մեծ եռբեյանի առիթով հավաքվածներին ուղղեց իր պատգամը՝ ասելով.

Միոնգյալ հոգևոր եղբայրներ ի Քրիստոս.

Ուխտավորի քայլերով և օրհներգությունը մեր հոգում եկել ենք Խոր Վիրապ՝ քրիստոնեական աշխարհի հնագույն սրբավայրերից մեկը, որտեղ արգելափակության և Աստծո հետ մենության 13 տարիներ ապրեց Հայոց Սուրբ Գրիգորը: Արարատի լանջին փորված խորհրդավոր վիրապում՝ մարդկանցից մեկուսված ու հալածյալ, ապրեց Արարատի վրա Նոյի փրկության հավատով. Աստծո Միրոն ու Խոսքումի վստահությամբ: Բանտը դարձավ առ Աստված հավատարմության վկայարան. Աստծո ներկայության բնակատեղի, որի առջև ամենախորին խոնարհումով աղոթախոս է հայոց հոգին:

Եղբայրասեր աղոթքով այսօր եկել ենք այստեղ՝ Լուսավորչի Վիրապի առջև միասնաբար ծառայական մեր ուխտը նորոգելու: Եկել ենք ներքև նայելու և երկինքը տեսնելու:

Սիրելի հոգևոր եղբայրներ. այստեղից 1700 տարիներ առաջ Աստվածային Լույսը համապարած ճառագից հայոց երկրում: Մահապարտի գուրը գնդեզման լինելով՝ դարձավ աստվածանանչ հոգու լուսե խորան. ծնեցավայր հայոց համար: Եղավ հավերժական Լույսի մշտաբնակ արքարան. ուր ներսողը տեսնում է շրթայված քրիստոնեության աքսորավայրն ու արքայավայրը՝ հայազգի առջև հայոց համազգային մկրտության ոսկեկնիք պատմությունը, որը պայմանավորեց Հայաստանի ու հայ ժողովրդի հետագա դարերի Քրիստոսանվեր ոգին:

Ինչպես ավանդում են մեր պատմիչները. Գրիգորը Կեսարիայում մանկուց դաստիարակվել ու սնվել էր քրիստոնեական միջավայրում՝ իր հոգում կրելով Ավետարանի լույս պատգամները: Վերադառնալով Հայաստան՝ նա պաշտոնի է կոչվում հայոց Տրդատ Մեծ թագավորի արքունիքում և իր ծառայասիրությամբ արժանանում արքայի վստահությանը, իր առաքինությամբ վայելում պարարտականների հարգանքը և զինվորների սերը: Գրիգորի ծածուկ հավատքը շուրով հայտնի է դառնում Տրդատ թագավորին, որը Հայաստանն ազատագրելու հաղթական մարտերը էր մղում: Արքան, որքան էլ համակրանք ունենար Գրիգորի նկատմամբ, չի հանդուրժում, որ նա հրաժարվում է փառաբանել հեթանոս չաստվածներին:

Չհանկանալով Գրիգորի համառությունը, Տրդատ արքան նրան հանձնարկում է տանջանքների և, ի վերջո, մոլեգնած՝ կարգադրում անել մահապարտների համար նախատեսված վիրապը: 13 տարի ցրտի ու տոթի պայմաններում, թունավոր սողունների հարևանությամբ աղոթքով ապրեց Քրիստոսի մեծ վկան և անչար սրտով հայցեց Բարձրյալից. «Քո բարերար շնորհներով գթա Քո արարածներին և մեր Հայոց աշխարհը, որպեսզի արևանք ևս ճանաչեն Քեզ և Քո Միածին Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին»: Աստված խնամեց և մտքի սթափությամբ ու պայծառությամբ, հոգու կորովով պահպանեց Գրիգորին, ով պիտի դառնար երկրորդ Լուսավորիչը հայոց, ով պիտի լույսի առատությամբ շողավառեր կանթեղները հավատի՝ Հայաստանում Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների ձեռքով վառված և դեպի Արածանիի՝ մյուռոնով ջնջմացած ջուրն առաքնորդեր հայ ժողովրդին: 301 թ. Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա պետությունը աշխարհում:

Սիրելի եղբայրներ մեր. 2001 թ. առաջին ժամերին Մենք Հայ Եկեղեցու հոգևոր դասի և աշխարհիկական բազմահազար ժողովրդի հետ ուխտի եկանք Խոր Վիրապ և այստեղ վառեցինք մեր կանթեղները՝ աղոթքով, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը 1700 տարիներ անց բարեխոս լինի Քրիստոսի որդեգիր ազգիս, որպեսզի Աստծո օգնությամբ մեր ժողովուրդը շարունակի ապրել Ավետարանի լույս պատգամներով, նոր հազարամյակ մուտք

գործի՝ գորացած Աստվածային Սիրո ու Հաղորության հավատով, որ մեր նախնիք որպես ամենաթանկ ժառանգություն պատգամեցին անոր ունկնդիրներին: Մեր ժողովրդի ապանոության համաձայն՝ հայոց երկնքից անպարտան կախված է Լուսավորչի մշտավառ Կանթեղը, ուր յուղի փոխարեն վառվում են սրբի արցունքները, և նրանք, ովքեր հավատում են մաքուր սրտով ու անկեղծավոր հավատով, կարող են տեսնել այդ անմար Կանթեղը Արարչած լեռան բառաչազարթ բարձունքին: Խոր Վիրապում վառած լույսերը Լուսավորչի մշտավառ Կանթեղի խորհրդով տարածեցին Հայ Եկեղեցու բոլոր թևերը, որպեսզի ազատ մեր Հայրենիքում և համայն հայոց Սփյուռքում նախնյաց մեր սուրբ հավատը վերստին լուսավորի մեր կյանքը և առաջնորդի դեպի Հայ Եկեղեցու Լուսե Խորանը, որ «դեպի Մարուած բարձրացող գաղտնի Ճամփա մը ունի»:

Սուրբ ու նվիրական այս վանքի հարկից ներս միահյուսենք մեր աղոթքները 1700 տարի այստեղ հնչած բյուրավոր աղոթքներին և վերստին հայցենք Քրիստոսի խիզախ վկայի բարեխոսությունը, որ Սուրբ Հոգու շնորհով համայն աշխարհում բարի պտղուներ տան երկնապարգև Հույսը, Սերն ու Հավատը, և պետություններին, ժողովուրդներին ու մարդկանց հարաբերություններում իշխի հաճության ու բարի կամեցողության շնչացնող ոգին:

Հայցենք Բարձրյալից, որ անսասան պահի քրիստոնեական Եկեղեցիները և նրանց միջև՝ եղբայրական սերն ու համագործակցությունը այժմ և միշտ և հավիտյան:

Թող մեր ուխտը ընդունելի լինի Աստծուն. ամեն:

Ապա Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Նորին Սրբություն Բասիլեոս Մար Թովմա Մատթեոս Բ-ն տվեց իր պատգամը՝ հորդորելով անսասան մնալ Քրիստոսի հավատքին և առաջնորդվել Տիրոջ պատգամներով:

Արարողությունն ավարտվեց միասնաբար արտասանված Տերունական աղոթքով:

Ուխտավորաց խումբը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, ժամը 10-ին մեկնեց Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի փուրք մատուցելու 1915 թ. անմեղ զոհերի հիշատակին:

Հոգեհանգստյան արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետի աղոթքին միացան նաև Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Նորին Սրբություն Բասիլեոս Մար Թովմա Մատթեոս Բ-ն, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Պետրոս Է-ն և Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Բուխարեստի Արքեպիսկոպոս, Ունգրո-Վալախիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն Թեոկտիստ Ա-ե՝ Տիրոջից հայցելով խաղաղություն և հոգու հանգստություն Մեծ Եղեռնի նահատակների համար: Վեհափառ Հայապետը շնորհակալության խոսք ուղղեց այն բոլոր հոգևոր պետերին ու ժողովուրդներին, որոնք ընդվզումի ձայն են բարձրացրել՝ դատապարտե-

լով Հայոց Եղեռնը: Նորին Սրբությունը նաև վստահություն հայտնեց, որ առաջիկա տարիներին ողջ մարդկությունը կմիանա այդ ձայնին, որպեսզի աշխարհի ոչ մի անկյունում նման ողբերգություն այլևս չկատարվի:

Հոգեհանգստյան արարողությունից հետո բոլոր ներկաները այցելեցին Հայոց Ցեղասպանության թանգարան:

Երեկոյան ժամը 18.00-ին, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, 1700-ամյակի եկեղեցական հանդիսություններին մասնակից հոգևորականները Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մասնակցեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի և Հայաստանի Հանրապետության անկախության 10-ամյակի զույգ հոբելյաններին նվիրված պետական հանդիսությանը:

Հոբելյանական այս հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը տվեց իր պատգամը՝ «Չի Աստուած ընդ մեզ է...» բնաբանով (տես էջ 23):

Մեպտեմբերի 22-ին, առավոտյան ժամը 9.45-ին, «Հրաշափառ» շարականի հընչյունների ներքո դեպի Մայր Տաճար ուղղվեցին Վեհափառ Հայրապետը, Մեծի Տանը Կիլիկիո Կաթողիկոսը, քույր Եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները՝ միջեկեղեցական արարողությամբ մեկ անգամ ևս ոգեկոչելու 1700-ամյա հոբելյանը, ինչպես նաև առավել ջերմացնելու արդեն իսկ հաստատված փոխադարձ սիրո և վստահության ջերմ հարաբերությունները:

Հաջորդաբար աղոթեցին հոգևոր առաջնորդները, այդ թվում նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի քարտուղարը՝ մեր բոլորի Տիրոջից խնդրելով սեր և խաղաղություն համայն աշխարհի ազգերին ու ժողովուրդներին, նաև դատապարտելով վերջերս Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարված աննախադեպ ահաբեկչությունը, որ հազարավոր անմեղ մարդկանց կյանք խլեց:

Այնուհետև խոսք ասաց Ամենայն Հայոց Հայրապետը.

Միրոնցյալ հոգևոր հոբելյաններ ի Քրիստոս

Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Տաճարում, Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև, կրկին սիրո Մեր ողջույնն ենք բերում Ձեզ՝ Հայ Եկեղեցու մեծ հոբելյանի և Հայաստանի անկախության 10-ամյակի ողջ բերկրանքով, որ ապրում է համայն մեր ժողովուրդն այսօր:

Սուրբ Էջմիածնի անվան հետ են կապված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման և հայ ժողովրդի համազգային մկրտության նվիրական հիշատակները: «Էջմիածին», որ անունն է այս սրբարանի, նշանակում է Աստծո Միածին Որդու Իջման վայր: 301 թ մեր Տեր Հիսուս Քրիստոս այստեղ հայտնվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ուր և նորադարձ մեր ժողովուրդը կատուցեց իր Մայր Տաճարը՝ իբրև Մայր Աթոռ՝ Կաթողիկոսանիստ կենտրոն Հայ Առաքելական Եկեղեցու: Հաստատված Աստվածային Էջքով և կրելով հայ կյանքի մեծագույն իրադարձության՝ Հա-

յոց Մեծ Դարձի խորհուրդը, Սուրբ Էջմիածինը Սրբության Սրբոցն է աշխարհասփյուռ հայ ժողովրդի՝ նույնիսկ այն ժամանակներում, երբ Կաթողիկոսական Աթոռը, թշնամաց հարձակումների պատճառներում, հանգամանքների դժբախտ բերումով, ստիպված է եղել տեղափոխվել այլ բնակավայրեր պատմական Հայաստանի և Կիլիկիո հայոց թագավորության: Սուրբ Էջմիածնից հետո Հայոց Հայրապետներն զգացել են իրենց դարաց ու վշտաբեկ: 1441 թ. Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը վերադարձվել է Աստվածածնայաց Սուրբ Էջմիածին և այստեղ է այդ ժամանակից ի վեր:

Առաքելահաստատ Հայ Եկեղեցուց և նրա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ճառագող Աստվածամանաչ լույսով և ինքնության խորհրդով կերտվել է քրիստոնեական հարատև հայ մշակույթը: Դարերի մեջ և այսօր էլ Հայ Եկեղեցին և նրա Մայր Աթոռը ազգահավաք դերակատարություն ունեն հայ ժողովրդի կյանքում: Ազգային սիրտկանություն կորստի ժամանակներում Հայ Եկեղեցին իրականացրել է ոչ միայն հոգևոր առաքելություն, այլև կրել սիրտկանության պարտականությունները, ներկայացրել ու պաշտպանել հայ ժողովրդի շահերը՝ ծնողի հոգածությամբ օրհնության իր թևերը տարածելով իր զավակների վրա համայն աշխարհում:

Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Իր ազգային բնույթին համարժեք ուժեղ ու ամուր է նաև նրա լկտմենիկ ոգին՝ դրսևորված ծնունդ, աղոթքներում, պատմության բազմաթիվ օրհնականներում: Քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հետ եղբայրական սիրով համագործակցության ջատագով ու իրականացնող էին Մեր նախորդ հոգեղույս Հայրապետները: Անցնող դարում, երբ Քրիստոսի Եկեղեցու միության ջերմ ձգտումը մարմնավորվեց որպես վարչական կառույց՝ ի դեմս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, էկումենիկ շարժմանը գործուն մասնակցություն բերեցին երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսները: Այսօր ուրախությամբ ենք ընդգծում, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր քարտուղարն է զբաղեցնում Մեր սիրելի եղբայր Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը:

Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների ուղղիղ ճանապարհներով առաքելորդվելով, Հայրապետական Մեր գահակալության առաջին տարում Մենք այցելություններ կատարեցինք մեր բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերին՝ հավատարիմ Մեր եղբայրական սերը, ամրապնդելու մեր Եկեղեցիների բարեկամությունը և արտահայտելու սերտ համագործակցության՝ Հայ Եկեղեցու պատրաստակամությունը: Եղբայրական ողջույնով Մենք այցի ենք գնալու նաև այն բոլոր Եկեղեցիներին, որոնց ժամանակի պատճառով չկարողացանք այցելել: Ինչպես դարեր ի վեր, այսօր էլ Հայ Եկեղեցու համար հիմնորոշ է «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս եւ սէր յամենայնի» սկզբունքը: Եվ այսօր Մենք փառք ենք բարձրացնում առ Աստված, որ ի Քրիստոս մեկ հավատով, եղբայրական սիրո աղոթքով հա-

վաքել է մեզ Սուրբ այս հարկից ներս: Թող Տերը օրհնի սիրո և միասնական-ության հանդիպումը մեր՝ ի դեմս քույր Եկեղեցիների հոգևոր պետերի ու ներկայացուցիչների: Թող մեր սերը հավատավոր գործերի փոխվի՝ հա-նուն աշխարհում խաղաղության ու եղբայրասիրության հաղթանակի՝ այ-սօր և միշտ և հավիտյան ամեն:

Էկումենիկ արարողությունից հետո, ժամը 11.00-ին, բարձրաստիճան հոգևոր հոյրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ ուղղվեցին Վեհարանի հան-դիսասրահ, որտեղ տեղի ունեցավ բարիգալստյան արարողություն:

Արարողության ընթացքում 1700-ամյա հոբելյանը արժևորեցին քույր Եկեղեցի-ների պետերը, որից հետո բոլոր ներկաներին իր ողջույնի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն.

«Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք. մեք
ժողովուրդք եւ խաշն արօտի նորա»:
(Սաղմոս ՂԹ 3)

Սիրելի հոգևոր եղբայրներ.

Սիրով ողջունում ենք Ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Փա՛ռք Ամե-նակալ Բարձրյալին, որ համախմբել է մեզ՝ որպես անդամներ Քրիստոսի մեկ և նույն մարմնի, Հայ և Ընդհանրական Եկեղեցու կյանքի կարևոր իրա-դարձության՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնախմբության առիթով: Մեծապես շնորհակալ ենք, սիրելի հոգևոր եղբայրներ, որ մեզ հետ եք, խնդակից ու ուրախակից մեզ, և մենք միայնակ չենք մեր ուրախության մեջ: Ձեր ներկայությունը զորացնում է մեզ, առավել բազմապատկում մեր խնդությունը և առատացնում ցնծությու-նը երկնքում: Քրիստոսի սիրո մեջ լինել համախումբ և համախորհուրդ՝ Տիրոջ պատգամն է մեզ. «Զի՛ բարի եւ զի՛ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1):

Թող մշտապես ներշնչող լինի հոգևոր առաջնորդներիս համար Պողոս առաքյալի մարդկային մարմնի համաբանությունը, առավել ևս այս դարա-շրջանում, երբ տակավին աշխարհի շատ կողմերում սրերից խոփեր չեն ձուլվել, և չի դադարել հրանոթների որոտը, երբ մարդկության կյանքում գիտական ու տեխնիկական առաջընթացի հետ՝ գլորվող ձյան գնդի նման, առատանում ու մեծանում են հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդ-իրները, և Եկեղեցիներս կանգնած ենք դրանց համարժեք պատասխան-ներ գտնելու անհրաժեշտության առջև: Հիմնախնդիրներից շատերը տեղա-կան, միջավայրին բնորոշ առանձնահատկություններով դրսևորվում են յուրաքանչյուրիս կյանքում: Մեր Եկեղեցին շուրջ 2000 տարիների ուղի է անցել, և նրա ընթացքը հատկորոշվել է որպես հավատարմություն առ Աստված: Մեր պատմագրությունը, իրավամբ, «մարտիրոսագրություն» է:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

հավատավոր մեր զավակները հաճախ, որպես հավատքի գին, իրենց արյունն են վճարել: Փա՛ռք Բարձրյալին, այսօր հեղնում են մնացել հալածանքներն ու բռնությունները, ավերն ու արցունքը: Ազատ ու անկախ Հայաստանի պետության հովանու ներքո Հայ Եկեղեցին լծվել է Բանին Կենաց քարոզության առաքելությանը, համայնավարական անաստվածության տարիների ավերի ասրիճանական հաղթահարմանը: Եկեղեցի-պետություն հարաբերությունների կանոնակարգման գործընթացի արդյունքում Մայր Աթոռին են վերադարձվել նախկին հասարակարգի տարիներին Եկեղեցուց հանիրավի բռնագրավված Եկեղեցիներ ու վանքեր, եկեղեցապատկան կալվածքներ: Ինչպես մեր քույր Եկեղեցիները, որոնք վերապրեցին համայնավարական ասաստվածության տարիների սարսափը, Հայ Եկեղեցին ևս քարոզչական-դաստիարակչական, եկեղեցաշինական և նոր սերնդի պատրաստության ոլորտներում ակտիվ գործունեություն ծավալելու հրամայականի առջև է: Վերջին շրջանին լույս ընծայված կրոնա-եկեղեցագիտական բազմապիսի հրատարակությունները, կրոնից ուսուցման հաստատված յասարանները, նորոգված վանքերն ու կառուցված եկեղեցիները թեև թեթևացնում ու մեղմում են ստեղծված կարիքները, բայց և այնպես հեռու են բավարար լինելուց: Սոցիալական հաղթահարված կարիքները՝ ջրավորությունն ու գործազրկությունը և բարոյական չափանիշների արժեզրկումը, որոնք աշխարհը հուզող հիմնահարցեր են, այսօր նաև մեր մտահոգության առարկան են:

Մեր Եկեղեցու առջև ծառացած հիմնահարցերից կարևորագույնը շարունակում է մնալ համայնքային կյանքի ձևավորման խնդիրը, որի կենսագործումը հրատապ է նաև Հայաստան ներթափանցած աղանդների ավերիչ գործունեությունը կասեցնելու առումով: Այս իմաստով էական է հայրկապես ընտանիքներից ներս իրականացվող հոգևոր դաստիարակության աշխուժացումը, քանզի հայ ժողովրդի կենսունակությանը պատվարող կարևորագույն հաստատություններից մեկը Եկեղեցու և դպրոցի հետ եղել և մնում է ընտանիքը: Մենք, որպես Եկեղեցի, չենք կարող անտարբեր լինել կարևորագույն այս պայմանի նկատմամբ: Մեր Եկեղեցու հայրերը դարերի մեջ բարեհիրական ու հոգևոր-դաստիարակչական յուրաքանչյուր հաստատություններ են հիմնել՝ նպատակ ունենալով օգնության ձեռք մեկնել կարիքավորներին, վերացնել աղքատության չարիքը և մարդկանց հոգիներում սերմանել քրիստոնեական բարոյականության հունները: Հավատարիմ իր կոչմանը, Հայոց Եկեղեցին ստեղծագործական իր կարելիություններով և սակավ իր եկեղեցականներով իրականացնում է իր առաքելությունը հիշյալ ոլորտներից ներս:

Նշված խնդիրները, որոնք, վստահաբար, առավել կամ նվազ չափով առկա են նաև մեր քույր Եկեղեցիներում, այլևս տեղ չեն թողնում ինքնամեկուսացման ձգտումներին, և անհրաժեշտություն են դարձնում գործակցությունն ու փոխաջակցությունը: Մեր զոհունակությունը և շնորհակալությու-

ևրն ենք հայտնում, որ ինչպես միշտ, այնպես և անցած տասը տարիների ընթացքում զգացել ենք այդ ոգու դրսևորումը քույր Եկեղեցիների կողմից, հատկապես երիտասարդ սերնդի պատրաստման ու սոցիալական զարգացման ծրագրերի իրականման ոլորտներում: Երիտասարդ մեր եկեղեցականներից ունենք արդեն իսկ կրոնագիտական իրենց իմացությունն են կատարելագործում արտերկրի տարբեր համալսարաններում, իսկ Հայաստանի մի շարք շրջաններում քույր Եկեղեցիների հատկացրած միջոցներով իրականացվում են տնտեսության զարգացման զանազան ծրագրեր: Մեզ համար սիրո և փոխօգնության այս պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որի ակնանատեսը դարձանք Մեր այցերի ընթացքին, երբ եղանք Տերունական երկրում, Ռուսաստանում, Ռումինիայում, Եգիպտոսում, Երուսաղեմում, Վրաստանում, Վատիկանում՝ ամենուր վայելելով հոգևոր մեր եղբայրների անկեղծ սերն ու հարգանքը: Զգացինք Եկեղեցու հավաքական ուժը, բարոյական հեղինակությունը և ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նրա ներունակությունը: Վստահ ենք, որ փոխայցելությունների ու շփումների շարունակականությունը նոր ու խոստումնալից հեռանկար է բացելու մեր առջև, որպեսզի մենք՝ իբրև Եկեղեցիներ, մեր ընդհանրությունների շեշտադրման ճանապարհով ընդառաջ ելնենք ժամանակի մարտահրավերներին: Մենք կարող ենք, որպես քրիստոնյա Եկեղեցիների առաքելորդներ, մեր աղոթքների ու ձայների միահամանմամբ, ձեռք-ձեռքի ագուցմամբ միասին գործել՝ հանուն ավելի մի լավ աշխարհի ստեղծման:

Մեր շնորհակալությունն ու եղբայրական սերն ենք վերստին բերում Ձեզ բոլորիդ Մեր հրավերին ընդառաջելու, Հայոց Եկեղեցու հոբելյանական այս տոնին Ձեր ներկայությամբ առավել հանդիսավորություն հաղորդելու և այն իր համաքրիստոնեական տարողության մեջ արժանավայել պանծացնելու համար: Աղոթում ենք, որ Երկնավոր Տերը ժամանակի հետ ամրապնդի ու զորացնի ի Քրիստոս եղբայրության մեր ոգին, բյուր միխթարություններ պարգևի հավատավոր Իր հոտին՝ ի պայծառություն Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի փառս Ամենասուրբ Երրորդության՝ այժմ և հավիտյանս. ամեն:

Արարողության վերջում, իբրև եղբայրական սիրո ջերմ արտահայտություն, տեղի ունեցավ նվերների փոխանակում:

Բարիգալստյան արարողությունից հետո, ժամը 13.00-ին, Ս. Տրդատա Բաց Խորանի վրա մատուցվեց ուխտավորաց Պատարագ: Օրվա պատարագիչն էր Բրազիլիայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:



ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋՈՎ ՕՐՀՆՈՒՄ Է
1700-ԱՄՅԱԿԻ ՄՅՈՒՌՈՆԸ

ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԸ

ՅՈՒՍԻՍՈՒՄ ԱԿՍԱՐԼՈՒՄԸ Է ՂԿՂԱՄԱՎՈՒՍԵՄ ՀԱՅ ՍՏԱՓԱՆՅԵՄՆ ՍՈՓՈՒՆՔԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՍՈՒՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻԲԻՐԻ ԵՎԵՐՆԻՍՏԱՆՈՒՄ (Տես մեր նամակը հայոց եկեղեցու լուսանկարները)

(Ամերիկաստան լեզվի լուսանկարները)

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մյուռոնօրհնեքի ակնանատեսը դարձանք սեպտեմբերի 22-ին, որն առանձնակի մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ բրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի հոբելյանական այս տարում:

Հիրավի մեծ է Մյուռոնօրհնեքի դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, որն արդեն նվիրական ու ավանդական է դարձել, արարողություն, որ վեր է ածվել ազգային-եկեղեցական տոնախմբության:

Աշխարհի չորս ծագերից Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին են եկել մեր ժողովրդի ուխտավոր զավակները՝ վերանորոգելու իրենց սրբազան ուխտը: Եկել են հոգեկան ուրախության, կրոնական ու հայրենասիրական հույզերով ու ապրումներով, ազգային հպարտության բարձր զգացումներով՝ իրենց հետ բերելով բյուր կարոտներ:

Սրբալույս Մյուռոնի օրհնության համար նախատեսված թափորի պատրաստությունը սկսվեց երեկոյան ժամը 17.30-ին: Նորին Սրբությունը Մայր Տաճարում հանդիսավորությամբ զգեստավորվեց հայրապետական շուրջով: Ըստ իրենց աստիճանի, նույն կերպ զգեստավորվեցին նաև ինը եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ: Ժամը 18.00-ին եկեղեցական թափորը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Տաճարից դուրս եկավ և հյուսիսային կողմով շարժվեց դեպի նորաշեն Ս. Տրդատ Բաց խորան:

Թափորի առջևից գնում էին շաթիրները, մոմակիրները, քշոցակիրները, խաչվառակիրները, որոնց հետևում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները, միաբան սարկավագները, բահանաները ու վարդապետները, ապա ինը եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, որոնք իրենց հետ կրում էին նվիրական սրբությունները. Տ. Գյուտ արքեպս. Նազգուշյան՝ հին Մյուռոնի անոթը, Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը՝ ծաղկանց նյութերի անոթը, Տ. Պետրոս արքեպս. Մարտիրոսյանը՝ Ս. Հակոբոս Ալփյայի Աջը, Տ. Տատրոն եպս. Ճերեճյանը՝ Ս. Ավետարան, Տ. Վահե արքեպս. Հովսեփյանը՝ Ս. Թադեոս առաքյալի Աջը, Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը՝ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը՝ Ս. Թովմաս առաքյալի Աջը, և Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ բալասանով լի անոթը: Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանը կրում էր Կենաց Փայտը, իսկ Ամենապատիվ Տ. Մեսրոպ Պատրիարք Մութաֆյանը՝ Ս. Գեղարդը:

Այս նվիրական հանդիսության առթիվ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր հետ բերել էր Կիլիկիո կաթողիկոսության Մյուռոնը, որը կրում էր Տ. Սուրեն արքեպս. Գաթարդյանը:

Վեհափառ Հայրապետի աջ և ահյակ կողմերով ընթանում էին Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Սնպուհ եպս. Չուլջյանը՝ իրրև քղանցակիրներ, այնուհետև՝ Մեծի

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, Տ. Սասուն վրդ. Ջմրուխտյանը և Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ իբրև քահանայապետներ, Տ. Սիոն վրդ. Աղամյանն ու Տ. Բազրատ աբեղ. Գալստանյանը՝ իբրև բուրվառակիրներ:

Թափորին մաս էին կազմում նաև քույր Եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ:

«Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ եկեղեցական հանդիսավոր թափորը բարձրանում է Ս. Տրդատա Բաց Խորան, և սկսվում է Մյուռոնօրհնության սրբազան արարողությունը:

«Կանոն օրհնութեան սրբալոյս Միւռոնի» հրահանգի համաձայն, Ս. Գրքից ընթերցվում են տարբ յուղի պատրաստության հոգևոր նշանակության և նրա գործածության մասին համապատասխան հատվածներ: Այնուհետև Նորին Սրբությունն ընթերցում է Մյուռոնօրհնության համապատասխան աղոթքները, որպեսզի «եղիցի իւղս այս՝ իւղ ցնծութեան, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, զի ուր ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղովս, երկիւղած լինի յԱստուծոյ եւ աներկիւղ եկեղեցոյն»:

«Բացեր, Տէր, այսօր զգանձդ երկնային» շարականի երգեցողության ժամանակ Սրբալոյս Մյուռոնի կնքահայր, տիար Էդվարդո Էռնեկյանը բացում է Մյուռոնի կաթսայի կափարիչը: Վեհափառ Հայրապետը մյուռոնաթափ կաթսայի մեջ լցնում է բալասանը և 40 ծաղիկներից պատրաստված խառնուրդը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը նոր Մյուռոնին խառնում է Անթիլիասից բերված մյուռոնը՝ իբրև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միության և միասնականության արտահայտություն:

Այս ամենից հետո Վեհափառ Հայրապետը նոր Մյուռոնին խառնում է հինը և, նվիրական երեք սրբություններով՝ Կենաց Փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով երեք անգամ ցյառնագրելուց հետո, կաթսան ծածկում է կափարիչով:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը հավաքված հավատացյալ ժողովրդին, հյուրերին և համայն հայությանն ուղղեց հայրական իր պատգամը (տե՛ս էջ 16):

Ապա խոսք է ասում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն.

Սիրելի Վեհափառ Եղբայր, սիրելի որդի Նախագահ, Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պատասխանատուներ և հավատացյալ ժողովուրդ հայոց.

Պատմությամբ լեցուն, պատմությամբ օծուն պահ մըն է այս պահը մեր ազգի ու հայրենիքի փառավոր պատմության մեջ: Եվ այսպես բոլորս Աստուծո աչքերուն դիմաց, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին դիմաց, մեր հայրենի սուրբ հողի վրա կանգնած անգամ մը ևս կու գանք վկայելու, թե մեր ժողովուրդը հավատարիմ է այն ուխտին, որ կնքեց 1700 տարիներ առաջ Աստու-

ծո հեր: Այո, նույն այս սուրբ հողի վրա, նույն այս Միածնաէջ Տաճարին մեջ Աստված երկինքին հոս իջավ, մեր ժողովուրդի կյանքի մեջ վերամարդեղացավ և մեր ազգի զավակները Աստուծո հետ ուխտ կնքեցին, հավատքի ուխտ՝ հավատարիմ մնալու Քրիստոսի Ավետարանին, հավատարիմ մնալու հայրենիքին, հավատարիմ մնալու մեր ժողովուրդի երազներուն ու ձգտումներուն: Եվ այսօր, 1700 տարիներ ետ հազար փառք Աստուծո, որ մենք անգամ մը ևս ազատ ու անկախ հայրենիքի սուրբ հողին վրա Ամենայն Հայոց Հայրապետի հետ որպես Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոս մեր ժողովուրդի զավակներու աչքերուն դիմաց կու գանք վերանորոգելու մեր ուխտը քրիստոնեական, մեր ուխտը ազգային՝ բալեր, բալեր մեր պապերուն սրբազան ճանապարհին՝ հայրենիքը մեր արտին, Լուսավորչի կանթեղը մեր հոգիին, Արարատը մեր աչքերուն դիմաց՝ այս է մեր պատմության ճամփան:

1700 տարիներ մենք Ս Մյուռոնով օծվեցանք: Եթե դարձանք Կիլիկիայեն, եթե դարձանք ափյուռ, մնացինք հայ՝ Մյուռոնով կապված՝ նույն և մեկ Սրբազան Մյուռոնով: Այսօր մեկ անգամ ևս կատարեցինք Մյուռոնօրհնեք և որպես մեր ժողովուրդի ու Եկեղեցվո միության վավերական արտահայտություն, Ս. Էջմիածնի Մյուռոնին եկավ խառնվելու Մյուռոնը Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսության՝ ցույց տալու համար, թե Հայաստանյայց Եկեղեցին մեկ է, Հայաստանյայց Եկեղեցին մեկ է իր Մյուռոնով, իր առաքելությամբ, իր ծառայությամբ ու իր ժողովուրդով: Այսօր եկանք վկայելու, թե հայրենիքը մեկ է՝ իր Արցախով, իր ափյուռքով և իր երազներով ու ձգտումներով:

Միավասիկ վկայությունը մեր՝ Աստուծո դիմաց, մեր ժողովուրդի զավակներուն հետ միասնաբար: Թող այս օրհնյալ Սուրբ Մյուռոնը հեղվի մեր ժողովուրդի ճակատներուն: Այս Ս. Մյուռոնով մենք զորացած, այս Ս. Մյուռոնով ավելի հայացած քալենք մեր պապերու սրբազան ճանապարհին՝ ոչ միայն նայելով անցյալին, այլ նայելով նաև, ու մանավանդ, ապագային: Մեր ժողովուրդը անցյալ չէ, մեր ժողովուրդը ներկա է, մեր ժողովուրդը, մանավանդ, ապագա է՝ իր Եկեղեցիով, իր մշակույթով և իր հայրենիքով: Հետևաբար կաղոթեմ առ Բարձրյալն Աստված, որ այս Ս. Մյուռոնը ավելի ամրակնդ, զորացնե մեր Եկեղեցվո, մեր ազգի, մեր հայրենիքի միասնականությունը՝ միասնաբար վերանորոգ հավատքով ու տեսիլքով քալելու մեր պատմության յուսապայծառ ապագան, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»-ով ավարտում է Սրբալույս Մյուռոնի օրհնության սրբազան հանդիսությունը:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված գլխավոր հանդիսություններից էր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը, որ կատարվեց բազում ուխտավորների ներկայությամբ և առանձնակի շուքով:

Սեպտեմբերի 23-ին, առավոտյան ժամը 10.00-ին, առաջին անգամ դողանջեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորչ եկեղեցու զանգակատան զանգերը՝ ազդարարելով հոյակերտ այս տաճարի օծումը և անդրանիկ Պատարագը: Պատարագիչն էր ազգիս Վեհափառ Հայրապետը:

Եկեղեցական թափորը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, արևմտյան դռնից շարժվեց դեպի խորան, որտեղ և, ընթացս Ս. Պատարագի, տեղի ունեցավ օծման սրբազան արարողությունը:

Օծման արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդներն ու պատվիրակությունները, հավատարմագրված դիվանագետներ, սփյուռքահայ մի շարք ճանաչված հասարակական գործիչներ, մտավորականներ, բարերարներ և ուխտավոր հավատացյալների բազմությունը:

Հանդիսությանը մասնակցեցին նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, պաշտոնատար այլ անձինք: Հրավիրյալների թվում էր նաև աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը:

Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ Պետական ակադեմիական երգչախմբի հոգեպարար կատարումները, անվանի երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի նվագակցության զմայլեցուցիչ ենչյուններով համեմված, եիացրել էին ամենքին:

«Կենդանարար Աստուած» շարականի երգեցողության ժամանակ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը հանդիսավոր կերպով Ս. Սեղան է բարձրացնում Սրբալույս Մյուռոնը և տալիս Վեհափառ Հայրապետին:

Սկսվում է օծման արարողությունը:

Վեհափառ Հայրապետն օծում է Ս. Սեղանի զագաթն ու ճակատային մասը, Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքը՝ Ս. Սեղանի աջ անկյունը, Ամենապատիվ Տ. Մեսրոպ Պատրիարքը՝ ձախ անկյունը, Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը՝ Ս. Մատթեոսի սյունը, Տ. Գարեգին արքեպս. Բեգզյանը՝ Ս. Մարկոսի սյունը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ Ս. Ղուկասի սյունը, Տ. Առաքել եպս. Քարամյանը՝ Ս. Հովհաննեսի սյունը:

«Խորան սրբութեան» շարականից ետո օծվեցին եկեղեցու սյուները, դռները և մկրտության ավազանը: Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանն օծում է Ս. Պետրոս առաքյալի սյունը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը՝ Ս. Անդրեաս առաքյալի սյունը,

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՊԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ Ն. Գ. ՊԱՊԻԿՅԱՆԸ

Գր. Նարեկացի՝ «Մեկնութիւն Գիրքի աղաղակի»

Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ հյուսիսային դուռը, Գիսակ արքեպս. Մուրադյանը՝ Ս. Փիլիպոս առաքյալի սյունը. Տ. Սուրեն արքեպս. Գաթարոյանը՝ Ս. Բարդուղիմեոս առաքյալի սյունը. Տ. Գարեգին արքեպս. Բեգչյանը՝ Ս. Սիմեոն Քանանացու սյունը. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը՝ Ավագ դուռը, Տ. Վազգեն արքեպս. Հովսեփյանը՝ Ս. Մատթեոս առաքյալի սյունը. Տ. Նորվան արքեպս. Ջաբարյանը՝ Ս. Թադեոս առաքյալի սյունը. Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը՝ Ալփյան Հակոբոս առաքյալի սյունը. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ Ս. Թովմաս առաքյալի սյունը. Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը՝ Հարավային դուռը. Տ. Առաքել եպս. Քարամյանը՝ Ջերեղյան Հակոբոս առաքյալի սյունը. և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը՝ Ս. Պողոս առաքյալի սյունը:

Այնուհետև Տ. Շահե արքեպս. Աճեմյանը օծում է Մկրտության ավազանը, իսկ «Աստուած բարձրեալ» հոգևորին աղոթքից հետո՝ խաչով ու գավազանով օրհնում եկեղեցին և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» անվամբ կնքում նորաշեն Մայր տաճարը:

Այս ամենից հետո Վեհափառ Հայրապետը ընթերցում է «Տէր Աստուած մեր» փակման աղոթքը՝ խնդրելով Ամենակալ Տիրոջից օրհնել Ս. Եկեղեցին. *«զի մատուցեալն ի սա յանուրանոր պատարագ փոխեսցի յանապական եւ պատուական Մարմին եւ Արիւն Միածնի Քո Յիսուսի Քրիստոսի: Եւ շնորհեսա զնոսա, որոց մատանեսն ի տաճարս եւ խոստովանեսին զմեղս իւրեսանց լինել բաւութիւն մեղացս եւ առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնի եւ ամենայն սրբոց»:*

Օծման սրբազան արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիսությանը ներկա հավատացյալներին և ողջ ժողովրդին ողջունեց իր հայրական պատգամը (տե՛ս էջ 20):

Այնուհետև իր պատգամը փոխեց Համայն Ռուսիոց Պատրիարք, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ն.

Հերոյ Սրբություն

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցու կյանքում իրապես մեծ օր է, քանզի այսօր կատարվեց օծումը նոր տաճարի, որը կրում է Հայ Եկեղեցու մեծ սրբի, նահատակ Գրիգորի, Հայաստանի լուսավորչի անունը: Այս ուրախալի և լուսավոր իրադարձությունն արժանապատիվ պսակում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված տոնակատարությունները:

Օծված այս տաճարը միայն արվեստի գործ չէ նրա գեղեցկությունն ավելի կարևոր նպատակի է ծառայում՝ լինել խորհրդանիշը Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և հայկական պետության հոգևոր վերածնունդի: Սահմանափակումների, արգելքների և Եկեղեցու դեմ հալածանքների բազում տարիներից հետո Հայաստանի պետականության վերականգնման տասնամյակը նշանավորվում է տաճարի կառուցմամբ և օծմամբ: Տաճարը՝ ընծայված

Ս. Գրիգոր Լուսավորչին, ով իր արդար գործերով սկզբնավորեց Հայաստանի՝ իբրև քրիստոնյա երկրի 17-դարյա գոյության երկար ուղին:

Այս իրադարձությունը վառ արտահայտությունն է Եկեղեցու և պետության միջև ավանդական կապերի վերականգնման և ամրապնդման, որոնց միությունը հաստատվել է 1700 տարի առաջ:

Քրիստոնեական պատմության բազում դարերը դյուրաստահ չէին Հայաստանի բազմաչարչար ժողովրդի կյանքում: Հայրենիքի պաշտպանության համար մղված արյունահեղ մարտերն արտաքին թշնամիների դեմ որոնք ձգտում էին ոչնչացնել հայոց պետությունը, պահանջում էին ուժերի կենտրոնացում, արիություն, զոհողություն և հոգևոր անկունություն: Ավելի քան մեկ միլիոն հայ զոհվեց 1915 թ. ցեղասպանության հետևանքով: Հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին վերապրեցին՝ ամրապնդվելով աղոթքով և ի Տեր ապավինությամբ: Եվ այսօր այս աքանչելի տաճարը խորհրդանշելով հաղթությունը քրիստոնեական հույսի՝ ևս Աստծո անսպառ օգնությունը, որը ծանրագույն փորձությունների ժամանակ հասանում է Իր հավատարիմ հետևորդներին: Այս տաճարը հիշեցնում է նաև այն բոլոր տառապանքների, որ կրել է բարեպաշտ հայ ժողովուրդը քրիստոնեական իր պատմության դարերի ընթացքում:

Այսօր, երբկա գտնվելով Մայր եկեղեցու հանդիսավոր օծմանը, մենք հիշում ենք սաղմոսերգուի խոսքերը. «Ստացանք ողորմություն, Աստված, Քո ժողովրդի մեջ: Ինչպես որ ասուած է, այնպես և օրհնություն է ողջ տիեզերքում, և Քո Աջը լի է արդարությամբ» (Սաղմ. ԽԷ 10): Այս սուրբ տաճարի կառուցումն ու օծումը մղում են մեզ զոհաբանական աղոթք վերատաքելու Արարչին՝ Իր անպատում բարեգործությունների համար՝ կատարված հատկապես վերջին տարիներին: Մենք վստահ ենք, որ զոհաբանական աղոթքը չի դադարի նոր օծված տաճարի կամարների ներքո:

Քրիստոնեական համայնքի կյանքում տաճարը համախմբող գործոն է. «Արդարև, կենդանի Աստծո տաճար եք դուք, ինչպես ասաց Աստված. «Պիտի բնակվեմ նրանց մեջ ու պիտի ընթանամ նրանց միջով և նրանց Աստվածը պիտի լինեմ, և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը» (Բ Կորնթ. Զ 16): Քրիստոնեությունը հավաքականության իր իդեալով բաժանումներից քայքայվող հասարակությանը մատուցում է տաճար-ժողովարանի խորհրդանիշով արտահայտվող ներդաշնակ միության պատկերը: Մենք հավատում ենք, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնախմբությունը, նոր տաճարի օծմանն առնչվող տոնակատարությունները նորոգյալ պետականության կերտման գործում պիտի նպաստեն հայ ժողովրդի համախմբմանը:

Հավաքական միության իդեալը ներշնչում է մեր Եկեղեցիներին միմյանց հանդեպ հանդես բերելու փոխադարձ ձգտում: Մեր Եկեղեցիների ավանդական բարեկամությունն ամուր հիմք է Հայաստանի և Ռուսաստանի եղ-

բայրական ժողովուրդների միության ամրապնդման համար: Այդ իմաստով մեր ներկայությունը Հայ Առաքելական Եկեղեցու նոր տաճարի օծման ներսանելի ապացույցն է և երաշխիքը մեր Եկեղեցիների ու ժողովուրդների հետագա մերձեցման:

Ձերդ Սրբություն. մեկ տարի առաջ Դուք Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչական պատվիրակությամբ կիսեցիք վերականգնված Ս. Ամենափրկիչ տաճարի օծման մեր հոգևոր բերկրանքը: Այժմ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունն է իր հերթին ներկա Հայ Եկեղեցու մեծագույն տոնախմբությանը: Մայրաքաղաքների մեր երկու տաճարները թեպետ տարբերվում են արտաքուստ, սակայն խորին նմանություն ունեն: Դրանք խորհրդանիշեր են հոգևոր վերածնունդի, որ ապրում են այսօր մեր ժողովուրդները: Պետականության ամրապնդման խորհրդանիշեր են, որ ձգտում են հաստատվել բարոյական ամուր սկզբունքների և ազգային ավանդույթների վրա, նշաններ են քրիստոնեության կենսապարզ գորության:

Մեր միության աբանելի վկայությունը դարձավ այն խաչքարը՝ Սուրբ Խաչը, որ Ձերդ Սրբությունն ընծայեց Ս. Ամենափրկիչ տաճարին անցյալ տարի, և որն օծման օրը կանգնեցվեց տաճարի առջև:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու և իմ անունից վերստին արտահայտում եմ Ձերդ Սրբությանը Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի օծման նշանակալի իրադարձության առիթով և աղոթքով մաղթում Ձերդ Սրբությանը, Հայ Առաքելական Եկեղեցու հավատավոր զավակներին և ամբողջ հայ ժողովրդին Աստծո շնորհաստատ օրհնություններ:

Ալեքսի Պատրիարքը Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն նվիրեց մի շքեղ ոսկյա կանթեղ՝ ի նշան երկու Եկեղեցիների դարերից եկող ջերմ եղբայրական կապերի:

Մայր եկեղեցու հուշաքարի օրհնության արարողությունը կատարվել էր 11 տարի առաջ՝ ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի, իսկ հիմնօրհնեքը՝ 1997 թ. Գարեգին Ա Կաթողիկոսի: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին էր, սակայն, վիճակված ավարտին հասցնելու իր նախորդների սրբազան մտահղացումը:

Մայր եկեղեցին կառուցված է հայկական եկեղեցիներին բնորոշ ճարտարապետական հորինվածքով՝ Անիին մոտ գտնվող քարհանքից բերված այն սպիտակ տուֆով, որով ե կառուցվել է Բագրատունյաց մայրաքաղաքի Մայր տաճարը:

Պետք է նշել, որ Էջմիածնի Ս. Գայանե վանքից այստեղ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի է տեղափոխվել Միածնի Լեռման Ս. Սեղանի կաթողիկեն, որի ներքո գտնվել են Նեապոլի Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայ վանքից բերված Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Այս հրաշալի կոթողի հեղինակն է. ճարտարապետ Ստեփան Զյուրքյանը, որը շինության մեջ պահպանել է Հայ Եկեղեցուն հարիր բոլոր մանրամասները:

Տաճարի կառուցմանն ապակցելու իրենց պատրաստակամությունը հայտնեցին և նյութական մեծ միջոցներ նվիրաբերեցին Լուիզ Սիմոն-Մանուկյանը և Ռիչարդ Մանուկյանը՝ ի հիշատակ իրենց հոր՝ ազգային մեծ բարերար Ակնե Մանուկյանի. ՀԲԸՄ-ի ղեկավարներից՝ ազգային բարերար Նազար Նազարյանը. ազգային բարերարներ տեր և տիկին Վահե և Թամար Մանուկյանները և այլք:

Ա. Պատարագից հետո. ժամը 15.00-ին. Վեհափառ Հայրապետի հրավերով Տարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ ընդունելություն-հանդիսություն. որտեղ իր հայրական պատգամը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ ասելով.

Մեծարգո պետական այրեր հայրենի և բարեկամ պետությանց. շնորհաշնորհ հոգևոր եղբայրներ. սիրելի բարերարներ ու բարեկամներ Մայր Աթոռի և հարգարժան ներկաներ.

Հոբելյանական հանդիսություններն ավարտվում են. բաժանման պահն է մոտենում: Մենք ևս մեկ անգամ գոհություն ենք մատուցում առ Երկնավոր Բարձրյալ՝ Իր շնորհի համար. որ արժանացրեց մեզ Տիրոջ Սուրբ Սեղանի առջև միասնաբար աղոթք բարձրացնելու. հաղորդակցվելու միմյանց. զգալու Հայոց Դարձի Մեծ խորհրդի հոգևորոց ներգործությունը և գորանալ հոգով: Մեր աղոթքն ու մաղթանքն է. որ Տիրոջ ողորմությամբ այսպիսի առիթներ հաճախ շնորհվեն մեզ. որպեսզի մշտապես զգանք ու վայելենք միասին լինելու բերկրանքը:

Աղ ու հացով. սիրո ճաշով են նշանավորվում 1700-ամյակին նվիրված սեպտեմբերյան տոնակատարությունները. որ գեղեցիկ մի վկայություն է առ Աստված սիրո. նվիրումի և զոհաբերության:

Այս զգացումներով. հանուն նվիրապետական մեր Աթոռների գահակալների ու եկեղեցականների. Մեր աղոթքն ու բարեմաղթանքներն ենք բերում բոլոր մասնակիցներիդ և ներկաներիդ: Մեր գնահատանքը բոլոր նրանց. ովքեր ըստ ամենայնի ապակից եղան Մեզ հոբելյանական հանդիսությունների կազմակերպման ու անցկացման աշխատանքներում: Մեր շնորհակալությունը՝ Հանրապետության նախագահի գլխավորությամբ հայրենի պետության ղեկավար այրերին. ովքեր ամենայն ջանք ի գործ դրին տոնակատարությունների պատշաճ կազմակերպման համար: Խորապես զգացված ենք բարեկամ պետությունների պետական այրերի վերաբերմունքից՝ հանդիսություններին բերած իրենց ազնիվ ներկայության և մեր ժողովրդի ու մեր Եկեղեցու հանդեպ դրսևորած հարգանքի համար: Մեր ողջույնը. սերը և երախտիքի խոսքը քույր Եկեղեցիների պետերին ու ներկայացուցիչներին. ովքեր Մեր հրավերին եղբայրաբար ընդառաջեցին և աղոթական միության մեջ մեր հոգևոր բերկրանքը կիսեցին:

Եղբայրական ջերմ զգացումներով անուն առ անուն ողջունում ենք կրկին սիրեցյալ մեր հոգևոր եղբայրներին՝

ՄԱՍԻԿԻ ՊՈՒԵՎԱՍԱՊՈՒՄԸ ԻՆ ՄԱՍԻՍԱՍՏՈՒՄՆԻՆ ՊՈԻՈՒՄԵՔՈՒՆԸ

1. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ Բ
2. ՄԱԼԱՆԿԱՐԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԵՈՍ ՄԱՐ ԹՈՎՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ
3. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ. ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ Է
4. ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿՏԻՍՏ Ա (ՄԵԿՆԵԼ Է)
5. ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՋՈՐՋ ՔԵՐՐԻ
6. ՍԻՐԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՋՈՒԼԻՈՍ ԵՇՈՒ ՉԻՉԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ
7. ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՆԳԵԼՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
8. ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԴԱՆԻԵԼ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
9. ՍԵՐԲԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՊԱՉՈՄԻԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ (ՄԵԿՆԵԼ Է)
10. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԿԻՐԻԼ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
11. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՊԱՆԹԵԼԵՅՄՈՆ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
12. ԱԼԲԱՆԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԴԻՄԻՏՐԻՈՍ ՎՐԴ. ՍԻՆԱՏԻՍ
13. ԿԻՊՐՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՍԻԼԻՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
14. ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԿԱՐԴԻՆԱԼ ՎԱԼՏԵՐ ՔԱՍՊԵՐ
15. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ. ԳԵՐԱՇՆՈՐՀ ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ ԹԱՐՄՈՒՆԻ
16. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԲԲԱՀԱՅՐ. ՀՈԳԵՇՆՈՐՀ ԵՂԻԱ Ծ. ՎՐԴ. ՔԻԼԱՂՊՅԱՆ
17. ԱՄՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԱԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՋՈՆ ԲԱՔԸՍ
18. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅՋԵՐ
19. ԴԱՆԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՅ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԷՐԻԿ ՆՈՐՄԱՆ ՍՎԵՆԴՍԸՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
20. ՇՎԵԴԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒ-

ՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՋՈՆԱՍ ՋՈՆՍՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

21. ԷՍՏՈՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԷՅՆԱՐ ՍՈՒՈՒՆ
22. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԴՈԿՏ. ՄԱՐՏԻՆ ՏԱՄԿԵ
23. ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՌԵՆԵ ԼԵՎՈՆՅԱՆ
24. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՊՐՈՖ. ԿԱՐՍԹԵՆ ՖԼԵԴԵԼԻՈՒՍ

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք հղում 1700-ամյակի կազմակերպման եկեղեցական ու պետական հանձնախմբերի, ինչպես նաև նվիրապետական մեր Աթոռներից ու թեմերից ներս գործող գրասենյակների բարեջան անդամներին՝ իրենց ղեկավարների գլխավորությամբ, ովքեր մեծ հանձնառությամբ աշխատեցին կազմակերպյալ կարգավորել հանդիսությունների ծրագիրը և այն ամենաբարձր մակարդակով իրականացնել:

Բարձր ենք գնահատում հատկապես 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տեր-Երեմյանի խանդավառ, անհոգնաբեկ նվիրումն ու ներդրումը տոնակատարությունների վայելուչ կազմակերպման գործում: Գնահատանքով ցանկանում ենք նշել նաև Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի ջանքերը՝ տարված կազմակերպական աշխատանքներում ունեցած վաստակի համար:

Մայր Եկեղեցու կյանքի հոբելյանական այս տոնակատարությունը արժանավայել պանծացնելու մեջ մեծ է ավանդը երջանկահիշատակ Մեր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսների, ովքեր ցանկանալով ցանկացան և ամենայն ջանք ի գործ կոչեցին 1700-ամյակի տոնակատարությունը հայ ժողովրդի կյանքում մի նոր հոգեզալուստ դարձնելու համար: Մեր հարգանքը, խոնարհումն ու աղոթքն ենք մատուցում հոգելույս հայրապետների անանց հիշատակներին:

Մեր սերն ու շնորհակալությունն ենք բերում նաև Մայր Աթոռի բարեբարեներին ու բարեկամներին: Մեր եկեղեցիների կյանքում մեծ է դերը ազնիվ անհատների, ովքեր իրենց ազնիվ վաստակը ծառայեցնում են Եկեղեցու պայծառությանը: Գոհություն ենք հայտնում Տիրոջը, որ այդպիսի նվիրյալներով մշտապես շենացնում է Իր Սուրբ Եկեղեցին:

Առանձնակի գնահատանքով ու գոհունակությամբ ենք նշում անունները մեծազնիվ բարեբարեների

1. ՏԻԿԻՆ ԼՈՒԻՋ ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՍԻՄՈՆ
2. ՏԻՄՐ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ

4. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆԱՋԱՐ ԵՎ ԱՐՏԵՄԻՍ ՆԱՋԱՐՅԱՆՆԵՐ
5. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԻ ՅԱԿՈՒԲՅԱՆՆԵՐ
6. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՎ ԲՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ
7. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆՈՐԱՅՐ ԵՎ ԼԻՆԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ
8. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՐԿ ԵՎ ԱՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՆԵՐ
9. ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
10. ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴՈ ԷՌՆԵԿՅԱՆ

***

1. «ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ» ԳԻՄՆԱԴՐԱՄ
2. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ
3. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ «ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ» ԴՊՐՈՑ ԴԱՍ
4. Տ. ԳԱՌՆԻԿ ԱՎ. ՔԱՀԱՆԱ ՀԱԼԱՋՅԱՆ
5. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՋՈՐՋ ԵՎ ԴԱՅԱՆԱ ՔՅՈՒՐՔՋՅԱՆՆԵՐ
6. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՎ ՆԱՏԱՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ
7. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԺԻՐԱՅՐ ԵՎ ԷԼԻՋ ԴԵՐՎԻՇՅԱՆՆԵՐ
8. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԾԱՏՈՒՐՅԱՆՆԵՐ
9. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՍԵԴԱ ԴԵՄԻՐՃՅԱՆՆԵՐ
10. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԱՀԱՆ ԵՎ ԱՆՈՒՇ ՇԱՄԼՅԱՆՆԵՐ
11. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆՈՒԲԱՐ ԵՎ ԱՆԻՏԱ ՋԵՄՈՒՐՅԱՆՆԵՐ
12. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՀԱԿՈԲ ԵՎ ՔԱՏՐԻՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՆԵՐ
13. ՏԻԿԻՆ ՋՈՒԼԻԱ ԿՈԲՈՅԱՆ
14. ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ /ՏՈՐԻՍ/ ՉԸՆՆՈՋՅԱՆ
15. ՏԻԱՐ ՋԻՎԱՆ ԿՈԲՈՅԱՆ
16. ՏԻԱՐ ԻՇԽԱՆ ՊԻՏԵՃԻ
17. ՏԻԱՐ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
18. ՏԻԱՐ ՀԱԿՈԲ ՔՐՄՋՅԱՆ

Շնորհիվ մեր բարերարների ազնիվ հանձնառության իրականացվել են եկեղեցաշինական, հրատարակչական ու քարոզչական մեծածավալ աշխատանքներ: Այս օրերին մեր ժողովրդին մատուցած մեծագույն ընծան՝ 1700-ամյակի խորհրդանիշը, Երևանի Մայր եկեղեցին, լավագույն արգասիքն է նաև Ձեր նվիրումի: Եկեղեցասեր ու հայրենաշեն իրագործումների այս ոգին է մեր կյանքի կենսատու ավիշը, որ ներշնչել է նաև ԱՄՆ հայոց արևմտյան թեմի մի խումբ եկեղեցականներ անձանց՝ հորելյանական այս օրերին գտնվելու Հայաստանում և իրենց անգին ծառայությունը բերելու Մայր Ա-

թոռին՝ ընդունելությունների ու սիրո ճաշերի կազմակերպման մեջ: Մեր մասնավոր գնահատանքն ու օրհնությունը նրանց՝ Ֆլորա Դունայանցին, Սոսի Գեորգյանին, Սոսի Քելեկյանին, Հերմինե Ջանոյանին, Սալի Թոֆենկյանին, Լորեն Մուշեղյանին, Լիդոչ Խաչատուրյանին, Ջոն Մուրին, Լիլի Թադևոսյանին, Գուրգեն Դալիրին:

Մեր բարձր գնահատանքն ենք հայտնում նաև Մայր Աթոռի բաժինների տնօրեններին ու աշխատակիցներին, ովքեր ջանադրությամբ իրականացրին իրենց վստահված պարտականությունները: Բարձրորեն ենք գնահատում նվիրումն ու ծառայությունը Մայր Եկեղեցու եկեղեցաշինական աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց՝ ճարտարապետների, շինարարների ու բանվորների, ովքեր իրենց արդար քրտինքը շաղախ դարձրին Երևանի Մայր եկեղեցուն և այլուր կառուցված եկեղեցական շինություններին:

Մեր երախտագիտությունն ենք վերստին հայտնում Բարձրյալ Տիրոջը, որ շնորհը պարգևեց մեզ միասին լինելու, ճաշակելու միասնություն բարի պտղունները և մեր համախմբումի մեջ զգալու հոգևորոգումի ուժը: Մեր աղոթքն է, որ Տերը հանապազ Իր հովանին տարածի աշխարհի ժողովուրդների վրա, օրհնի նրանց խաղաղ ու ստեղծագործ ընթացքը և ամենքիդ պարգևի բյուր բարիքներ ու հաջողություններ ձեր առաքելության մեջ՝ հանուն մարդկության բարօրության ու համերաշխության:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված եզրափակիչ գլխավոր հանդիսությունները մոտեցան իրենց ավարտին, արարողություններ, որոնք կատարվեցին առանձնակի շուքով՝ հոգեկան մեծ բավականություն պատճառելով մեզ՝ ամենքիս: Անկրկնելի Ս. Տրդատա Բաց խորանը, Ս. Գրիգոր Լուսավորչի հաղթակամարը և, հատկապես, Երևանի նորակառույց շքեղաշուք Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին այս բոլորի խոսուն վկաներն են:

Հոբելյանագարդ 2001 թվականը շնորհաբաշխ իր բարերար ազդեցությունը թողեց հայց. Եկեղեցու բարեպաշտ հավատացյալներիս վրա, մի զորեղ խթան, մղիչ ուժ հանդիսացավ՝ մեր սեփական էությունը ճանաչելու, անանձնական սիրով կատարելու աստվածահաճո գործեր և արժանանալու Բարձրյալն Աստծո քաղցր բարեհաճությանը:

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

25 սեպտեմբերի 2001 թ.

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված տոնակատարություններին մասնակցելու նպատակով, ՀՀ Նախագահի և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերներով սեպտեմբերի 25-ին Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդը:

Պատմության մեջ առաջին անգամ, ի դեմս Հռոմի Պապ և Վատիկանի նախագահ Հովհաննես-Պողոս Երկրորդի, Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետը այցելեց ամենահին քրիստոնյա պետություն՝ Հայաստան: Այցելեց սիրո և ողջույնի համբույր տալու ի Քրիստոս իր սիրեցյալ եղբայր Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, համբուրելու առաքելահաստատ մեր Եկեղեցու ու հնամենի մեր պետության հողը, հաղորդակից դառնալու մեր փառավոր պատմական անցյալին ու պատմակերտ մեր ներկային, խնդակից լինելու մեզ հետ մեր ազգային մեծագույն տոնին՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Եկավ սիրո և օրհնության իր խոսքը փոխանցելու մեր ժողովրդին, գլուխ խոնարհելու քրիստոնեական մեր համամարդկային արժեքների առջև, ծնրադրելու ողջ հայության սրբություն սրբոց Միածնաէջ Մայր Տաճարում, երկրպագելու և աղոթք վերառաքելու առ Ասված Իջման Սուրբ Սեղանի առաջ՝ պատմության մեջ մի նոր և փառավոր էջ բացելով Հայ Առաքելական և Հռոմի Կաթոլիկ քույր Եկեղեցիների համագործակցության համար՝ 1700-ամյա մեր Եկեղեցուն, նրա զահակալին ու հավատացյալներին ցնծության և ուրախության մի նոր առիթ տալով: Այցելեց ոչ այլ կերպ, քան իր իսկ խոսքերով ասած՝ որպես մի ուխտավոր:

Հոբելյանագարդ այս տարին թեև ամբողջությամբ հագեցած էր 1700-ամյակի տոնակատարություններով, բայց առավել հանդիսավոր էր սեպտեմբեր ամիսը, քանի որ գլխավոր հանդիսությունները նախատեսված էին հենց այս ժամանակ՝ Մյուռոնօրհնություն, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծում և այլն: Ծրագրված արարողություններն իրենց կատարումը գտան սեպտեմբերի 21-ից 24-ը ընկած ժամանակահատվածում: Տոնախմբությունների համաժողովրդական ալիքը չհանդարտվեց, և միջազգային հանրության ուշադրությունը չնվազեց Հայաստանի և քրիստոնյա առաջին ժողովրդի նկատմամբ, այլ մի նոր ուժգնությամբ ծավալվեց Սրբազան Քահանայապետի այցելությամբ:

Հովհաննես-Պողոս Բ Պապի ինքնաթիռը Հայաստան վայրէջք կատարեց, ինչպես և ծրագրված էր, սեպտեմբերի 25-ին, ժամը 13.00-ին, «Զվարթնոց» օդանավակայանում, ուր Սրբազան Քահանայապետին դիմավորելու էին եկել Նմենայն Հայոց Հայրապետը, Հանրապետության Նախագահը, բարձրաստիճան հոգևորականներ և պետական պաշտոնյաներ: Ինքնաթիռից դուրս գալով Սրբազան Քահանայապետը խաչակնքեց և օրհնեց Հայաստան աշխարհը: Հայոց հող ոտք դնելուն պես Հռոմի Պապին սկուտեղի վրա մատուցվեց Հայաստանի հող, որը Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդը օրհնեց և համբուրեց, ըստ իր սովորության: Ապա նաև ընդխարեց հայկական հացն ու աղը՝ ի նշան բարեկամության և եղբայրության, որին հաջորդեցին զինվորական պատվո քայլերթը, ինչպես նաև հնչեցին Հայաստանի Հանրապետության և Վատիկանի օրհներգերը: Այնուհետև կառավարության, Հայաստանում հավատարմագրված դիվանագետների, ներկա հոգևորականների և լրագրողների առջև, հատուկ պատրաստված բեմի վրայից, Սրբազան Պապին ողջույնի խոսք հղեց Հանրապետության Նախագահը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Ձերդ Սրբություն,

Վեհափառ Տեր,

Սրբազան Հայրեր,

Հարգարժան հյուրեր,

Մեզ համար մեծ պատիվ է և ուրախություն Հայոց հողում հյուրընկալել Հովհաննես-Պողոս Երկրորդ Սրբազան Քահանայապետին: Հռոմի Պապի այցելությունն իրադարձություն է յուրաքանչյուր երկրի կյանքում, բայց այն մեզ համար ունի առանձնահատուկ արժեք ու նշանակություն: Սուրբ Աթոռի ողջ պատմության մեջ սա Հռոմեակաթոլիկական Եկեղեցու առաջնորդի առաջին այցն է Հայաստան:

Քրիստոնեության պատմությունը, որն ուղղակիորեն կապված է մարդկային քաղաքակրթության նվաճումների հետ, մեր ընդհանուր պատմությունն է: 17 հարյուրամյակների ընթացքում բազում փորձությունների միջով անցած մեր ընդհանուր հավատն ու արժեքները գրավականն են մեր հարաբերությունների ամրության և ջերմության: Ահա ինչու մենք լիահույս ենք, որ այս այցը պատմական է լինելու նաև Հայաստանի Հանրապետության և Վատիկանի գործակցության զարգացման ու խորացման առումով:

Ձերդ Սրբություն,

Դուք կանգնած եք եղել ակունքներում այն մեծ գործընթացների, որ տեղի ունեցան Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միության Հանրապետություններում՝ նշանավորելով մարդու և ժողովուրդների ա-

զարգության նոր դարաշրջան: Ձեր գործունեության համամարդկային ընդգրկումը, աշխարհում խաղաղության ու կայունության պահպանմանն ուղղված Ձեր ջանքերը ոգևորիչ են նաև մեզ համար:

Հայաստանի և Վատիկանի միջև արդեն ձևավորվել են գործակցության ամուր հիմքեր: Հիշում եմ արձագանքը Վատիկանում բացված «Հայաստան-Հռոմ» ցուցահանդեսի, որի կազմակերպման ու հաջողության մեջ մեծ ավանդ ունեցաք Դուք, Ձերդ Սրբություն:

Մենք մեծ խորհուրդ ենք տեսնում այն փաստի մեջ, որ այս այցը տեղի է ունենում Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների ընթացքում, երբ մեր ողջ ժողովուրդը վերակոչում է իր երախտավոր նախնիների հավատն ու կատարած մեծ գործերը: Գործեր, որոնք, հոգևոր վերածնունդ բերելով հայ ժողովրդին, միաժամանակ հարստացրին համաքրիստոնեական մշակույթի գանձարանը:

Քրիստոնեության մարդասիրական վեհ գաղափարները, նրանց հոգևոր ու բարոյական հզոր լիցքերը կենսունակ են բոլոր ժամանակներում: Արդի աշխարհում, երբ մարդկությունը վկան է դառնում ազգության հրեշավոր դրսևորումների, առավել քան թանկ են մեզ համար բարու, գեղեցիկի, եղբայրական սիրո համամարդկային արժեքները:

Տասը տարի առաջ վերածնվեց մեր անկախ պետականությունը, և այս օրերին նշում ենք մեզ համար այդ մեծ հոբելյանը: Նոր դարաշրջանում մենք պետականորեն վերաիմաստավորում ենք մեր պատմա-մշակութային ողջ ժառանգությունը և արժեքային համակարգը, որոնք խորապես թափանցված են քրիստոնեությամբ: Ավանդական արժեքների արդիական ընկալումը մեզ բերել է նույն հիմքերի վրա բարձրացած եվրոպական արժեքների որդեգրման: Հատկանիշներ, որ պաշտպանն են Աստծո մեծագույն պարգևի՝ մարդու և ազգի ազատության:

Հայաստանի աշխարհագրական դիրքի շնորհիվ մենք միշտ գտնվել ենք կրոնների և քաղաքակրթությունների շփման գծում: Այս իրողությունը և Հայոց Մխիթարի առկայությունը մեր առջև բացել են աշխարհաճանաչման նոր հորիզոններ, թելադրել լայնախոհ հայացք: Մենք հարստացրել ենք մեզ համերաշխության, հանդուրժողականության և համաձայնության բարի պտուղներով:

Ձերդ Սրբություն,

Մենք ողջունում ենք Վատիկանի և Հայ Առաքելական Եկեղեցու հարաբերությունների սերտացումը, որ հիմնված է բոլոր Եկեղեցիների փոխհարգացող կապերի բազմադարյա ավանդույթների վրա: Մեզ հուսավառում է նաև այդ հարաբերություններում իշխող էկումենիկ ոգին:

Բիբլիական Արարատի հովանու ներքո կրկին ողջունում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն: Դուք Ձեր ներկայությամբ առանձնահատուկ շուք եք հաղորդում Հայոց Մեծ Դարձի հոբելյանական տոնակատարություններին:

Բարի գալուստ:

Այնուհետև Սրբազան Քահանայապետին ուղղված բարիգալստյան ջերմ խոսք ասաց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը.

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ՋՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Ձերդ Սրբություն

Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ այսօր, հնագույն, բայց հավատով միշտ նորոգ Հայոց երկրում, սուրբգրական Արարատի դիմաց, ուրախություն ունենք ընդունելու Սուրբ Պետրոսի Աթոռի Գահակալին:

Մեր Եկեղեցիների պատմության մեջ առաջին անգամ է, որ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Հովվապետը ոտք է դնում ասպվածաշնչյան հինավուրց այս հողին:

Ձեր այցելությունը Հայաստանի Հանրապետություն հնարավոր եղավ, քանի որ այլևս անցյալ են խորհրդային ասպվածներժության անհույս ժամանակները: Հայոց պետությունն այսօր անկախ է և Հայոց Եկեղեցին՝ ազատ:

Մեր ժողովուրդը Ձեզ սիրով ապասում էր դեռ տարիներ առաջ, երբ Ձերդ Սրբության այցելությունը նախատեսված էր երջանկահիշատակ Մեր նախորդի՝ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրավերով: Պատմական և օրհնյալ այս պահին Մեր աղոթքն ու խոնարհումն ենք բերում հոգեկոչ Վազգեն Ա և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետերին, ովքեր նախանձախնդիր գտնվեցին հայ և Կաթոլիկ մեր երկու Եկեղեցիների հարաբերությունների սերտացման ու ամրապնդման գործում:

Ձերդ Սրբություն, Ձեր այցը Նոյ նահապետի երկիր նախախնամաբար իրականացավ ազգիս համար նշանակալի այս տարում, երբ համայն հայությունը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում խնդրությամբ տոնախմբում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700 և Հայաստանի ու Արցախի անկախ պետականության 10-ամյա հոբելյանները: Հրաշալի այս տոների հանդիսությունների օրերին Ձեր ներկայությունը Հայաստանում, մեր ժողովրդի կողքին, առանձնակի ուրախություն է մեզ համար: Գոհունակ հոգով ցանկանում ենք արձանագրել, որ Դուք ինչպես Սպիտակի երկրաշարժի աղետալի օրերին նեցուկ եղաք մեզ փորձության ժամին, նույնպես և այսօր մեզ հետ մասնակից եք մեր ուրախությանը:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

Այսօր Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետիդ ողջունելու են եկել մեր ժողովրդի բազմաթիվ բարեպաշտ զավակներ՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանում և ամբողջում գործող հոգևոր իրենց առաջնորդների: Այստեղ են նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչներ՝ բոլորը խանդավառ այն գիտակցությամբ, որ քրիստոնեական Եկեղեցիները, իբրև անդամներ Քրիստոսի մեկ մարմնի, միասին են իրենց առաքելության մեջ: Այս միխիթարիչ ու հուսապարգև իրողությունն ապրեցինք կակավին մի քանի օր առաջ, երբ Սրբալույս Մյուռոնի օրհնության և Երևանի Մայր եկեղեցու օծման արարողությունները առիթ ունենալով, քրիստոնյա Հայաստանի սիրո ու միաբանության իրավերը մեր հողում համախմբեց քրիստոնեական բոլոր Եկեղեցիների պատվիրակներին:

Աղոթենք միասնաբար, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, որ Ձեր այցելությունը առավել սերտացնի մեր Եկեղեցիների հարաբերությունները և սիրո շաղախով արդյունավորի մեր համագործակցությունը: Եվ թող Աստված հաճությամբ ընդունի և օրհնի Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրությունը՝ ի շահ Քրիստոսի Եկեղեցու զորության, ի փառս Աստծո. Ամեն:

Բարի եկաք նվիրական Հայաստան երկիր:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ՋՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Պարոն Նախագահ,

Վեհափառ Տեր,

Հայաստանի սիրելի բարեկամներ,

Շնորհակալություն եմ հայտնում ամենակալ Աստծուն, որ այսօր, առաջին անգամ լինելով, Հռոմի Եպիսկոպոսը գտնվում է հայ հողի վրա՝ այս հնամյա և սիրելի երկրում, որի մասին այսպես էր երգում Ձեր մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանը.

«Գիրգակներէն հորիզոնները մինչև
Կը կարաձգի մեր մայրութիւնը հողի»:*

Երկար ժամանակից ի վեր սպասեցի շնորհի և ցնծության այս պահին և հատկապես՝ սկսած Վատիկան կատարած Ձեր այցելությունից, Պարոն Նա-

---

* Մեջբերումը կատարված է *«Արտերուն հրաները»* բանաստեղծությունից [Խմբ.]:

խաչահ և Ձերդ Սրբություն Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Խորապես երախտապարտ եմ Ձեզ, Պարոն Նախագահ, բարիգալստյան Ձեր ազնիվ խոսքերի համար, որ ինձ ուղղեցիք Հայաստանի կառավարության և քաղաքացիների անունից: Շնորհակալություն եմ հայտնում նաև քաղաքացիական և զինվորական իշխանություններին, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական մարմիններին, որոնք ինձ այսօր բարի ժամանում մաղթեցին: Խոսքս Ձեզ ուղղելով, Պրն Նախագահ, գնահատանքս և բարեկամությունս հայտնում եմ ոչ միայն ձեր հայրենակիցներին, որոնք ապրում են մայր երկրում, այլ նաև աշխարհացրիվ միլիոնավոր հայերին, որոնք հավատարիմ են մնում իրենց ժառանգությանն ու ինքնությանը և այսօր իրենց հայրենիքին նայում են վերանորոգ պարծանքով և գոհունակությամբ: Նրանք նույնպես իրենց սրտերում կրում են Դանիել Վարուժանի կողմից արտահայտված միևնույն ապրումները,

«Հեշտ է մտքիս ընկղմիլ կապույտին մէջ լուսալիք,
Նաւաբեկիլ - թէ հարկ է - կըրակներուն մէջ վերին,
Գտնել ասպղեր նորաւոր, կորսուած հի՛ն հայրենիք՝
Ուրկէ ինկած հոգիս դեռ կու լայ կարօտն երթերին»:*

Ձերդ Սրբություն Գարեգին Կաթողիկոս, եղբայրական սիրով ի Տեր ողջագուրում եմ Ձեզ և Եկեղեցին, որը նախագահում եք: Առանց Ձեր քաջալերանքի՝ ես այժմ այստեղ չէի լինի, որպես ուխտավոր հոգևոր ուղևորության մեջ, որ գալիս է մեծարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քրիստոնեական կյանքի բացառիկ վկայությունն այսքան երկար դարերի ընթացքում և հատկապես քսաներորդ դարում, որը ձեզ համար եղավ սարսափի և փառապանքի աննկարագրելի ժամանակաշրջան:

Համայն Կաթոլիկ Եկեղեցին կիսում է Ձեր և բոլոր հայերի անհուն ուրախությունը՝ այս մեծապես սիրելյալ երկրում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով:

Ողջագուրում եմ Հայաստանի և մերձակա տարածաշրջանի Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս եղբայրներին և բոլոր հավատացյալներին՝ ուրախություն ունենալով հաստատելու ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի սիրո, ինչպես նաև մերձավորի և ձեր երկրի ծառայության մեջ:

Խորապես հուզվում եմ՝ մտածելով այս երկրում քրիստոնեական փառավոր պատմության մասին, որը, ավանդության համաձայն, իր սկզբնաղբյուրը գտնում է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզության մեջ: Հետագայում, Սուրբ Գրիգոր Լուսավորչի վկայության և գործունեու-

---

* Մեջբերումը՝ «Կայերու գիշեր» բանաստեղծությունից [խմբ.]:

թյան շնորհիվ. առաջին անգամ լինելով. քրիստոնեությունը դարձավ մի ամբողջ ազգի հավատը: Տիեզերական Եկեղեցու գործունեություններն ընդմիշտ հաստատելու են, թե ինչպես Հայաստանի բնակիչները եղան առաջինները, որպես ժողովուրդ, որոնք ընդունեցին մեր Տեր Փրկչ Հիսուս Քրիստոսի Ավետարանի շնորհը և ճշմարտությունը: Այդ հերոսական ժամանակներից սկսած՝ մեր Եկեղեցին երբեք չի դադարել Հայր Աստծո զովքը ներբողել, իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի մահվան և հարության խորհուրդը տոնախմբել և միսիթարիչ Սուրբ Հոգու օգնությունը հայցել: Դուք նախանձախնդրորեն պահում եք մեր բազմաթիվ մարտիրոսների հիշատակը, և իրոք՝ մարտիրոսությունը եղել է Հայ Եկեղեցու և ժողովրդի բնորոշ հատկանիշը:

Հայաստանի անցյալն անբաժանելի է իր քրիստոնեական հավատից: Հիսուս Քրիստոսի Ավետարանի հանդեպ հավատարմությունը հավասարապես նպաստելու է ապագային, որն ազգը կերտում է անցյալ դարի ավերածություններից հետո: Պարոն Նախագահ, սիրելի բարեկամներ, դուք տակավին նոր տոնախմբեցիք մեր անկախության տասնամյակը: Խոսքը վերաբերում է դեպի մի արդար և ներդաշնակ հասարակությանն ուղղված ճանապարհին կատարված մի նշանակալի քայլի, որում բոլորը կարող են լիովին զգալ իրենց ինչպես սեփական տանը և կարող են հարգված տեսնել իրենց արդար իրավունքները: Բոլորը և հատկապես նրանք, ովքեր հանրապետության պատասխանատուներն են, հասարակաց բարիքի համար այսօր կանչված են արդարության և համերաշխության մեջ իրական հանձնառության՝ նախադասելով ժողովրդի առաջադիմությունը մասնակի որևիցե այլ շահից: Եվ սա ճշմարիտ է նաև տարածաշրջանի մակարդակով խաղաղության հրատապ որոնումի հարցում: Խաղաղությունը կարող է կերտվել միմիայն փոխադարձ հարգանքի, տարբեր հասարակությունների միջև հարաբերություններում գործադրված արդարության և հզորների կողմից ցուցաբերված վեհանձնության հաստատուն հիմքի վրա:

Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ, և սա ցույց է տալիս ձեր վճռականությունը՝ հաստատակամորեն աշխատելու և քաջությամբ իրագործելու պետության հաստատությունների ժողովրդավար բարեկարգությունները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիների մարդկային և քաղաքացիական իրավունքների հանդեպ հարգանքը երաշխավորելու համար: Սրանք դժվար ժամանակներ են, բայց նաև ժամանակներ, որ մարտահրավեր են կարդում ազգին և նրան ներշնչում քաջություն: Յուրաքանչյուր ոք պետք է հաստատակամորեն որոշի սիրել իր երկիրը և զոհաբերել իր անձը նրա իրական բարգավաճմանը, ինչպես նաև նրա ժողովրդի հոգևոր ու նյութական բարօրությանը:

Աստված թող ազատությամբ, բարեկեցությամբ և խաղաղությամբ օրհնի հայ ժողովրդին:

Ողջույնի խոսքերի փոխանակությունից հետո Հռոմի Պապը, Վեհափառ Հայրապետի, իր շքախմբի և հյուրերի ուղեկցությամբ, ուղևորվեց Մայր Աթոռ, ուր նրան էին սպասում Մայր Աթոռի հոգևորականաց դասը, ինչպես նաև բազմահազար հավատացյալ ժողովուրդ, որոնք եկել էին ականատես ու վկան լինելու պատմական ու պատմակերտ այդ օրվան, ներկա գտնվելու մեր երկու Եկեղեցիների միջև զարգացող մի առողջ երկխոսության, որը բարեկամության նոր, ավելի անմիջական ու ջերմ շերտ պիտի հաղորդի քրիստոնյա երկու հնագույն Եկեղեցիներին: Երկու Հովվապետերը մեքենաներից իջան Մայր Աթոռի անմիջապես դարաձքում ու «Հրաշափառ» և «Ուրախ լեր» շարականների երգեցողության ներքո մուտք գործեցին Մայր Տաճար, ուր տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողությունը: Արարողությունը սկսվեց Համապատասխան պատշաճ սաղմոսների ընթերցմամբ, որից հետո Սրբազան Քահանայապետը կարդաց «Ի մէջ դաճարիս...» աղոթքը, որին անմիջապես հետևեց «Էջ Միածին ի Հօրէ» շարականը: Այնուհետև ներկա հավատացյալ ժողովրդին իրենց օրհնության խոսքն ուղղեցին երկու եկեղեցապետերը:

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հերդ Սրբություն

Գոհություն և փառք ենք մատուցում Բարձրյալին, որ բացվող նոր հազարամյակում երկրորդ անգամ Մենք Ձեզ հետ միասնաբար աղոթք ենք առաքում առ Աստված հանուն աշխարհում խաղաղության, ժողովուրդների մեջ սիրո ու բարեկամության արգասավորման: Այսօր Տերը մեզ ունկնդիր է 1700-ամյա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Սեղանի առջև, որ Աստծո հետ մեր ժողովրդի համահավաք հանդիպման խորին խորհուրդ Սրբություն Սրբոցն է:

301 թ. այստեղ՝ Արարատի դիմաց հայոց մեծ խուստովանողի՝ Սուրբ Գրիգոր Աստվածատես Հայրապետի հայացքի առջև իջավ Քրիստոս: Հավատքով բժշկություն գտած Տրդատ թագավորի գլխավորությամբ, ազնվազարմ տիկնանց, նախարարների ու զորականների հետ մեր ժողովուրդը այստեղ Տաճար կառուցեց Արարատի լանջից բերված քարերով՝ կամարելով Միածնի Էջքի վայրը, որտեղից Ավետարանի Լույսը տարածվեց ու առատացավ ողջ Հայաստանում՝ նորոգելով Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների ձեռքով վառված կանթեղները հավատի: Հարության հավատով իմաստավորվեց հայ ժողովրդի կյանքի ընթացքը: Դարերի մեջ ազատության ու արդարության սերը, խաղաղության ձգտումն ու աղոթքը եղան հայոց պետության ու հայ ժողովրդի նկարագիրը, գոյության ու հավերժության խորհուրդը: Արդարև, առաքելություն է Սուրբ Էջմիածինը, ինչպես բնորոշել են մեր Հայրապետները. խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք առաջնորդող առաքելություն, ամեն հայի հոգում

Աստծո Էջքը պատկերագրող և այս արժեքով համայն հայոց միավորող առաքելություն:

4-րդ դարից ի վեր այստեղ է հաստատվել Ամենայն Հայոց Կաթողիկոսության նստավայրը: Այստեղից են Հայոց Հայրապետները մեր ժողովրդին առաջնորդել դեպի Ավարայր ու Սարդարապատ՝ վասն հավատի ու հայրենյաց մարտը մղելու: Այստեղից է երջանկահիշատակ Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետն օրհնել 88-ի մեր ազատամարտը Արցախյան և 91-ի անկախ Հանրապետությունը Հայոց:

2001 թվականին, երբ մեր ժողովուրդը վերստին անկախ Հայաստանում, Արցախում և Սփյուռքում տոնախմբում է իր համազգային մկրտության և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը, իր սրբությամբ ու նվիրականությամբ, պատմական ու ազգային նշանակությամբ Սուրբ Էջմիածինն է համայն հայոց հոգում և համայն հայոց հոգին է Սուրբ Էջմիածնում, քանզի Սուրբ Էջմիածնով է եղել յուրաքանչյուր հայորդի որդեգիր Աստծո:

Մեզ համար մեծ ուրախություն և միխիթարություն է, որ Ձերդ Սրբությունը ընդունեց Մեր հրավերը: Այսօր, երբ Հայ Եկեղեցին հուսատատ օրեր է ապրում Հայաստանի նոր անկախության դրոշի ներքո, Դուք հայոց հոգևոր Կենտրոնում՝ Սուրբ Թադեոսի և Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռում, ի Քրիստոս սիրով եղբայրաբար մասնակից եք մեր հոբելյանական տոնին և աղոթակից մեզ:

Եկեք միասնաբար հայցենք Բարձրյալից, որ Աստվածային օրհնությամբ զորացնի աշխարհում Հույսն ու Հավատը և առաջնորդի բոլոր ժողովուրդներին դեպի խաղաղության ու բարօրության ապահով հանգրվաններ: Թող անխախտ լինի ու բարի արգասիքներ տա եղբայրական սերը հավատակից քրիստոնյա Եկեղեցիների՝ ի փառս Աստծո Ամենակալին և հուրախություն համայն հավատացելոց:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. ամէն»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԵՅՐ ՏԵՂԱՐՈՒՄ

Մեծարգո եղբայրներ,

Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Շատ սիրելի եղբայրներ և քույրեր ի Քրիստոս.

Թող բոլորի վրա իջնի Աստծո օրհնությունը:

Ուխտավորի իմ քայլերն ուղղորդեցին ինձ Հայաստան՝ գովերգելու Աստծուն Ավետարանի լույսի համար, որ տասնյոթ դար առաջ ստիպվեց այս երկրում, այս վայրից, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչն ստացավ Աստծո Որդու

երկնային տեսիլքը՝ լույսի կերպարանքով: Սուրբ Էջմիածինը խորհրդանշում է որպես խորհրդանիշը Հայաստանի հավատքի՝ Աստծո Միածին Որդու հանդեպ, Որը երկնքից իջավ և մեռավ՝ փրկելու հանար մեզ մեղքերից, և Որի հարությունը հանդիսավոր կերպով բացում է նոր երկինքը և նոր երկիրը: Բոլոր հայերի համար Էջմիածինը մնում է այս միևնույն հավատքի հարատևության գրավականը՝ ի հեճուկս երեկվա և այսօրվա կրած տառապանքների և արյունահեղությունների, որոնք ձեր բազմաչարչար պատմությունը պահանջեց որպես ձեր հավատարմության գին: Այս վայրում փափագում եմ վկայել, որ ձեր հավատը մեր հավատն է Հիսուս Քրիստոսի հանդեպ, ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ. «Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն» (Եփ. Դ 5):

Այստեղ՝ Ս. Էջմիածնում, ուրախությամբ լի հոգով փոխադարձում եմ խաղաղության համբույրը, որ Ձերդ Սրբությունն ինձ տվեց անցյալ նոյեմբերին Պետրոս առաքյալի դամբարանի մոտ՝ Հռոմում: Մեծ հուզմունքով ողջունում եմ Ձեզ և Հայ Առաքելական սիրելի Եկեղեցու արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, վանականներին, քահանաներին և հավատացյալներին: Որպես Հռոմի Եպիսկոպոս՝ հիացումով ծնրադրում եմ ձեր ժողովրդի մկրտության երկնային պարգևի առջև և հարգանք եմ մատուցում այս տաճարին՝ ազգի խորհրդանշանին, որը սկզբից ենթ. Ս. Գրիգորի տեսիլքի համաձայն, իր հիմնասյուների վրա կրում է մարտիրոսության նշանը:

Շնորհակալություն, Ձերդ Սրբություն, Ձեր տաճարն ինձ բարի գալուստ մաղթելու համար: Սա առաջին անգամ է, որ Հռոմի Պապը որևէ մեկ երկրում իր կեցության ամբողջ ընթացքում բնակվում է իր մի եղբոր տանը, որը նախագահում է Արևելքի փառապանծ մի Եկեղեցում, և նրա հետ կիսում է ամենօրյա կյանքը միևնույն հարկի տակ: Շնորհակալություն սիրո այս նշանի համար, որ ինձ մեծապես հուզում է և բոլոր կաթողիկների սրտերին խոսում խորին բարեկամության և եղբայրական սիրո մասին:

Միտքս այս պահին սլանում է դեպի Ձեր երջանկահիշատակ նախորդները: Խոսքս վերաբերում է Վազգեն Ա Կաթողիկոսին, որը շատ աշխատեց, որպեսզի իր ժողովուրդը կարողանա տեսնել ազատության խոստացված երկիրը, և վերադարձավ Աստծո մոտ ճիշտ այն ժամանակ, երբ անկախությունը հասավ: Խորհում եմ Գարեգին Ա անմոռանալի Կաթողիկոսի մասին, որն ինձ համար եղբոր նման եղավ: Նրան այցելելու իմ ծրագիրը, երբ, գնալով վատթարանում էր նրա առողջությունը, հնարավոր չեղավ իրագործել, թեև դրա հույսն ունեի իմ ամբողջ սրտով: Այդ փափագը գոհացում է ստանում այսօր այստեղ Ձերդ Սրբության հետ, հավասարապես սիրելի և թանկագին եղբայր: Անհամբեր սպասում եմ հաջորդ օրերին, երբ Ձեզ հետ ձեռք ձեռքի հանդիպելու եմ հայ ժողովրդին, և միասնաբար շնորհակալու-

թյուն ենք հայտնելու ամենակալ Աստծուն՝ի Քրիստոս հավատարմության տասնյոթ դարերի համար:

Տիսուս Քրիստոս՝ Տեր և Փրկիչ, որոնք մեզ ըմբռնել հրաշալի ճշմարտությունը, որ Ս. Գրիգորը լսեց այս վայրում. այն է, որ Քո սիրո դռներն ամբողջապես բաց են Քո արարածների դիմաց, ... որ լույսը, որ լցնում է երկիրը, Քո Ավետարանի քարոզությունն է:

Տեր, արժան արա մեզ այս օրերի շնորհին: Ընդունիր մեր միասնական աղոթքը, ընդունիր համայն Եկեղեցու երախտագիտությունը հայ ժողովրդի հավատքի համար: Ներշնչիր մեզ խոսքեր և արարքներ, որոնք արտահայտեն եղբոր սերը եղբոր հանդեպ: Սա Քեզնից խնդրում ենք բարեխոսությամբ Ս. Աստվածամոր՝Հայաստանի Թագուհու, և Ս. Գրիգորի, որի խոսքն այստեղ հայտնվեց լույսի կերպարանքով. ամեն:

Այնուհետև երկու եկեղեցապետերը «Պահպանիչ» աղոթքով օրհնեցին ներկա ողջ հավատացյալ բազմությանը և ուղղեցին իրենց քայլերը դեպի Մայր Տաճարի շրջափակ, ուր հանգչում են երջանկահիշատակ մեր նախորդ Հայրապետերի աճյունները՝ կանգ առնելու Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետերի շիրիմների առջև, հոգեհանգստյան աղոթք բարձրացնելու առ Աստված երանաշնորհ երկու Հայրապետերի հոգիների հանգստության համար, ինչպես նաև հարգանքի տուրք մատուցելու միջազգային և համաքրիստոնեական ճանաչում ու հարգանք վայելած մեծագործ այս Կաթողիկոսների շիրիմներին:

Այնուհետև թափորը շարժվեց դեպի Վեհարան, ուր պետք է իր ողջ այցելության ընթացքում հյուրընկալվեր Հռոմի Քահանայապետը: Մի փոքր հանգիստ առնելուց հետո, ժամը 18.00-ին, Վեհարանում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ-ի առանձնազրույցը, որից հետո զրույցին միացավ նաև Շառլ Ազնավուրը: Հանդիպման ավարտին երկու Հայրապետերը միմյանց ներկայացրեցին իրենց շքախմբերը, նվերներ փոխանակեցին և լուսանկարվեցին:

26 սեպտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 10.00-ին Սրբազան Քահանայապետը, ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուղևորվեց դեպի Երևան՝ քաղաքավարական այց կատարելու ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Հանդիպումը տեղի ունեցավ ՀՀ Նախագահի նստավայրում: Հանդիպման ավարտին նրանց միացավ նաև ՀՀ Նախագահի ընտանիքը: ՀՀ Նախագահը և Սրբազան Քահանայապետը նվերներ փոխանակեցին: Նախագահը Հռոմի Քահանայապետին նվիրեց Էդվարդ Շախինյանի «Խորհրդավոր ընթրիք» բրոնզե արձանը և Հաղթանակ Շահումյանի «Հանդիպում անցյալի, ներկայի և գալիքի հետ» գեղանկարը, իսկ Նորին Սրբությունը Նախագահին նվիրեց Փրկչական պատկերով մի խճանկար:

Նախագահին հրաժեշտ տալուց հետո, պատվիրակությունն ուղևորվեց դեպի Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ: Ծքախմբին միացան նաև արտգործնախարար Վ. Օսկանյանը, Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը և Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդվարդ Նալբանդյանը: Սրբազան Քահանայապետի այցով Եղեռնի հուշահամալիր, մեկ անգամ ևս համաշխարհային հանրության ուշադրությունը բևեռվեց 1915 թ. հայկական ցեղասպանության վրա: Սրբազան Քահանայապետը Ծիծեռնակաբերդի Լռության Պատին տեղադրեց Բենեդիկտոս 15-րդ Պապի հուշաքարը, ինչպես նաև Ցեղասպանության զոհերի թանգարանին փոխանցեց առլթանին ուղղված նրա նամակը, որի մեջ Հռոմի Եկեղեցապետը մեղադրում է երիտթուրքերին հայկական ջարդերի համար: Հայոց սրբազան այս ուխտագնացությունում կատարվեց հոգեհանգստյան պաշտոն, ուր Հռոմի այսօրվա Եկեղեցապետը իր աղոթքը մատուցեց առ Աստված, 1915 թ. անմեղ զոհերի հիշատակին.

Ո՛վ Դատավոր ողջերի և մեռածների, ողորմի՛ր մեզ:
Լսի՛ր, ով Տեր, ողբը, որ բարձրանում է այս վայրից՝
Մեծ եղեռնի վիհերից, կոչը մեռյալների,
Անմեղ արյան աղաղակը, որ աղերսում է Աբելի արյան պես,
Ինչպես Ռաքելը, որ լալիս էր իր որդիների համար, որովհետև այլևս չկան:
Լսի՛ր, ո՛վ Տեր, Հռոմի Եպիսկոպոսի ձայնը,
Որ արձագանքում է իր նախորդներից մեկի՝ Բենեդիկտոս ԺԵ Պապի
աղաչանքին,
Երբ 1915 թվականին ձայն բարձրացրեց ի պաշտպանություն
«Ծանրորեն վշտահար ու բնաջնջման սեմին հասած հայ ժողովրդի»:
Նայիր այս երկրի ժողովրդին,
Որ այսքան երկար ժամանակից ի վեր իր վստահությունը Քեզ վրա դրեց,
Որ անցավ մեծ տանջանքների միջով
Եվ Քո հանդեպ հավատարմության մեջ երբեք չթերացավ:
Սրբի՛ր ամեն արտասուք նրա աչքերից
Եվ այնպես արա, որ քսաներորդ դարի իր օրհասը
Տեղի տա կյանքի հունձքին, որը տևի առհավետ:
Հայ ժողովրդին հասցված զարհուրելի բռնությունից խորապես խոովված՝
Մենք մեզ սարսափահար հարց ենք տալիս,
Թե ինչպե՞ս աշխարհը տակավին կարողանում է
Ճանաչել այսքան անմարդկային խոտորումներ:
Բայց Քո խոստման հանդեպ մեր հույսը վերանորոգելով, ո՛վ Տեր,
Ենչեցյալների համար հայցում ենք հանգիստ՝ խաղաղության մեջ,
Որ անվախճան է,
Եվ տակավին բաց վերքերի համար՝ բժշկություն՝ շնորհիվ
Սիրուդ զորության:
Մեր հոգին անձկագին փափագում է Քեզ, Տե՛ր, ավելի,

ԽՈՆԱՐՀՈՒՄ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ԱՊՐԻԼՅԱՆ ԲՑՈՒՐԱՎՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌՋԵՎ

ԽՈՆԱՐՀՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՎ

ԼՈՒՍԱԿՈՐՇԻ ԿԱՆՔԵՂԵՑԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԼՈՒՅՍԻ ՓՈԽՍՏՈՒՄԸ

Քան գիշերապահը այգաբացին,
Մինչ սպասում ենք խաչի վրա իրագործված փրկության լրմանը,
Զատկի լույսին, որն արշալույսն է անհաղթելի մի կյանքի,
Նոր Երուսաղեմի փառքին, ուր մահն այլևս չի լինի:
Ո՛վ Դափավոր, ողջերի և մեռածների, ողորմի՛ր մեզ:
Տե՛ր, ողորմի՛ր, Քրիստո՛ս, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր:

Այս ընթացքում հայ ազգի մեծանուն զավակ, մեծ Շնորհալին՝ Շնող Ագնավուրը, ամենքին հիացրեց իր «Ավե Մարիա» երգի սքանչելի կատարմամբ: Այցելության ավարտին երկու Եկեղեցապետերը վերադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր ժամը 13.00-ին տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ եպիսկոպոսների և կարդինալների մասնակցությամբ:

Օրվա երկրորդ մասը ոչ պակաս հագեցած էր և լի պատմական նշանակություն ունեցող դեպքերով: Ժամը 18.00-ին երկու Եկեղեցապետերը ուղևորվեցին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, ուր պետք է տեղի ունենար էկումենիկ արարողություն: Դեռ ժամեր առաջ արդեն սկսվել էր ժողովրդի հոծ բազմության հոսքը դեպի Մայր եկեղեցի: Բոլորը ցանկություն ունեին տեսնել երկու Հովվապետերին. միասնաբար, միևնույն գաղափարին ու առաքելությանը լծված երկու մեծ Հայրապետներին, համաքրիստոնեական միասնության ու փոխըմբռնման երկու մեծ ջատագովներին, որոնք համատեղ աղոթք պետք է բարձրացնեին առ Աստված՝ ողջ աշխարհի խաղաղության, եղբայրասիրության ու համայն քրիստոնյաների միասնության և քրիստոնեական Եկեղեցիների անսասանության համար:

Արարողությանը ներկա էր հանրապետության ղեկավարությունը, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, ինչպես նաև բազմաթիվ հյուրեր արտերկրից: Արարողության ընթացքում օրհնվեցին մեր հավատո Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները և տեղադրվեցին զավթի առաջամասում՝ մուտքի դիմաց: Հետայսու սրբասուրբ այդ նշխարները պիտի մնան ի տես ժողովրդյան՝ ասփվածային լույսի ու օրհնության մի նոր աղբյուր դառնալով մեր ազգի հավատավոր զավակների համար: Արարողության ընթացքում երկու Քահանայապետերը իրենց ողջույնի խոսքն և ուղերձը հղեցին ներկա ժողովրդին.

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Հերոդ Սրբություն,

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր.

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի նշանակալի օրերից մեկն ենք ապրում այսօր, քանզի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու իմաստնազարդ Սրբազան Հովվապետի հետ Երևանի նորակառույց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում միասնաբար աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հանուն մեր Եկեղեցիների

պայծառության և նրանց եղբայրական սիրո հարատևության, հանուն համայն աշխարհում խաղաղության և ի մարդիկ հաճության:

Ձերդ Սրբություն, մեկ անգամ ևս Քրիստոսադրոշմ համույն մեր ժողովրդի անունից եղբայրական սիրով ողջունում ենք Ձեր և կաթոլիկ մեր եղբայրների ու քույրերի ներկայությունը Հայաստանում: Մեզ համար խորհրդանշական է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մեր Հայրապետի անունը կրող գեղեցկակառույց այս եկեղեցու սուրբ օծմանը հաջորդող արարողությունը հավատակից եղբայրների էկումենիկ աղոթք է, որ Հայոց Սուրբ Գրիգորի բարեխոսությամբ միահյուսել է մեր հայցը առ Աստված: Հոգու Մեր հայացքի առջև այս պահին հավատի մեծ խոստովանող Գրիգոր Լուսավորչի՝ համաքրիստոնեական սրբի լուսապատկերն է, ում կյանքը փառաբանություն եղավ Աստծուն: 13 տարի մահվան գուրից դեպի Աստված բարձրացող նրա աղոթքով երկնքի դռները բացվեցին հայ ժողովրդին, և Աստված Իր Էջքով օրհնեց հայոց հողը: Մեր հայացքի առջև հավատով բժշկություն գտած Տրդատ Մեծ թագավորն է՝ խաչի Լույսին բացած քաջ զորականի իր զորեղ հոգին: 17 դարերի հեռվից մեր հայացքի առջև Արածանիի ջրերում մկրտվող 301 թվականի Հայաստանն է՝ եկեղեցի դարձած: Դիրավի, դժոխքի դռներն անգամ չհաղթեցին Հայոց Եկեղեցին, որ դարերի մեջ համախ է ըմպել մահաբեր փորձությունների դառնության բաժակը, բայց Հարության հավատքով ապրել ու ապրում է:

Գոհություն Բարձրյալին և ծերաղիր երկրպագություն, որ պարգևեց ազգիս Սուրբ Թադեոս և Բարդողիմեոս, Սուրբ Գրիգոր պսակավոր Լուսավորիչներ, ովքեր դեպի Աստված և Հարություն առաջնորդեցին հայ ժողովրդին:

Գոհություն Աստծուն Ամենակալին, որ անցնող դարասկզբին եղեռն վերապրած մեր ժողովուրդը տոնախմբում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը և Հայաստանի ու Արցախի անկախության 10-ամյակը:

Ձերդ Սրբություն,

Մեր ժողովուրդը երջանիկ ու միսիթարված է այն գիտակցությամբ, որ Հայ Եկեղեցու մեծ հոբելյանը համաքրիստոնեական իր նշանակությամբ տոնվում է քրիստոնեական Եկեղեցիների կողմից, նաև՝ Հռոմեական Կաթոլիկ հզոր Եկեղեցու ավանդաշատ սուրբ հարկից ներս:

Մեր ժողովուրդը երախտագետ է Ձերդ Սրբությանը, որ ի նշան մեր Եկեղեցիների անխախտ եղբայրության, Վատիկանում կազմակերպվեց հայ հոգևոր արվեստի ընդարձակ ցուցադրություն, որը բազմահազար այցելուների ներկայացրեց քրիստոնյա հայ ժողովրդի հոգու, մտքի ու ձեռաց՝ հավատով կերտված գործերը: Այսօր տեղին է հիշել նաև, որ Կաթոլիկ Եկեղեցին Ձեր գլխավորությամբ Հայ Եկեղեցուն փոխանցեց հավատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարները՝ որպես թանկ նվեր մեր տոնի նա-

խօրյակին: Մենք շնորհակալ ենք Վատիկան Մեր պաշտօնական այցերի ընթացքում Ձերդ Սրբության ցուցաբերած ջերմ հյուրընկալության համար: Մենք գիտենք նաև, որ Ձեր քարոզներում և ուղերձներում համախ եք հիշատակում Հայոց Մեծ Դարձի 1700-ամյա հոբելյանը և կարևորում նրա համաքրիստոնեական նշանակությունը:

Քրիստոնեական իր սուրբ հավատի համար բազմիցս հալածված հայ ժողովուրդը երախտապարտ է Ձերդ Սրբությանը՝ Հայոց Մեծ եղեռնը ճանաչելու և դատապարտելու Ձեր դիրքորոշման ու կոչի համար: Անպարակույս է, որ չարիքի մերժումը պիտի իրականանա նախ մարդկային հոգիներում, որպեսզի իսպառ վերանա նաև մարդկային հարաբերություններում, հասարակական կյանքում, ազգերի ու պետությունների հարաբերություններում: Մենք հիացած ենք Ձեր անհոգնաբեկ շրջագայություններով, որ ձեռնարկվում են հանուն ժողովուրդների միջև փոխհասկացողության ու բարի կամեցողության զորացման:

Արդարև, աշխարհում դեռ շատ են բռնություններն ու անարդարությունները, բազում՝ մոլորությունները, որոնց դեմ հանդիման՝ քրիստոնեական Եկեղեցիները առավել զգում են միմյանց աջակցության ու ջանքերի մեկտեղման անհրաժեշտությունը:

Ձերդ Սրբության հետ քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությունը սերտացնելու ջերմ ջատագովներ էին Մեր նախորդ լուսահոգի Հայրապետները՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսները, ովքեր հիմնաքարերը դրեցին նորակառույց այս եկեղեցու: Մեզ համար այսօր բազմակի ուրախություն է Ձերդ Սրբությանը ընդունել այս Սուրբ Տաճարում, որը հայոց ազատության օրհնյալ երկնքի ներքո վկայությունն է մեր հավատի կենդանության և առ Աստված մեր Ուխտի նորոգության:

Մենք մնում ենք շարունակողը քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությանն ուղղված Մեր նախորդ Հայրապետների քայլերի, քանզի Աստված «Եւ մեզ զպաշտօնն հաշտութեան» (Բ Կորն. 5. 18): Սիրո ու համերաշխության մեջ է մարդկության ապագան: Աղոթենք, որ մեր բոլոր գործերում հաղթանակի Քրիստոսի Սերը: Աղոթենք, որ Ամենախնամ Աստված զորացնի և զորակից լինի մեզ բոլորիս մեր պարտքի մեջ և օրհնի բոլոր բարի գործերը՝ ի շահ աշխարհի խաղաղության ու ապահովության, նրա շենացման ու բարօրության:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հաստատունության, պետությունների ու բոլոր ժողովուրդների համերաշխ փոխհարաբերության համար: Թող առաքելապատիվ Հայոց Սուրբ Գրիգորի բարեխոսությամբ, Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի հոգևորոց խորհրդով Երևանի Մայր եկեղեցին միշտ լինի սիրո, եղբայրության ու համագործակցության ոգու հանդիպավայր:

Մենք հավատում ենք, որ երրորդ հազարամյակում իր միասնականությամբ առավել զորավոր է լինելու Քրիստոսի Մեկ Ընդհանրական Առաքելական և Սուրբ Եկեղեցին՝ հանուն իր ապրվածահաստատ փրկագործական առաքելության:

Ձերդ Սրբություն, զոհունակ սրտով Ձեզ ենք փոխանցում Հռոմում Ձեր կողմից Մեզ հանձնված մեր հավատի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարները, որպեսզի սուրբ մասունքներով Ձեր օրհնությունը բերենք բարեպաշտ ժողովրդին:

Թող Տիրոջ Սերը, Շնորհը և Խաղաղությունը լինի մեզ հետ այսօր և ընդմիշտ. ամեն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԽՈՍՔԸ

***«Որքան բարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին»** (Սաղմ. ՃԼԲ 1):*

Թող զովյալ լինի Հիսուս Քրիստոսը:

Անցյալ կիրակի Ձերդ Սրբությունը և Էջմիածնի համայն կաթողիկոսությունն ուրախություն ունեցան օծելու Ս. Գրիգոր Լուսավորիչ այս նորակառույց տաճարը՝ որպես արժանավայել հուշարձան մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ տասնյոթ դարերի Հայաստանի հավատարմության: Այս վայելչագեղ սրբավայրը վկայում է ձեր հայրերից ավանդված հավատը և մեզ բոլորիս խոսում հույսի մասին, որն այսօր հայ ժողովրդին մղում է վերանորոգ վստահությամբ և քաջարի վճռականությամբ նայելու ապագային:

Ինձ համար Ձերդ Սրբության հետ այս էկումենիկ արարողությանը նախագահելն անձնական ուրախության մեծ աղբյուր է: Կարծես շարունակությունն է անցյալ տարի Հռոմի Ս. Պետրոս Մայր տաճարում կատարված մեր հասարակաց աղոթքի: Այնտեղ միասնաբար հարգանք մատուցեցինք Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքներին, և Տերն այսօր մեզ շնորհում է նույնը կրկնել այստեղ՝ Երևանում: Ողջագուրում եմ Ձերդ Սրբությանը եղբայրական մինչև ոսկրերս, որով Դուք ինձ ողջունեցիք Հռոմ կատարած Ձեր այցի ընթացքում:

Երախտապարտ եմ հանդիսավորության մեծարգո Նախագահին՝ այս էկումենիկ հանդիպմանն իր ներկայության համար՝ որպես նշան մեր հասարակաց համոզվածության, որ ազգը ծաղկուն ու բարգավաճ է լինելու՝ շնորհիվ իր բոլոր հաստատությունների փոխադարձ հարգանքի և համագործակցության: Այս պահին միտքս ուղղվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Մ. Արամ Ա-ին, ինչպես նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարքներին. Տիրոջ սիրով առաքում եմ նրանց իմ ողջույնը: Սրտանց ողջունում եմ քաղաքացիական և եկեղեցական բոլոր մարմինների

հարգելի անդամներին և այս երեկո այստեղ ներկայացված համայնքներին:

Երբ Ս. Գրիգորի քարոզության շնորհիվ Տրդատ Գ արքան դարձի եկավ, մի նոր լույս ծագեց հայ ժողովրդի տնական պատմության մեջ: Հավատի ընդհանրականությունն անբաժանելիորեն միացավ ձեր ազգային ինքնության հետ: Քրիստոնեական հավատը մնայուն կերպով արմատացավ այս երկրում՝ Արարատ լեռան շուրջը ժողովված, և Ավետարանի խոսքը խորապես ազդեց հայ ժողովրդի լեզվի, ընտանեկան կյանքի, մշակույթի և արվեստի վրա:

Իր ուրույն ինքնությունը պահպանելով և զարգացնելով հանդերձ՝ Հայաստանյայց Եկեղեցին չվարանեց քրիստոնյա այլ ավանդությունների հետ երկխոսության մեջ հանձնառու լինել և նրանց հոգևոր ու մշակութային ժառանգությանը հասանել: Սկզբից ևեթ արդեն ոչ միայն Սուրբ Գիրքը, այլ նաև աստված, հույն և լատին հայրերի գլխավոր գործերը հայերենի թարգմանվեցին: Հայկական ծեսն իր յուրահատուկ ներշնչումը քաղեց Արևելքի և Արևմուտքի Եկեղեցու ծիսական ավանդություններից: Շնորհիվ հոգու այս բացառիկ բացվածքի՝ Հայաստանյայց Եկեղեցին իր պատմության ընթացքում յուրահատուկ կերպով զգայուն է եղել քրիստոնյաների միության հարցին: Սուրբ Հայրապետներ ու վարդապետներ, ինչպիսիք էին Սուրբ Սահակ Պարթևը, Բարգեն Ողմանեցին, Զաքարիա Զագեցին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Ստեփանոս Սալմաստեցին, Հակոբ Ջուղայեցին և ուրիշներ, քաջ ճանաչված էին Եկեղեցու միության նախանձախնդրությունը ունենալու համար:

Բյուզանդիո կայսերն ուղղած իր նամակում Ներսես Շնորհալին բնութագրում է էկումենիկ երկխոսության սկզբունքները, որոնք ոչինչ չեն կորցրել իրենց կարևորությունից: Իր բազմաթիվ հայտնատեսություններից նա պնդում է այն իրողության վրա, որ միության փնտրտուքը պարտականությունն է ամբողջ հասարակության և չի կարելի թույլատրել, որ Եկեղեցիների միջև ստեղծվեն ներքին բաժանումներ: Սրանից բացի, նա ուսուցանում է, որ անհրաժեշտ է հիշողությունների բուժումը՝ հաղթահարելու համար անցյալի վիրավորանքի զգացումներն ու նախապաշարումները, ինչպես նաև հարկավոր է փոխադարձ հարգանքը և հավասարության զգացումը խոսակիցների միջև, որոնք ներկայացնում են համապատասխան Եկեղեցիները: հուսկ, նա ասում է, որ քրիստոնյաները պետք է ունենան ներքին խոր համոզում, որ միությունը էական է ոչ թե ռազմավարական առավելության կամ քաղաքական շահի համար, այլ Ավետարանի քարոզության օգուտի համար, ինչպես հրամայում է Քրիստոսը:

***«Որքան բարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին»** (Սաղմ. ՃԼԲ 1): Երբ 1970 թվականին Հովհաննես Զ Պապը և Վազգեն Ա Կաթողիկոսը փոխանակեցին խաղաղության համբույրը, ծնունդ տվին եղբայրական հարաբերությունների մի նոր դարաշրջանի՝ Հռոմի Եկեղեցու*

և Հայաստանյայց Եկեղեցու միջև: Նրանց հանդիպումները շուտով հաջորդեցին ուրիշ կարևոր այցեր: Ես ինքս իսկապես ուրախ հիշատակներ ունեմ Նորին Սրբություն Գարեգին Ա-ի Հռոմ կատարած այցելություններից՝ նախ որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, ապա որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Սկսած այն ժամանակից, երբ որպես դիտորդ մասնակցեց Վատիկանի Բ Տիեզերական ժողովին, Գարեգին Ա Կաթողիկոսը երբեք չդադարեց գործել Արևելքի և Արևմուտքի քրիստոնյաների միջև եղբայրական հարաբերությունները և գործնական համագործակցությունն աշխուժացնելու համար: Ձերմակեց փափագեցի այցելել նրան այստեղ՝ Հայաստանում, դրայց նրա վատառողջությունը և ապա վաղաժամ մահը այն անհնար դարձրին: Շնորհակալություն եմ հայտնում Տիրոջը՝ Եկեղեցու այս մեծ մարդը մեզ պարգևած լինելու համար:

Ձերդ Սրբություն ուրախ եմ Հռոմում ինձ կատարած Ձեր այցին, երբ Ձեզ ընկերակցում էր եպիսկոպոսների և հայ հավատացյալների մի պատվիրակություն, փոխադարձել կարողանալուս համար: Հայաստան և Սուրբ Էջմիածին այցելելու Ձեր վեհանձն հրավերն այն ժամանակ մեկնաբանեցի իբրև բարեկամության և եկեղեցական սիրո մի մեծ նշան: Երկար դարեր շարունակ Հայաստանյայց Եկեղեցու և Հռոմի Եկեղեցու միջև հարաբերությունները եղել են ուժգին և ջերմ, և ամբողջական միության փափագը երբեք լիովին չի վերացել: Իմ այսօրվա այցը վկայությունն է մեր միասնական ղոնձանքի՝ հասնելու այն ամբողջական միությանը, որը Տերը ցանկանում է Իր աշակերտների համար: Կանգնած ենք Արարատ լեռան դիմաց, ուր, ավանդության համաձայն, կայք գտավ Նոյան տապանը: Ինչպես աղավնին վերադարձավ խաղաղության և սիրո ձիթենու ճյուղով (հմմտ. Ծննդոց Ը 11), նմանապես աղոթում եմ, որ իմ այցը լինի մեր միջև արդեն իսկ գոյություն ունեցող հարազատ և բեղուն համագործակցության նվիրաբերում:

Կաթոլիկ Եկեղեցու և Հայաստանյայց Եկեղեցու միջև գոյություն ունի իրական և սերտ միություն, քանի որ երկուսն էլ պահպանել են առաքելական հաջորդականությունը և ունեն վավերական խորհուրդներ՝ մասնահատուկ կերպով մկրտությունը և հաղորդությունը: Այս փաստակցությունը պետք է մեզ ներշնչի առավել ուժգնորեն գործելու, ամրապնդելու համար մեր էկումենիկ երկխոսությունը: Հավատի և սիրո այս երկխոսության մեջ ոչ մի հարց, որքան էլ դժվար լինի, չպետք է անտեսվի: Քրիստոնյաների միության փնտրտուքի գործընթացում, Հռոմի Եպիսկոպոսի պաշտոնի կարևորությանը գիտակից, խնդրեցի, (իմ «Զի եղիցին մի» («Ut unum sint») խոսքերով սկսվող շրջաբերական նամակում), որ մեր Եկեղեցիների եպիսկոպոսները և աստվածաբանները անդրադառնան ու մտածեն «այն կերպերի վրա, որոնց մեջ այս պաշտոնը կկարողանա երկուստեք ճանաչված սիրո ծառայություն իրականացնել» (հմմտ. 95):

Եկեղեցու առաջին դարերի կյանքի օրինակը կարող է մեզ առաջնորդել այս ընտրողության մեջ: Իմ վառ աղոթքն է, որ կրկին իրագործվել կարո-

դանա այն «պարգևների փոխանակումը», որի սքանչելի օրինակը տվեց առաջին հազարամյակի Եկեղեցին: Հիշողությունն այն ժամանակի, որի ընթացքում Եկեղեցին շնչում էր «երկու թոքերով», թող խթանի Արևելքի և Արևմուտքի քրիստոնյաներին միասին քայլելու հավատի միության և օրինական տարբերությունների հարգանքի մեջ՝ միմյանց ընդունելով և զորավիգ կանգնելով՝ որպես Քրիստոսի միակ Մարմնի անդամներ:

Միասիրտ, հիացական ակնարկով նայենք Քրիստոսին՝ մեր խաղաղության, Ով միավորեց այն, ինչը մի ժամանակ բաժանվել էր (հմմտ. Եփ. Բ 14): Իրականում ժամանակը շտապեցնում է մեզ, և մեր պարտականությունը արբազան և անհետաձգելի պարտականություն է: Պարտավոր ենք հոչակել փրկության Բարի լուրը մեր ժամանակաշրջանի արանց և կանանց: Համայնավարության և նյութապաշտության հոգևոր դատարկությունը փորձառությամբ զգալուց հետո նրանք փնտրում են կյանքի և երջանկության արահետը. Ավետարանի ծարավն ունեն: Նրանց նկատմամբ մեծ պատասխանատվություն ունենք, և նրանք մեզնից ակնկալում են հավատի և փոխադարձ սիրո մեջ միության մի համոզիչ վկայություն: Քանի որ գործում ենք ամբողջական հաղորդության համար, միասին անենք այն, ինչը հայերը է անենք անքակտ: Աշխատենք միասին՝ մեր տարբեր ինքնությունների և ավանդությունների հանդեպ ամենայն հարգանքով: Երբեք՝ քրիստոնյան քրիստոնյայի դեմ, երբե՛ք՝ Եկեղեցին Եկեղեցու դեմ: Հակառակը՝ քայլենք միասին, ձեռք ձեռքի տված, որպեսզի քսանմեկերորդ դարի և նոր հազարամյակի աշխարհը կարողանա հավատալ:

Հայերը միշտ էլ մեծ հարգանք են ունեցել Քրիստոսի խաչի հանդեպ: Դարերի ընթացքում խաչը նրանց համար եղել է հույսի անսպառ աղբյուր՝ չարչարանքների և տառապանքների ժամանակներում: Այս երկրի հոգևոր հայրկանիշն են բազմաթիվ խաչքարերը, որոնք վկայում են քրիստոնեական հավատի նկատմամբ ամրակուռ հավատարմությունը: Տարվա այս շրջանում Հայ Եկեղեցին կատարում է իր մեծագույն տոներից մեկը՝ Խաչվերացը:

Երկրից խաչափայտի վրա բարձրացված Քրիստոս Հիսուսը՝ մեր փրկությունը, կյանքն ու հարությունը, մեզ բոլորիս ձգում է դեպի Ինքը (հմմտ. Հովհ. ԺԲ 32):

Ո՛վ խաչ Քրիստոսի, մեր ճշմարիտ հույս, ամեն անգամ, որ մեղքը և մարդկային տկարությունն առաջացնում են բաժանում, պարգևի՛ր մեզ ներելու և միմյանց հետ հաշտվելու ուժը: Ո՛վ խաչ Քրիստոսի, դո՛ւ ենքուկ եղիր մեզ՝ մինչ գործում ենք վերանորոգելու համար ամբողջական հաղորդությունը նրանց միջև, ովքեր խաչված Տիրոջը դիտում են որպես մեր Փրկչին և մեր Աստծուն: Ամեն:

Շնորհակալություն ձեր ուշադրության համար և Աստծո օրհնությունն եմ հայցում ամբողջական միությանն ուղղված մեր քայլերին:

27 սեպտեմբերի 2001 թ.

Պատմության մեջ առաջին անգամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հռոմի Սրբազան Քահանայապետը մատուցեց լատինածես Սուրբ Պատարագ, Մայր Աթոռի նորակառույց Բաց Խորանի վրա: Դեռ նախորդ օրվանից սկսած Մայր Աթոռ էին գալիս բազմահազար ուխտավորներ ոչ միայն Հայաստանի տարբեր շրջաններից, այլ նաև հարևան Վրաստանից, իսկ Պատարագի սկզբին հավատացյալների բազմությունը հասավ աննախադեպ մեծ չափերի: Բացի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավատացյալներից, ներկա էին նաև Ջավախքի հայության կաթոլիկ հատվածի մեր շատ հայրենակիցներ:

Սրբազան Քահանայապետը, ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետի և Հայաստանի կաթոլիկների առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի, շրջապատված բարձրաստիճան հայ և կաթոլիկ հոգևորականներով, դուրս գալով Մայրավանքից՝ Պատարագի թափորով ուղղվեց դեպի Բաց Խորան, ուր նրան ծափողջույններով դիմավորեցին հավաքված բազմահազար հավատացյալները:

Սրբազան Պապը իր մաղթանքն սկսեց հայերեն՝ արտասանելով «Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն» և «Խաղաղութիւն ամենեցուն» բառերը: Պատարագի ընթացքում իր ողջույնի խոսքն ասաց նաև Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանը, որն իր խոսքն սկսեց Պեշիկթաշլյանի հանրահայտ «Ընդ աստեղօք ինչ կա սիրուն, քան զանձկալի եղբայր անուն» բառերով, ի մասնավորի շեշտելով, որ մի նոր ասպարեզ ու դարաշրջան է բացվում երկու քույր Եկեղեցիների համագործակցության համար: Պատարագի երաժշտական մասը ապահովում էր Մայրավանքի երգչախումբը, որը մերթ կատարում էր հայերեն մեր Պատարագից հատվածներ, մերթ լատիներեն Կաթոլիկ Պատարագից: Պատարագի ընթացքում մի քանի կաթոլիկ հոգևորականներ, ըստ արևմտյան Եկեղեցու ծեսի, ժողովրդի մեջ պտտվեցին և Ս. Հաղորդություն բաժանեցին ներկա հավատացյալներին: Արձակման աղոթքից հետո զույգ Հովվապետերը հայերեն օրհնեցին ներկա հավատացյալ բազմությանը:

Ս. Պատարագի սկզբում համայն ժողովրդին իր պատգամն ու օրհնության խոսքը հղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Այսօր Սուրբ Պատարագի արարողությամբ դեպի երկինք են բարձրանում Քրիստոսի Մեկ և բազմանդամ ընտանիքի զավակներիս աղոթքները՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով:

Պատմությունը չի հիշատակում, որ երբևէ այսպես ցնծագին, համազգային ու համաքրիստոնեական ընդգրկումով տոնախմբվի Հայոց Մեծ Դարձի հոբելյանը: Պատմությանը հայտնի է, սակայն, որ 301 թվականի 150-ամյա-

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՑՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

կը հայ ժողովուրդը նշանավորեց Ավարայրի դաշտում՝ արյամբ պաշտպանելով քրիստոնեական մեր հավատը: Գոհություն Երկնավորին, որ 1700 տարվա մեր հավատարմության վկայությունը պահեց հոբելյանական այս տոնախմբության լույսով ու փառքով: Արդարև, «Ո՞վ հավատաց Տիրոջը և ամոթով մնաց» (Սիրաք Բ 11):

Ուրախ ենք և զգացված, որ տոնական այս օրերին Հերդ Սրբությունը Սուրբ Էջմիածնում է՝ կաթոլիկ մեր եղբայրների ու քույրերի հետ խնդակից մեր ժողովրդի ուրախությանը: Հերդ Սրբության այցը Հայաստան ամրապնդելու է մեր Եկեղեցիների եղբայրական սերը, բարի հարաբերությունները: Այս հավատով այսօր մեր զավակները աղոթակից են Հեզ, կաթոլիկ մեր քույրերին ու եղբայրներին և մասնակից նորակառույց Քաց Խորանում Հերդ Սրբության կողմից լատիներենով մատուցվող Սուրբ Պատարագին: Մեկն է աղոթքի լեզուն: Մենք առ Քրիստոս նույն հավատով, նույն սիրով ու հույսով ենք պաշտոն մատուցում: Աստված լսում է մեզ ինչպես գրաբարով, լատիներենով, այնպես էլ բոլոր լեզուներով: Արդարև, ունենք նույն Տիրոջ շնորհը փրկության ու հավատը Հարության, և Աստվածային Միրո նույն ակունքից բխող արժեքներով են կերտված մեր՝ քրիստոնյա ժողովուրդներիս մշակույթները, որ որքան էլ բազմալեզու և բազմերանգ՝ հասկանալի ու հարազատ են միմյանց՝ կենտրոնում ունենալով Մարդասեր Աստված ու Տիրոջ Սուրբ Ավետարանը:

Հավատի մեր մեկությունը այն կարևորն է, որ առանձնահատկություններով հանդերձ միավորում է մեր Եկեղեցիները նույն առաքելության շուրջ և կոչում՝ գործել սիրով միաբան ու միասնաբար: Փառք ենք բարձրացնում առ Աստված, որ օրավուր նոր քայլեր է անում քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ համագործակցությունը՝ զորացնելու համար փոխհասկացողության և համերաշխության ոգին Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցուց ներս: Այս Աստվածահաճո նպատակին են ուղղված նաև Հերդ Սրբության ասնդուլ ջանքերն ու անհոգնաբեկ այցելությունները:

Սիրելի եղբայր ի Քրիստոս, ներկա դարաշրջանում մարդկությունը աննախընթաց նվաճումներ է արձանագրում գիտա-տեխնիկական բնագավառում, ձևավորվում են աշխարհաքաղաքական նոր իրավիճակներ, առաջ են գալիս հասարակական կյանքի ու միջազգային փոխըմբռնման ու հարաբերությունների նոր պահանջներ, և քրիստոնեական Եկեղեցիներս կանգնած ենք աշխարհում նոր զարգացումներն ըմբռնելու և սերտորեն համագործակցելու, մեկտեղված ուժերով մեր ջանքերն արդասավորելու անհրաժեշտության առջև՝ հանուն «Տիրոջ այգու» հոգածու խնամքի ու պահպանության:

Բացվող հազարամյակը կարող է առ Աստված հավատով իմաստավորման, քրիստոնեական բարոյականի արժևորման, որպեսզի մարդը նյութական աշխարհի ճանաչողության մեջ չմոռանա Աստծո գոյության մասին և տեսնի արարչագործ ուրեքերը, ուր ամենայնը շաղկապված է ու ներդաշ-

նակ, որպեսզի զիտության նվաճումները ծառայեն միայն բարի գործերի բարիքի ստեղծմանն ու մարդկության երջանկությանը:

Արդ, միասնաբար հայցենք Բարձրյալից, որ սուրբ ու պատվական Իր խաչի հովանու ներքո խաղաղ պահպանի աշխարհը համայն և իր նոր նյութը կերտող Հայաստան երկիրը: Թող Տերը բարի կամեցողության մեջ առաջնորդի Քրիստոսասեր ժողովուրդներին, որպեսզի մարդիկ տեսնեն երբայրասեր մեր ընթացքը, մեր բարի գործերը ու փառավորեն մեր Հորը, որ երկնքում է այսօր և միշտ և հավիտյան ամեն:

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՔԱՐՈԶԸ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՑ ԽՈՐԱՆԻՆ

Շատ սիրելի երբայրներ և քույրեր, ողջունում և օրհնում եմ ձեզ բոլորիդ: «Տերը իմ լույսն է ու կրակը» (Սաղմ. ԻԶ 1):

Սաղմոսերգուի այս խոսքերը հայերի սրտերում հնչեցին, երբ քրիստոնեական հավատը, այս հողում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների կողմից առաջին անգամ հռչակված, տասնյոթ դար առաջ դարձավ ազգի կրոնը: Այնուհետև քրիստոնյա հայերն ապրեցին ու մահացան մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհի ու ճշմարտության մեջ (հմմտ. Հովհ. Ա 17): Դարերի ընթացքում Ավետարանի լույսն ու փրկությունը ներշնչեցին ու զորավիգ կանգնեցին ձեզ ձեր պանդխտության ամեն մի հանգրվանում: Այսօր, Սուրբ Պատարագի խորհրդակատարությամբ, որ Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը երբայրական սիրով հրավիրեց ինձ մատուցելու այս սուրբ հողի վրա, ուր Աստծո Որդին հայտնվեց հավատի ձեր հորը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին, մենք հարգանք ենք մատուցում և հիշատակում Հայաստանի հավատարմությունը Հիսուս Քրիստոսին:

Հռոմի եպիսկոպոսը որքան սպասեց այս օրվան: Անհուն ուրախությամբ ողջունում եմ Նորին Սրբություն Կաթողիկոսին, իր երբայրակից արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին և Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալներին: Ջերմապես ողջունում եմ Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանին և միաժամանակ Վարդան աջակից արքեպիսկոպոս Քեշիշյանին, և նրանց միջոցով՝ մտածումներս ուղղվում են ամենապատիվ Ներսես Պետրոս ԺԹ Պատրիարքին, եպիսկոպոսներին և աշխարհականներին հայ կաթոլիկ հավատացյալներին: Ողջագուրում եմ քահանաներին, կրոնավորներին ու կրոնավորուհիներին և ձեզ բոլորիդ՝ Հայ Կաթոլիկ Եկեղեցու որդիներիդ ու դուստրերիդ: Բարի գալուստ եմ մաղթում Կովկասի լատինների առաքելական տեղապահ Ջուզեպպե Փազոտթո եպիսկոպոսին և բոլոր նրանց, ովքեր ժամանել են Վրաստանից և Կովկասի այլ կողմերից:

Երկար տարիներ հայ քահանայի ձայնն այլևս չհնչեց ձեր եկեղեցիներում, և այնուհանդերձ՝ ժողովրդի հավատի ձայնը տակավին լսվում էր՝

Պետրոս առաքյալի հաջորդի հանդեպ բարեպաշտությամբ ու որդիական սիրով լի:

Երբ չարասիրտ մարդիկ գնդակոծեցին Փանիկի զանգակատան խաչը, նրանք փորձում էին անպատվել այն Աստծուն, որին չէին հավատում: Բայց նրանց բռնությունն ուղղված էր նախնառաջ ժողովրդի դեմ, որը հավաքել էր քարերը՝ տուն կառուցելու Տիրոջ համար. ձեր դեմ, որ այդ եկեղեցիների Մկրտության Ավազաններում ապացել էիք հավատի, իսկ դրոշմի խորհրդով՝ Սուրբ Հոգու պարգևը. ձեր դեմ, որ այդ եկեղեցիներում համախմբվում էիք՝ մասնակցելու սուրբ Հաղորդության երկնային սեղանին, ձեր դեմ, որոնց ամուսնություններն այդ աղոթավայրերում օրհնվել էին այնպես, որ ձեր ընտանիքները լինեին սուրբ, և որ այնտեղ ձեր վերջին ողջույնն էիք տվել ձեր սիրելիներին, նրանց հետ մի օր Աստծո Արքայության մեջ վերամիանալու ապահով հույսով:

Կրակ բացեցին խաչի դեմ, այնուհանդերձ դուք շարունակեցիք երգել Տիրոջ գովաբանությունը՝ պահպանելով ու պատվելով ձեր վերջին ժողովրդապետի եկեղեցական աքեմը՝ որպես ձեր մեջ նշանը նրա ներկայության: Երգում էիք ձեր շարականները՝ վստահ այն գիտակցությամբ, որ նրա ձայնը Երկնքից միացած էր Քրիստոսին՝ հավիտենական Մեծ Քահանայապետին ուղղված ձեր փառաբանությանը: Պաշտամունքի ձեր վայրերը զարդարում էիք ձեր հնարավորությունների չափ լավագույն կերպով. և՛ Դիսուսի, և՛ Իր Մայր Մարիամի պատկերներից բացի՝ այնտեղ հանախ ներկա էր Հռոմի Քահանայապետի պատկերը՝ Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսի պատկերի հետ միասին: Ըմբռնել էիք, թե ո՞ւր որ էլ քրիստոնյաները տառապում էին, թեև միմյանց միջև բաժանված, արդեն իսկ գոյություն ուներ մի խոր միություն:

Սա է պատմառը, որի համար ձեր ներկա պատմությունը չի դրոշմվել Եկեղեցիների միջև տխուր ընդդիմությամբ, որը քրիստոնյաներին չարչարեց այստեղից ոչ շատ հեռու երկրներում: Դեռ հիշում եմ, երբ գաղտափարախոսական անաստվածության ձմեռը հագիվ անհայտացած, երբանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը Հռոմի Սուրբ Աթոռին հրավիրեց մի քահանա առաքել Հայաստանի կաթոլիկների համար: Ընտրեցի այն ժամանակ ձեզ համար հայր Կոմիտասին՝ Մխիթար աբբահոր հոգևոր որդիներից մեկին: Այս տարի Մխիթարյան միաբանությունը տոնախմբում է իր հիմնադրության 300-ամյակը: Երախտագիտություն ենք մատուցում Տիրոջն այն փառավոր վկայության համար, որ տվեցին վանականները. և հայտնում ենք իրենց մեր երախտագիտությունն այն ամենի համար, որ կատարում են հայ մշակույթի վերանորոգության ի նպաստ:

Թեև այլևս երիտասարդ չէր հայր Կոմիտասը, անմիջապես և խանդավառությամբ ընդունեց միանալ ձեզ՝ վերակերտումի դժվարին հանձնառությամբ: Եկավ Փանիկում ապրելու, որ վերանորոգեց այն խաչը, որը գինյալները փորձել էին կործանել: Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականի

և հավատացյալների հանդեպ եղբայրական հոգով վերաբացեց և բարեզարդեց եկեղեցին կաթոլիկների համար, որոնք այն պաշտպանել էին այսքան երկար ժամանակ: Այժմ նա հանգչում է այդ եկեղեցու կողքին, նաև մահվան մեջ մոտ իր ժողովրդին, և այժմ սպասում է արդարների հարությանը:

Հետագայում Վազգեն Կաթողիկոսի եղբայրական հասկացողության շնորհիվ, որն Ազգային Ժողովում պաշտպանեց Հայաստանի կաթոլիկների իրավունքները, ի վիճակի եղա որպես հովիվ առաքել ձեզ մեկ այլ միխիթարյան՝ հայր Ներսեսին, որին եպիսկոպոս օծեցի Ս. Պետրոսի Մայր տաճարում: Նա որդին է հավատի մի խոստովանողի, որն իր հավատարմությունը Քրիստոսին վճարեց համայնավար բանտերում: Ներսես արքեպիսկոպոսին կամենում եմ ուղղել երախտագիտության մի հատուկ խոսք: Երբ իրենից պահանջվեց, նա պատրաստակամորեն թողեց Վենետիկի Սուրբ Ղազար կղզու միխիթարյան սիրելի հասարակությունը՝ գալու, իր ծառայությունը մատուցելու ձեր մեջ՝ որպես սիրալիր հայր և հարգված ուսուցիչ: Այժմ նրան օգնում է Վարդան արքեպիսկոպոսը՝ Միխիթար աբբահոր մեկ այլ հոգևոր որդին: Նրան նույնպես մաղթում եմ հովվական երկարատև և բեղուն գործունեություն:

Իր նախկին տեղապահի հետ, որը հետագայում դարձավ Իրանի հայ կաթոլիկների եպիսկոպոս, իսկ այժմ՝ աջակից արքեպիսկոպոսի, քահանաների և մայրապետների հետ, որոնք իրենց ուժերը այսքան վեհանձնորեն սպառում են Ավետարանի սիրո համար, Ներսես արքեպիսկոպոսը սովորեցրեց ձեզ և ցույց տվեց, որ Կաթոլիկ Եկեղեցին այս երկրում մրցակից չէ: Մեր հարաբերությունները դրոշմված են եղբայրական հոգով: Ինչպես լոության տարիներին քահանայապետի պատկերը զետեղել էիք կաթողիկոսի պատկերի կողքին, այնպես էլ այսօր՝ այս ծիսակատարության ընթացքում, աղոթելու ենք ոչ միայն կաթողիկե նվիրապետության, այլ նաև Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար:

Ձեր ազնվությամբ, Ձերդ Սրբություն, Դուք Հռոմի Եպիսկոպոսին հրավիրեցիք կաթոլիկ հանդիսանքի հետ Սրբազան Պատարագը Սուրբ Էջմիածնում մատուցելու, և այս ուրախ առիթով Դուք պատվում եք մեզ Ձեր ներկայությամբ: Մի՞թե սա մեր հասարակաց հավատքի հրաշալի նշան չէ: Արդյո՞ք այս իրողությունը չի արտահայտում բազմաթիվ եղբայրների և քույրերի վառ բաղձանքը, որոնք ցանկանում են տեսնել մեր արտաքնաթաց առաջադիմությունը միության շավիղներում: Իմ սիրտն անհամբեր է արտաքացնելու այն օրվա գալուստը, երբ միասին կմատուցենք աստվածային Զոհը, որը միայն մեզ բոլորիս դարձնում է մեկ: Ձերդ Սրբություն, այս խորանում, որ Ձերն է, խնդրում եմ Տիրոջից՝ ներել միության դեմ գործած մեր անցյալ թերությունները և առաքնորդել մեզ դեպի այն սերը, որը գերազանցում է որևէ պատվար:

ՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՂՈԹՔԻ

Շատ սիրելի կաթոլիկ եղբայրներ և քույրեր. իրավացիորեն պարծենում եք ձեր հայրերի այս հնամյա երկրով, և դուք ինքներդ ժառանգորդներն եք նրա պատմության և մշակույթի: Կաթոլիկ Եկեղեցում գովաբանությունն առ Աստված բարձրանում է բազմաթիվ ժողովուրդներից և բազմաթիվ լեզուներով:

Բայց մեկ-միակ մեղեդիի մեջ զանազան ձայների այս շաղախումը ոչ մի կերպ չի ջնջում ձեր հայկական ինքնությունը: Դուք խոսում եք ձեր նախնիների քաղցրահունչ լեզվով: Ձեր ծեսը երգում եք այնպես, ինչպես ձեզ սովորեցրել են Հայ Եկեղեցու սուրբ հայրերը: Առաքելական Եկեղեցու ձեր եղբայրների հետ միասին, վկայում եք միևնույն Տեր Հիսուսին, որը բաժանված չէ: Դուք չեք պատկանում ոչ Ապողոսին, ոչ Կեփասին, ոչ էլ Պողոսին. «Դուք Քրիստոսինն եք, իսկ Քրիստոս՝ Աստծունը» (Ա Կորնթ. Գ 23):

Որպես հայեր, մյուս բոլոր հայերի միևնույն իրավունքներով ու պարտականություններով, դուք օգնում եք վերակերտելու ազգը: Այս հույժ կարևոր պարտականության մեջ, վստահ եմ, Հայ Առաքելական Եկեղեցու մեր եղբայրներն ու քույրերը կաթոլիկ հանրությանի անդամներին նկատում են իբրև միևնույն մոր՝ Հայաստանի օրհնյալ հողի, մարտիրոսների և միանձների, զիտունների և արվեստագետների երկրի զավակները: Տեղի ունեցած բաժանումներն անեղծ թողեցին արմատները: Միմյանց հետ պետք է մրցենք ոչ թե բաժանումներ ստեղծելու կամ երկուստեք իրար ամբաստանելու, այլ փոխադարձաբար սեր ցուցաբերելու հարցում: Տիրոջ աշակերտների միջև հնարավոր միակ մրցակցությունը ճշտելն է, թե ով կարող է մեծագույն սերը մատուցել: Հիշենք ձեր մեծ եպիսկոպոս Ներսես Լամբրոնացու խոսքերը. «Ասածս հետ խաղաղության մեջ լինելու ուրիշ կերպ չկա, ոչ մեկի համար, եթե նույնպես խաղաղությունը չի հաստատվել մարդկանց հետ... Եթե սիրում ենք, և սա՛ է մեր չափանիշը, սերը լինելու է մեր բաժինը. եթե մեր չափանիշը ոխն ու ատելությունն են, մեզ սպասում են ոխն ու ատելությունը»:

Այսօր Հայաստանն իր բոլոր որդիներից ու քույրերից ակնկալում է աշխույժ ճիգեր և վերանորոգ զոհաբերություններ: Հայաստանը կարիքն ունի, որ իր բոլոր որդիներն ամբողջ սրտով աշխատեն հաստատակաց բարիքի համար: Սա՛ միայն կապահովի, որ պարկեշտ և վեհանձն ծառայությունը բոլոր նրանց, ովքեր գործում են հաստատակաց կյանքում, վարձատրվի ժողովրդի վստահությամբ և գնահատանքով. որ ընտանիքները լինեն միացած և հավատարիմ. որ յուրաքանչյուր մարդկային կյանք սիրով ընկալվի հողության իսկ պահից և նաև հոգատարությամբ խնամվի, երբ պուժվել է հիվանդությունից կամ աղքատությունից: Եվ ո՞ր արդյոք կկարողանաք գտնել ուժը՝ հաստատակաց այս մեծ հանձնառության համար: Կգտնեք այնտեղ, ուր հայ ժողովուրդը միշտ էլ գտել է ներշնչումը՝ հարատևելու համար իր բարձր գաղափարականների մեջ և պահպանելու համար մշակութային

և հոգևոր սեփական ժառանգությունը լույսի և փրկության մեջ, որը ձեզ գալիս է Հիսուս Քրիստոսից:

Հայաստանը Հիսուս Քրիստոսի քաղցն ու ծարավն ունի, որի համար ձեր նախնիներից շատերը զոհեցին իրենց կյանքը: Այս դժվար ժամանակներում մարդիկ հացի փնտրտուքի մեջ են: Բայց երբ այն ունենում են, նրանց սիրտն ավելին է կամենում. կկամենային կյանքի մի իմաստ, մի հույս, որ նեցուկ կանգնի իրենց ամենօրյա ծանր աշխատանքում: Ոչ ոք նրանց կմոլի դնելու իրենց հույսը Հիսուս Քրիստոսի վրա: Դուք, Հայաստանի քրիստոնյաներ, դուք բոլորդ միասին:

Բոլոր քրիստոնյա հայերը միասին նայում են Հիսուս Քրիստոսի խաչին՝ որպես աշխարհի միակ հույսին և որպես Հայաստանի ճշմարիտ լույսին ու փրկությանը: Բոլորդ ծնվել եք խաչի վրա Քրիստոսի խոցված կողից (հմմտ. Հովհ. ԺԹ 34): Խաչը ձեզ հոգեհարազատ է, որովհետև գիտեք, որ կյանք է և ոչ թե մահ, հաղթանակ է և ոչ պարտություն: Դուք սա գիտեք, որովհետև սովորել եք ճշմարտությունը, որը Ս. Պողոսը հոչակում է Փիլիպեցիներին իր բանտարկությունը ծառայեց միմիայն Ավետարանի առավել ծավալմանը (Ա 12): Ի նկատի ունեցեք ձեր դարը փորձառությունը, որը նույնպես եղավ, իր ձևով, բանտարկության մի եղանակ: Ձեր ուսերին առաք ձեր խաչը (հմմտ. Մատթ. ԺԶ 24), և այն ձեզ չկործանեց: Ընդհակառակը՝ ձեզ վերաստեղծեց խորհրդավոր և հրաշալի կերպերով: Եվ հազար յոթ հարյուր տարի հետո կարող եք հաստատել՝ Միքիա մարգարեի խոսքերով. «Մի՛ ուրախարիր ինձ, ո՛վ իմ թշնամի: Թե գլորվեցի, նորից կկանգնեմ, քանի որ եթե խավարում նստեմ, Տերն է իմ լույսը» (Է 8): Հայաստանի քրիստոնյաներ, մեծ փորձությունից հետո՝ այժմ, ժամանակն է կրկին ոտքի կանգնելու: Հարություն առեք Նրա հետ, Ով բոլոր ժամանակներում եղել է ձեր լույսը և ձեր փրկությունը:

Էկումենիկ այս ուխտագնացության ընթացքում վառ կերպով փափագում էի այցելել այն վայրերը, ուր կաթոլիկ հավատացյալներն ապրում են բազմանդամ համայնքներով: Փափագում էի աղոթել 1988 թ. սահմանի երկրաշարժի զոհերի գերեզմանների վրա՝ գիտակից, որ շատերը տակավին տառապում են նրա ողբերգական հետևանքների պատճառով: Փափագում էի անձամբ այցելել Տիրամայր Նարեկի հիվանդանոց, որին ես ինքս երջանիկ եղա նպաստելու, երբ Հայաստանը դժվարության մեջ էր, և որի մասին գիտեմ, թե մեծապես գնահատված է իր կողմից մատուցված ծառայության համար՝ շնորհիվ Կարմիրյանների և Հիսուսի փոքրիկ քույրերի անխոնջ աշխատանքի: Ցրագրածս այցելություններից ոչ մեկը, սակայն, հնարավոր չեղավ: Իմացեք, որ դուք բոլորդ տեղ ունեք իմ սրտում և իմ աղոթքներում:

Շատ սիրելի եղբայրներ ու քույրեր, երբ տուն վերադառնաք այս սրբավայրից, հիշեցեք, որ Հռոմի Եպիսկոպոսը եկել է մեծարելու հայ ժողովրդի հավատքը, որի մեկ մասնիկն եք՝ նրան հատուկ կերպով սիրելի: Նա եկել է հոչակելու ձեր հավատարմությունը և ձեր քաջությունը և զովաբանելու

Աստծուն, որը պարգևեց մեզ տեսնել ազատության օրը: Այստեղ՝ այս շքեղ խորանի մոտ, հիշենք բոլոր նրանց, ովքեր պայքարեցին այս օրը տեսնելու համար և չտեսան այն, բայց որ այժմ այն հիացմունքով դիտում են Աստծո Արքայության հավիտենական փառքից:

Ձեր կողմից ընտրորեն սիրված Ս. Կույս Աստվածածինը թող հսկի իր հայ որդիների վրա և բոլորին՝ փոքրերին, երիտասարդներին, ընտանիքներին, տարեցներին, հիվանդներին, ընդմիշտ պահպանի իր խնամակալ պատմությանի ներքո: Հայաստանն ընդմիշտ հավատարիմ (Armenia semper fidelis!): Աստծո խաղաղությունը թող միշտ ձեզ հետ լինի: Ամեն:

Օրվա երկրորդ կեսին Հովհաննես-Պողոս Երկրորդ Պապը, ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետի, հյուրընկալվեց Քանաքեռի կաթողիկե եկեղեցում, իսկ այնտեղից վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր տեղի ունեցավ «Ողջերթ»-ի արարողություն և ստորագրվեց համատեղ հայտարարություն (տես էջ 29):

Ժամը 17.45-ին երկու Հովվապետերը ուղևորվեցին Հայոց քրիստոնեական հավատքի ծննդավայր Խոր Վիրապ, ուր տեղի ունեցավ ջահի փոխանցման կարգը: Երկու Հայրապետերը «Ուրախ լեր» շարականի հնչյունների ներքո մուտք գործեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Այնուհետև Վեհափառ Հայրապետը «Ով երջանիկ» շարականի հնչյունների ներքո իջավ Վիրապ, որտեղից դուրս բերեց վառված ջահը և այն փոխանցեց Սրբազան Պապին: Սրբազան լույսը, որ խորհրդանշում է հայոց հավատքի լույսը, որով Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Ս. Ավետարանի լույսով լուսավորեց Հայաստան աշխարհը, այսուհետև կտարվի Վատիկան և կշարունակի անմար վառվել այնտեղ՝ ի նշանավորումն երկու Եկեղեցիների բարեկամության և որպես առհավատչյա քույր Եկեղեցիների փոխըմբռնման և համագործակցության, բարեխոսությամբ մեր հավատո Հոր՝ Գրիգոր Լուսավորչի: Վանքի բակում Սրբազան Պապը և Վեհափառ Հայրապետը ներկաներին առաջնորդեցին կարդալու 1700-ամյակի մասնավոր հիշատակության աղոթքը.

«Քրիստոս Աստված մեր, Փրկիչ և լույս աշխարհի, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզության միջոցով 1700 տարի առաջ քո կենարար լույսով լուսավորեցիր հայ ժողովրդին, Քո բարերար, սրբարար և բժշկարար լույսով լուսավորիր նաև ինձ, իմ ընտանիքին և հարազատներին: Տուր մեզ հավատք և ուժ, որպեսզի մեր անձերը այսօր, առավել քան երբեք, քեզ ընծայենք, և դարձրու մեզ քո ընտրյալ ամենիդ՝ մեր Սուրբ Եկեղեցու արժանի ծառաներին: Ներիր մեր հանցանքները և օգնիր մեզ, որպեսզի քո սիրույդ արժանի քրիստոնեական վարքով ապրենք: Օրհնիր Կաթողիկե Եկեղեցին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր Հովվապետերով, առաջնորդներով ու հավատացյալներով. նրա միջոցով թող շողա քո փրկության լույսը, բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի և Ս. Գրիգոր Լուսավորչի: Փա՜ռք քեզ, Տեր, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»:

Աղոթքից հետո երկու Հայրապետերը իրենց օրհնությունը տվեցին ներկա հավատացյալ ժողովրդին և ժամը 18.00-ին ուղևորվեցին «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում գույգ Եկեղեցապետերին դիմավորեցին ՀՀ Նախագահը և ողջ պետական ավագանին, հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան ներկայացուցիչներ, ոյուրեր: Երկու հովվապետերը առաջնորդվեցին դեպի նախապես պատրաստված հատուկ բեմահարթակ: Պետական ընդունված արարողակարգով հնչեցին Հայաստանի Հանրապետության և Վատիկանի օրհներգերը, որից հետո մատուցվեց պատվո պահակախմբի երամանապարը համապատասխան զեկույցով: Սրբազան Քահանայապետին ողջերթի և ցտեսության խոսք ուղղեց ՀՀ Նախագահը.

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,
Վեհափառ Տեր,
Սրբազան հայրեր,
Հարգարժան հյուրեր,

Հովհաննես-Պողոս Երկրորդ Սրբազան Քահանայապետի այցը Հայաստան մոտենում է իր ավարտին: Բայց արդեն կարող ենք արձանագրել, որ այցը ունենալու է պատմական նշանակություն: Այն իր մեծ ու դրական ազդեցությունն է գործելու Հայաստանի և Վատիկանի հարաբերությունների հետագա զարգացման ու խորացման ողջ ընթացքի վրա: Չենք կասկածում, որ այս այցը նոր ու զորեղ ազդակ կլինի նաև Վատիկանի և Հայ Առաքելական Եկեղեցու գործակցության ամրապնդման համար:

Ձերդ Սրբություն,

Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ՝ Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի և Հայաստանի անկախության 10-րդ տարեդարձի տոնակատարությունները Ձեր ներկայությամբ պատվելու համար: Մենք զգացված ենք մեր երկրի ու նրա ժողովրդի նկատմամբ ցուցաբերած Ձեր ջերմ զգացմունքներից: Կարող եք վստահ լինել, որ այդ զգացմունքները փոխադարձ են:

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում տեսել է վերելքներ և կորուստներ, տեսել է նաև ամենասարսափելին: Ձեր կատարած քայլերը վկայություններ են, որ մենք մենակ չենք պատմական արդարության վերականգնման մեր ջանքերում: Այս իրողությունը մեր սրտերը լցնում է երախտագիտությամբ: Ի դեմս Վատիկանի և Սուրբ Աթոռի սպասավորների, մենք տեսնում ենք խաղաղության, արդարության ու մարդասիրության ջատագովների:

Ձերդ Սրբություն,

Հայաստանի 10-ամյա անկախությունը մեր ժողովրդի համար եղավ հզոր ազդակ՝ իր հոգևոր ակունքներին վերադառնալու: Այսօր Հայաստանի առջև ծառացած խնդիրների լուծման և առկա դժվարությունների հաղթահարման գործում մենք մեծապես կարևորում ենք հասարակության բարոյական և հոգևոր առողջությունը: Մեզանում խորը արմատներ ունեցող

քրիստոնեական ավանդույթն իր ազդեցությունն է գործում մեր նոր քաղաքականության վրա: Դրա հիմքում անհատի և ժողովրդի ազատությունն է՝ ինքնարտահայտման լավագույն նախապայմանը:

Աշխարհում այս վեհ արժեքների արմատավորման գործում առանձնահատուկ է Ձեր դերակատարությունը, որը մենք շատ բարձր ենք գնահատում:

Հայաստանի Հանրապետությունն ու նրա ժողովուրդը մտադիր են, ազգերի միջազգային ընտանիքի անդամների հետ միասին, իրենց համեստ լուման բերել աշխարհում խաղաղության ու բարգավաճման գործին:

Այս պայծառ հավատով է, որ մենք մաղթում ենք Ձեզ բարի ճանապարհ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՔԸ

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս

Հրաժեշտի ապրումով ենք համակված բոլորս այս պահին: Ամեն հրաժեշտ, սակայն, կրում է նաև նոր հանդիպման հույսն ու ուրախությունը:

Երեք հիշարժան օրեր ապրեցինք Ձերդ Սրբության և Կաթոլիկ մեր եղբայրների ու քույրերի հետ: Հագեցած օրեր՝ առանձնահատուկ քրիստոնեական մեր Եկեղեցիների սիրո և եղբայրության արտահայտությամբ, որ լավատեսություն են ավելացնում մեր հոգիներում և մեր կյանքում:

Ձերդ Սրբությունը տեսավ Արարատը և ապրեց այն հուզմունքը, որ հայերս զգում ենք ամեն առավոտ՝ սուրբ լեռանը հայացք ուղղելիս: Համոզված ենք, որ Դուք կարճատև այս ժամանակում զգացիք ու ճանաչեցիք Հայաստանի հոգին՝ Քրիստոսասեր հոգին: Միրելի հուշեր եք տանում Ձեզ հետ հինավուրց մեր երկրից:

Ձեր այցը Հայաստան՝ Հայ Եկեղեցու համար հոբելյանական տարում, հավելեց ուրախությունը հայության, զորեպնդեց մեր ժողովրդին քրիստոնեական Եկեղեցիների միության նոր վկայությամբ: Դիրավի, հոբելյանական տարվա մեջ բացառիկ եղան և անմոռաց կմնան սեպտեմբերյան տոնական այս օրերը, քանզի մեր ուրախությունը մեզ հետ կիսեցին, մեզ խրնդակից եղան Քրիստոսին հավատացող ազգեր և պետություններ:

Մեր ժողովրդի հետ Մենք հավատում ենք, որ Հայ և Հռոմեական Կաթոլիկ մեր երկու Եկեղեցիների եղբայրությունը միշտ նորոգվելու է սիրով, որի համար միասնաբար խնդրեցինք Բարձրյալի օրհնությունը: Տիրոջ առջև մենք միասնաբար հայցեցինք նաև բարեխոսությունը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկու սրբերի՝ Ս. Գրիգորի և Ս Տրդատի՝ հանուն աշխարհում խաղաղության ու բոլոր արտերում բարի կամեցողության հաստատման ու զորացման:

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս

Դուք Ձեզ հետ Հռոմ եք տանում Խոր Վիրապում վառված լույսը՝ խորհրդանիշը Սուրբ Լուսավորչի Կանթեղի, որով դարերի մեջ միշտ անմար ու լուսավոր մնաց հայոց հավատը: Թող մշտավառ այդ լույսը, որը 2001 թվականին առավել պայծառ է հայոց հոգիներում, լուսավորի Հայ և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրության ճանապարհը:

Ձերդ Սրբություն

Բարի ճանապարհ ենք մաղթում Ձեզ և Աստծո օրհնությամբ լիցուն երջանիկ կյանքի Մեր լավագույն մաղթանքներն ու սիրո ողջույնը հղում կաթոլիկ քույրերին ու եղբայրներին՝ ի Հռոմ և ի սփյուռս աշխարհի:

Թող Ամենախնամ ու Բարերար Աստված ընդունի մեր միասիրտ աղոթքը, մեր խնամքին հանձնված բանավոր հոտին պարգևի ամենայն շնորհ ու բարիք և պահպանի Բարեգութ Իր հայացքի ներքո Իր Սուրբ Եկեղեցին և աշխարհը համայն: Ամեն:

Ապա երաժշտի շնորհակալական իր խոսքն ասաց Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը.

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Մեծարգո Նախագահ Պրն Քոչարյան, Ձերդ Սրբություն, շատ սիրելի հայ բարեկամներ.

Հասել է ժամանակը հրաժեշտ տալու և շնորհակալություն հայտնելու Ձեզ, պարոն Նախագահ և կառավարության անդամներ, Հայաստանում զրաված հոյակապ հյուրընկալության համար: Երախտապարտ եմ բոլորին, քաղաքացիական և զինվորական իշխանություններին և գործակիցներին, լրատվության արանց և կանանց, նրանց, ովքեր իրենց ժամանակը և կարողություններն գործադրեցին՝ հաջողությամբ պսակելու այս այցը:

Խոր հուզումով իմ երախտագիտությունն եմ հայտնում Ձեզ, Ձերդ Սրբություն Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսներին ու հավատացյալներին՝ այս օրերի ընթացքում մեր կիսած եղբայրական սիրո և հաղորդության հոգու համար:

Միրով ողջունում եմ Ձեզ, շատ սիրելի Ներսես արքեպիսկոպոս, Վարդան արքեպիսկոպոս, Փազոտրո եպիսկոպոս, և Ձեզ՝ Կաթոլիկ Եկեղեցու քահանաներ, կրոնավորներ, կրոնավորուհիներ և աշխարհական հավատացյալներ. մեծ ուրախությամբ, միասնաբար ծիսակատարեցինք մեր հավատքի խորհուրդը, և անձնական փորձով նկատեցի ձեր հայրենակիցների հետ միատեղ գործելու ձեր փափագը՝ առավելագույն արդարության և հայ քաղաքացիների լավագույն կյանքի համար: Պապը ձեզ կրում է իր սրտում, և Աստված ինքը կտա ձեզ ուժ՝ դիմակայելու ձեր առջև կանգնած մարտահրավերներին:

ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑԱՊԵՏԵՐՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՄԲ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

Փափագում եմ մեկ անգամ ևս հայտնել իմ գնահատանքը հանդեպ բոլոր Եկեղեցիների և եկեղեցական համայնքների ներկայացուցիչներին, որոնք մասնակցեցին իմ այս այցի հետ կապված իրադարձություններին: Թող Քրիստոսի բոլոր հետևորդներն ամեն էկումենիկ վստահության և բարեկամության մեջ, մինչ թեակոխում ենք երրորդ հազարամյակ և ընթանում միշտ առավել սերտ միության և գործակցության ճանապարհով:

Շնորհակալություն քեզ, Հայաստանի ժողովուրդ, բարեկամության ջերմության համար, աղոթքի համար, որ կատարեցիք միասին՝ քրիստոնյաների միության վառ փափագիդ համար: Շնորհակալություն հատկապես հավատիդ վկայության համար, հավատ, որը երբեք չլքեցիր մոայլ ժամանակներում, հավատ, որը խորապես արմատավորված է մնում քո ընտանիքներում և քո ազգային կյանքում:

Պատմության ընթացքում Արարատ լեռն անսասանության մի խորհրդանիշ և վստահության աղբյուր է եղել հայ ժողովրդի համար: Բազմիցս անգամներ այդ անսասանությունը և վստահությունը դաժանորեն փորձության ենթարկեցին բռնությունը և հալածանքները: Հայ ժողովուրդը թանկ գնով վճարեց իր սահմանային դիրք ունենալու համար, այնպես որ «սրբություն» և «մարտիրոսություն» եզրերը գրեթե հոմանիշ դարձան ձեր բառապաշարում: Անցյալ դարասկզբի զարհուրելի իրադարձությունները, որոնք ձեր ժողովրդին հասցրին «բնաջնջման սեմին», ամբողջատիրական հարբուստահարության երկար տարիները, աղետալի երկրաշարժի ավերածությունները ի վիճակի չեղան հայ ոգուն խոչընդոտելու վերացնել քաջությունը և վերստանալ իր մեծ արժանապատվությունը:

Ճիշտ է, սրանք դժվարին տարիներ են, և ձեր սիրտը երբեմն հոգնած է և վրդովված: Ձեր երիտասարդներից շատերը թողել են երկիրը, ուր ծնվել են, բավականաչափ աշխատանք չկա, և աղքատությունը շարունակվում է, դժվար է հարատևել՝ աշխատելու հասարակաց բարիքի համար, բայց, շատ սիրելի հայ բարեկամներ, անդրդվելի մնացեք հույսի մեջ: Հիշեցեք, որ ձեր հույսը դրել եք Քրիստոսի վրա և ձեր «այո»-ն եք ասել Նրան առհավետ:

Ամբողջ աշխարհի ձեր եղբայրներին և քույրերին որպես նեցուկ ունենալով՝ հանձնառություն եք ստանձնել ձեր երկիրը և ձեր հասարակությունն ազատության մեջ վերակերտելու գործում:

Ժամանակը հասունացել է, որպեսզի ձեր ազգն իր մշակութային ներուժը և իր հոգևոր ուժերը վերամիավորի ծրագրավորված մի մեծ ջանքի մեջ՝ զարկ տալու համար իր զարգացմանը և բարգավաճելու համար իր քրիստոնեական ժառանգության առանցքային ճշմարտությունների հիմքի վրա. մարդկային յուրաքանչյուր էակի արժանապատվությունը, անձի կենտրոնականությունը որևէ հարաբերությունում և վիճակում, բոլորի համար հավասար արդարության և տկարներին ու նվազ բախտավորներին գորավիգ կանգնող համերաշխության բարոյական հրամայականը: Տիրոջից խնդրում եմ նաև, որ Հայաստանի և տարածաշրջանի մյուս ժողովրդների ան-

կավարներն ունենան խաղաղության արտահայտնիրում քաջությամբ առաջարկելու իմաստությունն ու հարատևությունը. քանի որ առանց խաղաղության չի կարող լինել հավատի զարգացում և բարգավաճում:

Մինչ հրաժեշտ եմ տալիս ձեզ՝ լի եմ վստահությամբ, քանի որ տեսա վերաշխուժացման ձեր կարողությունը և ձեր բաղձանքների ազնվականությունը: Թող միշտ հնչի հայերի սրտում ձեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խոսքը հայրենիքի մասին.

Քայց հին ու նոր վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն խորհրդավոր ճամփին հնի ու նորի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ ...

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հազած
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և հայ մարտիրոսների և սրբերի մեծ բազմությունը թող հսկեն ձեր ներկայի և ձեր ապագայի վրա: Քրիստոսի Մայրը՝ Նոր Ուխտի Տապանակը թող առաջնորդի Հայաստանին դեպի խաղաղություն, որ Զրհեղեղից այն կողմ է խաղաղություն Աստծո, որն Իր ծիածանը կապեց ամպերի մեջ՝ որպես Իր անվերջ սիրո նշան (հմմտ. Ծնող. Թ 13):

Շնորհակալությո՛ւն, պարոն նախագահ: Շնորհակալությո՛ւն, շատ սիրելի եղբայր Գարեգին: Շնորհակալությո՛ւն ձեզ՝ բոլորիդ:

Հռոմի Սրբազան Քահանայապետը մեկնեց Հայաստանից՝ իր հետ տանելով մեր հարգանքն ու սերը իր նկատմամբ և մեր դարավոր ազգային-հոգևոր ինքնությանը միաշաղախված նվիրումն ու հավատը համաքրիստոնեական եղբայրությանը և փոխըմբռնմանը:

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սեպտեմբեր 30, 2001 թ.)

1700-ամյակի եզրափակիչ հանդիսություններն իրենց լրումին հասան սեպտեմբերի 30-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ի կատարված եպիսկոպոսական ձեռնադրությամբ: Հայ Առաքելական Եկեղեցու չորս նվիրյալ սպասավորներ՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն վարդապետ Ադամյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես վարդապետ Մովսիսյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյանը, կոչվեցին «ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Սուրբ Պատարագին ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Ճեմարանի սաներ և մեր Եկեղեցու բարեպաշտ հայորդիք:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու առաքելավանդ կանոնների, ձեռնադրության նախորդ օրը կատարվեց երդման արարողակարգը, համաձայն որի ընծայացուները, «ի ծունկս ... առաջի նկեալ» Իջման Ս. Սեղանի առջև, բարձրաձայն ընթերցեցին եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած երդմնագիրը՝ հանուն Ամենասուրբ Երրորդության: Մերժելով բոլոր հերետիկոսներին և հերձվածներին՝ ձեռնադրյալները կրկին անգամ վերանորոգեցին իրենց սրբազան ուխտն Աստծո առջև՝ մինչև կյանքի վախճանը հնազանդ մնալ Առաքելահիմն Եկեղեցու կանոններին՝ «ի ներքոյ իշխանութեան եւ հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս»: Արարողությունն ավարտվեց ընծայացուների և ուխտադրության վկաների ձեռնադրությամբ:

Հաջորդ օրը, Միածնաէջ Տաճարի քաղցրալուր զանգերի ղողանջի ներքո, Վեհարանից հոգևորականաց հրաշազարդ թափորը Վեհափառ Հայրապետի և ընծայացու վարդապետների հետ առաջնորդվեց Մայր Տաճար:

«Հրաշափառ Աստուած» ոգեշունչ շարականի հնչյունների ներքո շքեղազարդ թափորը մուտք գործեց Տաճար, որտեղ Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց հրապարակային խոստովանություն: Այնուհետև պատարագիչ Վեհափառ Հայրապետը, «Հովիւ քաջ» շարականի երգեցողությամբ, բարձրացավ Ս. Ստեփանոսի Խորան, խնկարկեց եկեղեցում հավաքված հավատավոր ժողովրդին և բազմեց Հայրապետական գահին՝ ունկնդիր լինելու Մայր Աթոռի միաբանության և «համօրէն ուխտի» վկայություններին: Այնուհետև Վեհափառ Հայրապետին սկսեցին ըստ կարգի մոտենալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական աստիճանների ծառայասեր և նվիրյալ ներկայացուցիչները՝ դռնապանները, ջահընկալները, կիսասարկավագները, սարկավագները, քահանաները, եպիսկոպոսները և հասարակության ունևոր (իշխանք) և չքավոր (աղքատք) շերտերը խորհրդանշական կերպով

ներկայացնող զույգ աշխարհականները, հավաստելով ընծայացուների հոգևոր և իմացական պատրաստվածությունը:

Այս ամենից հետո խարտավիլակ, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Աղան Սրբազանի առաջնորդությամբ, ընծայացուները ծնրադիր, ասփիճան առ աստիճան մոտեցան Հայրապետին: Վեհափառ Հայրապետի կատարած հավատո երդարակային քննությունից հետո, սաղմոսերգությամբ ձեռնադրյալներին առաջինը շնորհվեցին եպիսկոպոսական զգեստի մաս կազմող շքեղ եմիփորոնները:

Այնուհետև շարականների երգեցողությամբ, իր հետ եղող առընթերակաների՝ Տ. Հովնան և Տ. Նաթան Սրբազանների ուղեկցությամբ Նորին Սրբությունը Ս. Սրեփանոսի Խորանից ուղղվեց դեպի Ավագ Ս. Խորանը՝ կատարելու ձեռնադրության ծեսի ամենախորհրդավոր մասը՝ օծումը:

«Զի ողորմած եւ մարդասէր ես» մաղթանքից հետո ընծայացուները ծնկաչոք մոտեցան «առ ոտս Սրբազնագոյն Հայրապետի», և Նորին Սուրբ Օծությունը, դնելով իր աջը յուրաքանչյուրի գլխին, սկսեց ընթերցել «Տէր Աստուած մեր» աղոթքը: Ապա նվիրյալները, դպրաց դասի «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեոորոգ շարականի ու սաղմոսերգությունների հնչյունների ներքո, «զձեռսն վեր առեալ», դարձան դեպի արևմուտք՝ խորհրդանշելով իրենց հեռացումը «երկրային կյանքի հաճույքներից»: Եվ սեռ դպիրներից կազմված թափորով հանդիսավորապես Ավագ Ս. Խորան բերվեց Մյուռոնով լի Աղավնին: Ազգիս Հայրապետը Հայոց Սրբալույս Մյուռոնով օրհնեց և օծեց նվիրյալ եկեղեցականների ճակատներն ու աջ ձեռքի բութ մատները: Այս երկրորդ օծումն արդեն եպիսկոպոս հայրերի կյանքում ևս մեկ անգամ նորոգեց, ամրացրեց ու հաստատեց իրենց անդրժելի դաշինքը Աստծո հետ՝ ժողովրդի առաջ ևս մեկ անգամ հավաստելով իրենց պատրաստակամ նպատակասողվածությունը՝ ծառայելու Հայաստանյայց Եկեղեցուն և հայ ազգին:

«Օծումն, զոր հեղեր...» գեղեցիկ աղոթքից հետո Նորին Սրբությունը, իբրև եպիսկոպոսական բարձր տիտղոսի խորհրդանիշ, ընծայացուներին շնորհեց գավազան և մատանի, նաև Ս. Ավետարանը հանձնեց նրանց՝ որպես Աստծո Ամենազոր խոսքի նվիրյալ քարոզիչների:

Ձեռնադրության արարողությունն ավարտվեց «Պատեպանիչ»-ով և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ եպիսկոպոսներին ու հավատացյալ հայորդիներին ուղղված օրհնության խոսքով և մաղթանքով, որում Նորին Սրբությունը մի անդրադարձ կատարելով 1700-ամյակի սեպտեմբերյան արարողություններին՝ ասաց. *«Ահա այս տոնախմբություններից ծնված օրհնեցությունը այսօր շարունակում է հնչել մեր շուրթերին ձեռնադրության այս ուրախ առիթով: Մենք վերստին Աստված ենք փառաբանում, Աստված ենք օրհնեցնում, որ այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համար Միածնաէջ Իջման Սուրբ Մեղանի առջև ձեռնադրում ենք չորս եպիսկոպոսներ, չորս եպիսկոպոսներ այն թեմերի համար, որոնք անաստվածության ծանր տարիներին դժվարին յուծը կրեցին: Այսօր, սակայն, բազում աշխատանքների հրամա-*

յսկանն է ծառացած մեր Եկեղեցու առջև, մեր առաջնորդների ուռջև, որպեսզի խորհրդային ժամանակներին հաջորդող այս նոր շրջանում օր առաջ վերականգնենք եկեղեցիները և վերանորոգենք քրիստոնեական հավատքը հավատավոր մեր զավակաց հոգիներում:

Չորս եպիսկոպոսներից առաջինը՝ Եգրաս աբեղա Ներսիսյանը, ծնված Հայաստանում, Ռակեհատ գյուղում, միջնակարգ կրթությունից հետո ուսանած Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, այնուհետև երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել է որպես հովիվ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի և շարունակել իր ուսումը Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սանկտ Պետերբուրգի Հոգևոր ասպիրանտուրայում: Եգրաս աբեղան հովվական իր գործունեության շրջանին իր ծառայասիրությամբ վայելեց իրեն վստահված հոտի սերն ու հարգանքը, և ամիսներ առաջ Մենք, գնահատելով իր վաստակը, նրան վստահեցինք Մոսկվայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական պաշտոնը: Եվ այսօր թեմական խորհրդի միջնորդությամբ ուրախությամբ ձեռնադրում ենք նրան եպիսկոպոս առաջնորդական նույն Աթոռի վրա:

Երկրորդը՝ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն վարդապետն է: Նույնպես ծնունդ Հայաստանի, ուսանել է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, այնուհետև երկար տարիներ որպես հովիվ պաշտոնավարել Բուլղարիայում՝ միշտ արժանանալով գնահատանքի իր առաջնորդի և Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի: Վերադառնալով Բուլղարիայից, Հոգեշնորհ Հայր Սուրբը նշանակվեց ծառայության Գեղարքունյաց թեմում, իսկ այնուհետև ստանձնեց պաշտոնը Արմավիրի թեմական առաջնորդի:

Երրորդը անձը Միքայել ծ վրդ. Աջապահյանն է՝ ծնած Հայաստան, ուսումը ստացած Հոգևոր Ճեմարանում Էջմիածնի: Երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ ուսանեց Հռոմում, այնուհետև ստանձնեց պատասխանատվություններ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի և Մեր կողմից առաջնորդական պաշտոնի լծվեց Շիրակի թեմում: Այսօր Մենք, ընդառաջելով թեմական խորհրդի միջնորդությանը, նրան ևս սիրով օծեցինք և ձեռնադրեցինք եպիսկոպոս Շիրակի թեմի առաջնորդական Աթոռի վրա:

Ռուսաստանի թեմի առաջնորդ Մովսես Հայր Սուրբը նույնպես Հայաստանի ծնունդ է, ծնվել է Գառնիում, ուսանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, այնուհետև իր ուսումը շարունակել Զագորսկի Հոգևոր Ակադեմիայում, ապա Մոսկվայում երկար տարիներ հոգևոր հովիվ ծառայելուց հետո, պաշտոնի լծվեց Հարավային Ռուսաստանում որպես առաջնորդ:

Այս չորս եպիսկոպոսներին այսօր օրհնելությունը վերստին մեր շուրթերին մենք օծեցինք և ձեռնադրեցինք, հավատով, որ նրանք պիտի կարողանան նվիրումով, սիրով և իմաստությամբ որպես քաջ և ճշմարիտ հո-

վիվներ առաջնորդել իրենց վստահված թեմերը, պիտի կարողանան առաջնորդել իրենց վստահված ժողովրդին Քրիստոսի Սուրբ Ավետարանի պատգամների և պատգամների ճանապարհով: Պիտի կարողանան հավատքը ամրակայել մեր ժողովրդի հոգիներից ներս, որպեսզի մեր ժողովրդի զավակները զոհաբերած հավատքով շարունակեն քրիստոնեական իրենց կյանքը՝ հավատարիմ իրենց սրբազան հայրերի ավանդներին:

Ս. Պատարագի ավարտից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեղանատանը տեղի ունեցավ ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը նորաձև եպիսկոպոսներին հանձնեց պանագիներ:

Թող Բարձրյալ Տերն Իր ամենասքեղծ Աջի հովանու ներքո պահի և պահպանի նվիրյալ սպասավորներին, որպեսզի իրենց բարձր առաքելության մեջ անդրդվելի առաջնորդեն հայ ժողովրդին Քրիստոսավանդ սրբազան հավատքի մեջ՝ «ի փառս Աստուծոյ եւ ի պանծացումն Հայոց Եկեղեցւոյ»:

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ

Տ. ԵՂՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1977 թ. ավարտել է գեղի միջնակարգ դպրոցը:

1978 թ. մեկնել է զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո, 1980 թ., ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի գտնի օրը, Տ. Ներսես եպս. Պոգաբալյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և պաշտպանել «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ձեռնադրության Մաշտոցի» զարգացումը Ժ-ԺԴ դդ.» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հրամանով, ձեռամբ Տ. Ներսես եպս. Պոգաբալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1984-1986 թթ. Հոգևոր Ճեմարանում դասավանդել է «Ներածություն Հին Կտակարանի» առարկան:

1986-1988 թթ. ստորել է Լենինգրադի Հոգևոր ակադեմիայում:

1988 թ. նշանակվել է Լենինգրադի հոգևոր հովիվ:

2000 թ. հոկտեմբեր ամսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է վարդապետական աստիճան:

2001 թ. ապրիլից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիոյ պատրիարքությունում՝ Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծության Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. սեպտեմբերի 20-ին Իրանի Աբադան քաղաքում:

1969 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Հայաստան:

1970-1980 թթ. սովորել է Էջմիածնի № 6 միջնակարգ դպրոցում:

1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1984 թ., ձեռամբ Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Սարգիս Շնորհալու հորդորակների մեկնությունը» թեմայով:

1987 թ. հունիսի 7-ին, Ներսես արքեպս. Պոզապալյանի ձեռամբ, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1987-1988 թթ. Արարատյան Հայրապետական թեմում վարել է առաջնորդական փոխանորդի օգնականի պաշտոնը:

1988 թ. պաշտոնավարել է Բուլղարահայոց թեմում որպես հոգևոր հովիվ՝ նախ Սոֆիայում, ապա Վառնայում:

1991 թ. պաշտպանել է վարդապետական թեզ «Բուլղար Ուղղափառ Եկեղեցին» թեմայով:

1999 թ. պաշտոնավարել է Արարատյան Հայրապետական թեմում որպես առաջնորդական փոխանորդի օգնական Արարատի մարզում:

2000 թ. մայիսի 22-ից. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ. նշանակվել է Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ:

2001 թ. օգոստոսի 1-ից. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ. նշանակվել է Արմավիրի թեմի առաջնորդ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին. ձեռամբ Նորին Սրբը Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ծնվել է 1963 թ. դեկտեմբերի 27-ին, Գյումրիում:

1981 թ. ավարտել է տեղի Գ. Սունդուկյանի (այժմ՝ Ջ. Բայրոնի) անվան թիվ 20 միջնակարգ դպրոցը և ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1982-84 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը և 1986 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել սարկավագ:

1987 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Ճեմարանը և ծառայության անցել Վեհարանում՝ որպես քարտուղար:

1988 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պետրոս արքեպս. Բերդումյան. կյանքն ու գործը և «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը» թեմայով՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

Նույն թվականի մայիսի 22-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա և վերանվանվել Տ. Միքայել՝ ի հիշատակ Ադանայի ջարդի (1909 թ.) ժամանակ նահա-

տակված Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի: Ձեռնադրությունից հետո կատարել է Մայր Տաճարի ավագ լուսարարի պարտականությունները:

1988-89 ուստարում ծառայել է Հոգևոր Ճեմարանում որպես դաստիարակ՝ միաժամանակ դասավանդելով «Ս. Պատարագի մեկնություն» առարկան: 1988 թ. դեկտեմբերյան աղետաբեր երկրաշարժից հետո մասնակցել է ադեպյալներին օժանդակություն բաշխելու Մայր Աթոռի աշխատանքներին:

1989 թ. նշանակվել է Եղեգնաձորի Ս. Խաչ վանքի վանահայր, ապա մեկնել վերաբացված Արցախի թեմ ստանձնելով Գանձասարի վանքի վանահոր պարտականությունները:

1989 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Կիլիկիայի մայրաքաղաք Սիսը 1890-1920 թթ.» թեմայով, և ստացել վարդապետական աստիճան:

1990-91 թթ. աշխատել է Մայր Աթոռի նորաստեղծ Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում:

1991-92 թթ. եղել է Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ՝ միաժամանակ դասավանդելով «Հայրաբանություն», «Ընդհանուր Եկեղեցու պատմություն» և «Հին Կտակարանի մեկնություն» առարկաները:

1992-94 թթ. ծառայել է որպես Մայր Տաճարի փոխլուսարարապետ՝ շարունակելով դասավանդությունները Հոգևոր Ճեմարանում:

1994 թ. մայիսին պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ՝ «Ս. Կղեմես եպս. Հռոմայեցի» թեմայով, և ստացել ծայրագույն վարդապետական աստիճան:

1994-95 թթ. եղել է նախ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, ապա երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի անձնական քարտուղարն ու գավազանակիրը: 1995-97 թթ. ուսանել է Հռոմի Պապական Արևելյան Ինստիտուտում: 1997 թ. հունիսին ներկայացնելով «Պողոս Տարոնացին ն իր «Բացայայտութիւն կարգաց ժամուց աղօթից» աշխատությունը» վերնագրով թեզը՝ ստացել է Արևելյան եկեղեցական գիտությունների մագիստրոսի գիտական աստիճան:

1997-99 թթ. եղել է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի օգնականը՝ միջեկեղեցական հարաբերությունների և հատուկ առաքելությունների գծով: Այս հանգամանքով մասնակցել է մի շարք քաղաքներում տեղի ունեցած համաժողովների ու կոնֆերանսների:

1987-1999 թթ. Հայր Միքայելը հրատարակել է մեծաթիվ բանասիրական-աստվածաբանական հոդվածներ «Էջմիածին» և «Գանձասար» հանդեսներում, հանդես է եկել դասախոսություններով Հայաստանում և արտերկրում:

1999 թ. մարտից մինչև 2000 թ. մայիսը համատեղության կարգով եղել է Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի տնօրենը:

1999 թ. սեպտեմբերին ընտրվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք և կարգ» հանձնաժողովի անդամ:

1999 թ. դեկտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ: 2000 թ. մայիսի 5-ին, Վեհափառ Հայրապետի մեկ այլ տնօրինությամբ, համատեղության կարգով, նշանակվել է Հնդկաստանում Հայրապետական լիազոր ներկայացուցիչ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծության Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս և հաստատվել որպես Շիրակի թեմի առաջնորդ:

Տ. ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 13-ին, Աբովյանի շրջանի Գողթ գյուղում:

1970-1981 թթ. սովորել և ավարտել է գեղի միջնակարգ դպրոցը:

1982-1989 թթ. սովորել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1983-1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1989 թ. մայիսի 7-ին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1989 թ. օգոստոսի 7-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ակների դպրոցը» թեմայով:

1989 թ. հոկտեմբերի 1-ից, Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ուսումը շարունակելու նպատակով, ընդունվել է Զագորսկի Հոգևոր Ակադեմիա, որն ավարտել է 1991 թ., ստացել աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան՝ պաշտպանելով «Հայ Եկեղեցու թեմերը Ռուսաստանում» թեզը:

1991 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և նշանակվել Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ:

Հոգևոր հովվության տարիներին, եկեղեցական ծառայությանը զուգահեռ, կրոնական դասեր է ավանդել տեղի հայկական գիմնազիայում, ինչպես նաև եռեռնել Մոսկվայի հայկական համայնքում իրականացվող քրիստոնեական կրթության և դաստիարակության աշխատանքներին:

1996 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հայ Եկեղեցու քրիստոսաբանական միտքը 8-րդ դարում Ս. Հովհան Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի երկերում» թեմայով:

1996 թ. հունիսի 23-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի, ստացել է վարդապետական աստիճան:

1997 թ. ապրիլից մինչև 1999 թ. դեկտեմբեր, Գարեգին Ա Երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ, եղել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր:

1999 թ. դեկտեմբերին, Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխանորդ, 2001 թ. ապրիլից Վեհափառ Հայրապետի նոր տնօրինությամբ՝ առաջնորդ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

ԲԱՋՄԱԽՈՐՀՈՒՐԴ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21-րդ դարի սկիզբ: 2001 թվական: Համայն հայ ժողովրդի համար նվիրական հոբելյանական դարադարձ: Այս տարի լրացավ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը:

Այսօր տոն է, ցնծություն համայն հայ ժողովրդի համար: Տասնյոթ դար առաջ հայ ժողովուրդը մեկընդմիշտ թոթափեց իրենից, ժխտեց տարամերժ հավատալիքները՝ կռապաշտությունը, արևապաշտությունը և նմանատիպ ոչ հոգեկերտ դավանանքները և մեկընդմիշտ ընդունեց իր համար ճշմարիտ ու անփոխարինելի մի կրոն, հավատք, որ համայն մարդկությանն ուղղորդում է դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոս:

2001 թվականը ողջ հայ ժողովրդի համար սկսվեց սույն հոբելյանական տոնակատարությունների նախապատրաստություններով: Կազմակերպվեցին ուխտագնացություններ դեպի մեր սրբավայրերը աշխարհի չորս ծագերում, ի թիվս որոնց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի գլխավորությամբ և առաջնորդությամբ խոնարհության և հիշատակի, աղոթքի և ծնրադրության ուխտագնացություն կազմակերպվեց դեպի Դեր Զոր, սրբացած այն վայրերը, որտեղ Մեծ եղեռնի չարագույժ օրերին Օսմանյան Կայսրության կողմից ծրագրավորված անասելի ու անլսելի նախճիր կազմակերպվեց իր հայրենիքում հանգիստ ու խաղաղ ապրող բարեպաշտ ու լուսավորյալ հայ ժողովրդի հանդեպ:

Ապրիլի 24-ին, երեքշաբթի օրը, Դեր Զորի անապատներում մեր սուրբ մարտիրոսների հիշատակին վեր խոյացած Ս. Նահատակաց եկեղեցու կամարների ներքո Վեհափառ Հայրապետը մատուցեց Ս. Պատարագ և իր քարոզ-պատգամում շեշտեց.

«Անապատի տոթակեզ քամին ավազով ծածկեց անթաղ մնացած ձեր աճյունները: Բայց մի՞թե Բարձրյալի աչքից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդկային ամոթը: Մի՞թե ոճրապարտ մտքով ու ձեռքով գործվածը, որ սրատեց ու բնավեր արեց ստեղծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պատվել ու ջնջվել սերունդների հիշողությունից»:

Ի հեճուկս այդպիսի վայրագ ցեղերի, հայ ժողովուրդն իր աննկուն կամքի և անկոտրում ներուժի շնորհիվ շարունակեց ապրել, հաստատորեն և աներեր իր քայլերն ուղղեց դեպի հավերժի գոյատևում:

Հակընդդեմ դերզորյան ողբերգական իրադարձությունների հիշատակումի, սեպտեմբեր ամսվա ընթացքում նշվեցին մի շարք հոբելյաններ, և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Սրբալույս Մեռոնի օրհնությունը:

1700-ամյակի այս հոբելյանական տարում նշվեց նաև Հայաստանի Հանրապետության անկախության տասնամյակը: Հայաստանում և արտերկրում սեպտեմբերի 21-ին՝ անկախության օրը, կազմակերպվեցին հոբելյանական հանդիսություններ և արվեստի ճոխ միջոցառումներ, որի եզրափակիչ ակորդը եղավ, անշուշտ, Երևանի Հանրապետության հրապարակում կազմակերպված համերգ-տոնահանդեսը: Մարդիկ, մեծ ու փոքր, մինչև ուշ գիշեր հրճվում էին, ցնծում՝ իրենց արդար արյուն-քրտինքով այս փոքրիկ հողատարածքում հաստատած Հայաստանի անկախ պետականության առկա իրողության համար:

Ցուրաքանչյուր ժողովուրդ եթե արդարամտորեն աշխատի, ընդհանուրի շահերը վեր դասի ամեն ինչից և ազնվորեն տենչա ու պայքարի այդ նպատակների իրականացման համար, ապա տվյալ ժողովրդի մնայուն գոյությունն աներկբա է և հավանաբար հավերժական՝ նախախնամությամբ, անշուշտ, Ամենակարող Տիրոջ:

Մեռոնօրհնեքի արարողությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում տեղի է ունենում հինգից յոթ տարին մեկ անգամ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական հանդիսապետությամբ և ձեռամբ, որի ընթացքում Հին Մեռոնը միախառնվում է Նոր Մեռոնին՝ վերջինիս շնորհելով քրիստոսապարգև ավանդական նոր ուժ և իմաստ ու զորություն: Հայ Եկեղեցում դարավոր այս ավանդույթը խորհրդանշումն է այն բանի, որ մկրտության արարողության ընթացքում նորաօծյալն արժանիորեն հետևորդն ու շարունակողն է համարվում իր նախորդների՝ Մեռոնի դրոշմամբ վերափոխվելով ու դառնալով Հայ Առաքելական Եկեղեցու օծյալ և նվիրյալ զավակ:

2001 թվականի Մեռոնօրհնության հանդիսավոր արարողությունը կատարվեց սեպտեմբերի 22-ին, շաբաթ օրը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և ձեռամբ: Հայ ժողովրդի համար եզակի այս երևույթ-արարողությունը՝ Մեռոնօրհնությունը, տեղի ունեցավ Մայր Աթոռի շրջափակում վերջերս կառուցված և Նորին Սրբության իսկ ձեռամբ օծված Բաց Խորանին: Սրբազան այս արարողության ընթացքում Մայր Աթոռի ողջ տարածքը լի էր բազմահազար հայ հավատացյալներով:

Իր հոգևոր և ազգանվեր գործունեության ընթացքում Վեհափառ Հայրապետն առաջին անգամ պատիվն ու իրավունքն ունեցավ հանդիսապետելու Մեռոնօրհնության արարողությանը և անձամբ օրհնելու Նոր Մեռոնը և միախառնելու այն դարերի խորքից ավանդաբար մեզ հասած և սրբություն սրբոց դարձած Հին Մեռոնին, որ տասնյակ դարերից ի վեր եկած և մեզ հասած սրբազործված ավանդական իրողությունն է հայոց կյանքում, որ հավանաբար պիտի շարունակվի հայ կյանքում հավերժորեն:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

1700-ամյակի սրբազան այս տոնակատարությունների շրջանակում, ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի և ներկայությամբ քույր Եկեղեցիների

հոգևոր պետերի, պետական պաշտոնական անձանց և բազմահազար հայ հավատավոր ժողովրդի, սեպտեմբերի 23-ին, կիրակի օրը, կատարվեց նաև օծումը Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Ներակառույց Մայր եկեղեցու: Զափազանց մեծ էր եռուզեռը հոյակերտ այս եկեղեցու շրջակայքում, կարելի է ասել՝ նաև ողջ քաղաքամայր Երևանի փողոցներում: Զէ՞ որ վեր էր խոյանում դեպի երկինք ձգվող մի եկեղեցու գմբեթ, որի կամարների ներքո այսուհետ և ընդմիշտ մատուցվելու են Սուրբ Պատարագներ և կերտվելու են հայ հոգիները մեր Տեր Հիսուս Քրիստոսի անմահ ու հավերժական պատգամներով:

«Քաջալերեաց, դուստր. Տէր յերկնից եւ երկրի տացէ քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն փոխանակ տրտմութեանն այսորիկ. քաջալերեաց, դուստր, քաջալերեաց» (Տոբիթ է 20):

1700-ամյակի տոնակատարությունների և էկումենիկ փոխայցելությունների շրջանակներում սեպտեմբերի 25-27-ը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Սրբազան Քահանայապետին դիմավորելիս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարիգալը ասաց իր խոսքում շեշտեց, որ «սուրբգրական Արարատի դիմաց ուրախություն ունենք ընդունելու Սուրբ Պետրոսի Աթոռի Գահակալին: ... Աղոթենք միասնաբար, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, որ Ձեր այցելությունը առավել սերտացնի մեր Եկեղեցիների հարաբերությունները, սիրո շաղախով արդյունավորի մեր համագործակցությունը: Եվ թող Աստված հաճությամբ ընդունի և օրհնի Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրությունը՝ ի շահ Քրիստոսի Եկեղեցու զորության, ի փառս Աստուծոյ»:

Իր պատասխան շնորհակալական խոսքում Հռոմի Սրբազան Քահանայապետը ասաց, որ «գալիս է մեծարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քրիստոնեական կյանքի բացառիկ վկայությունը այսքան երկար դարերի ընթացքին և հատկապես 20-րդ դարում, որ ձեզ համար եղավ սարսափի ու տառապանքի անկարագրելի ժամանակաշրջան»:

Ս. Էջմիածին էկումենիկ եղբայրական այցելության ընթացքում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետը եղավ Հայաստանի Հանրապետության պատմա-մշակութային կենտրոններում՝ վանքերում և եկեղեցիներում, հատկապես այցելեց Խոր Վիրապ և ականատեսը եղավ այն պատմական վայրի, որտեղ տասներեք երկարաձիգ տարիներ իր տառապալից օրերն էր անցկացրել Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Երկօրյա այցելությամբ Հայաստանում գտնվելուց հետո, Հռոմի Պապը հրաժեշտի շնորհակալական իր խոսքում գոհունակություն հայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Հայաստանի Հանրապետության նախագահին և հայ ժո-

դովրդին՝ իր և իր պատվիրակության նկատմամբ այս օրերին ցուցաբերած ջերմ ու անկեղծ ընդունելության համար, և շեշտեց.

«Միշտ է, դժվար է հարատևելը, բայց, սիրելի հայ բարեկամներ, անդրդվելի մնացեք հույսի մեջ, հիշեցեք, որ ձեր հույսը դրել եք Քրիստոսի վրա: Ամբողջ աշխարհի ձեր հայ եղբայրներին և քույրերին որպես նեցուկ ունենալով՝ հանձնառություն եք ստանձնել ձեր երկիրը և հասարակությունը ազատության մեջ վերակերտելու»:

Հոգեցունց ու հոգեզորով էին ազգային-եկեղեցական այս տոնախմբություններն ու միջոցառումները, այո՛, ամոռաց, բայց և, այնուամենայնիվ, թերի կլինեին, եթե ...

Արժանահիշատակ այս տոնախմբություններից, միջոցառումներից և ուխտագնացություններից բացի, օգոստոսի 21-ին լրացավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 50-ամյակը: Հոբելյանական այս տարեթիվը՝ 2001 թվականը, «միտումնավոր» կերպով իր մեջ ներառել էր նաև մեր Վեհափառ Հայրապետի ծննդյան հոբելյանը, որը համազգային, համաժողովրդական ցնծության տոնախմբության վերածվեց ողջ հայ ժողովրդի համար, որովհետև ...

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եղել էր իր նախորդներից մեկի՝ համաժողովրդական անսահման ակնածանքի և հարգանքի արժանացած երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի արժանավոր աշակերտը: Եվ Հայոց Հայրապետն ապացուցեց, որ ինքն արժանի հետևորդն է այդ մեծ ու վսեմ անձնավորության:

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը մի առիթով ասել էր. «Եթե իմանայի, որ ես, հոգևորական դառնալով, չեմ ծառայելու իմ ժողովրդին, հոգևորական չէի դառնա»: Եվ իրոք, իր խոսքին հավատարիմ, լուսահոգի Կաթողիկոսն անմնացորդ նվիրվեց իր Եկեղեցուն ու ժողովրդին ծառայելու սրբազնագույն առաքելությանը:

Հավատարիմ իր անմահ ուսուցչի պատգամներին, մեր Վեհափառն իր առաջին իսկ կոնդակում հորդոր-կոչ հղեց համայն հայ ժողովրդին.

«Հայրական պատգամ ու կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ «հավատի բարի մարտը» մղելու և նորոգելու հոգիներում «Սուրբ սրտից, բարի խղճմտանքից, անկեղծ հավատից» բխած Սերը: Սերը առ մեր հայրերի Աստված, սեր առ Հայրենիս, սերը առ հավատքի անսասան վեմ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մեր Հոգու ծննդավայրն ու տապանը փրկության, մեր միության ակունքը, և հարատևության շնորհը մեզ: Երկյուղածությամբ պահպանենք մեզ ավանդված 2000-ամյա սրբազան ժառանգությունը»:

Եվ Գարեգին Բ Վեհափառն անկոտրում կամքով և համառ ջանադրությամբ իր ողջ հոգևոր գործունեության ընթացքում հավատարիմ մնաց իր Մեծ Ուսուցչին և անխաթար կերպով քայլեց նրա բավիղներով ու կածաններով: Իսկ այժմ արդեն, անկախ ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետության արդի պայմաններում, մեր

Վեհափառի առջև բացվել են առաքելության լայնահուն ու լուսավոր մայրուղիներ՝ հպարտորեն քայլելու և գործելու ի նպաստ Հայ Առաքելական Եկեղեցու և ի բարօրություն համայն հայ ժողովրդի:

Թող բարի ե՛րթ լինի մեր Վեհափառին՝ առաքելահաստատ իր ճանապարհին:

Թող հավերժի ճամփան բռնած հայ ժողովուրդն աներեր ու հաստատուն քայլերով ընթանա դեպի իր սուրբ նպատակակետ:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՓՈԽՈՒՄԲԱԳԻՐ

1700-ԱՄՅԱԿԻ ԽՈՐՀՐԴՈՎ

ՆԱՋԻԿ ԽԱՆՋՅԱՆ
ՍԻՐԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՑԱՆԿԵՐԸ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Երևանի Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրերում կան նաև Ս. Մյուռոնին նվիրված բազմաթիվ նյութեր: Դրանք ընդգրկում են բազմաբնույթ տեղեկություններ Ս. Մյուռոնի աստվածային շնորհների, անհրաժեշտ բույսերի ու նյութերի և դրանց ցուցակների, պատրաստության համար Մյուռոնօրհնության կանոնների և այլնի մասին: Հայ Եկեղեցում սկզբնական շրջանում Ս. Մյուռոնի պատրաստման և օրհնության մասին պատմական վավերագրերը տեղեկություններ չեն պարունակում[1]:

Հայ Եկեղեցու Ս. Մյուռոնի պատրաստմանը նվիրված ներկայումս հայտնի ամենահին վկայությունը գտնվում է 10-րդ դարի պատմիչ Ուխտանեսի «պատմությունում», որում ասվում է, որ կաթողիկոսական ընտրության առիթով գումարված ժողովներին մասնակցելու նպատակով երկրի տարբեր կողմերից հավաքված եպիսկոպոսների խնդրանքով նորընտիր Աբրահամ Հայրապետը (607-615) օրհնում է «... իւղ օծութեան...», այսինքն «զՄիւռոն ...»: Ս. Մյուռոնի նյութերը պատրաստել էր տեղապահը «... զայնքան առուրս ամսոցն ընդ մէջ անցելոցն յառաջին ժողովոյն եպիսկոպոսացն մինչեւ ցերրորդ ժողովն ...» (էջ 67):

Հատուկ կանգ չառնելով այս չափազանց արժեքավոր պատմական վկայության վրա, որը լուսաբանվել է նաև այլ հեղինակների[2] կողմից, նշենք այս գրության մի քանի տողերից բխող շատ կարևոր հետևությունները Մյուռոնօրհնության վերաբերյալ: Այսպես, Հայ Եկեղեցում այն օրհնում է միայն կաթողիկոսը. «Զի զկնի մահուանն Մովսէսի ոչ էր այլ օրհնեալ իւղ օծութեան», այն էլ աթոռանիստ վայրում: Օրհնված Մյուռոնը բաժանվում է վիճակներին՝ թեմերին, Հայրապետի կողմից.

---

[1] Մ. արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, 1959, հատոր Ա, մաս Ա:- Դ. Ե., Օրհնութիւն Ս. Միւռոնի, Անթիլիաս, 1948:

[2] Վ. Դերինկյան, Սրբալույս Մյուռոն (կանոնացման պատմությունը, օրհնության ընթացքը և ժողովրդային պաշտամունքը). «Էջմիածին», 1996, № Թ:

«...և տալ նոցա (եպիսկոպոսներին)... որով օծանեն եւ լուսաւորեն ամենայն ուղղափառ հաւատացեալք», և այլն:

Եթե նկատի ունենանք, որ *Մյուռոն*-ը հունարեն բառ է և նշանակում է *անուշահոտություն* կամ *օծանելիք*, ինչպես նաև Մանուել վարդապետ Քաջունու բացատրությունը այն մասին, որ հնում «իտղագործութիւն»-ը կամ, ինչպես կոչում էին նաև «իտեմեցութիւն»-ը, արվեստի կատարելության հասած պատվաբեր գործը մասնագիտությունն էր այն մարդկանց, որոնք ստեղծում էին բուրավետ նյութերով հոտավետացված մածուկներ, քսուկներ և այլ նյութեր «ի յարդարանս մարմնոյ»[3] գործածելու համար, ապա հասկանալի կդառնա, որ Ուխտանես եպիսկոպոսի վերջին մեջբերված նախադասությունը ակնհայտորեն արտահայտում է աստվածաշնչային այն կարևոր պատգամը, թե «Դրանից կպատրաստես սուրբ օծության համար յուղ այնպես, ինչպես վարպետ յուղագործները ձեթ են պատրաստում» (Ելք Լ, 25): Այսինքն՝ դեռ VII դարի սկզբում, յուղագործների արհեստի համաձայն, նյութերի համախառնումը վաղուց հայտնի և սովորության ուժ ստացած երևույթ էր Հայ Եկեղեցում, քանի որ «Վրթանէս Տեղապահ Աթոռոյն... գործեալ եւ կազմեալ ի պատրաստի ունէին» Ս. Մյուռոնի նյութերը:

Ս. Մյուռոնի նյութերի ցուցակներն ի հայտ են գալիս մեծ ընդմիջումից հետո, XV դարի թիվ 4997 ձեռագրում: Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի համաձայն՝ հիշյալ ձեռագիրը գրել է Ստեփանոսը 1461 թ. Էջմիածնում: Այն կազմված է 137 թերթից, որտեղ այլևայլ նյութերի հետ մեկտեղ 75ա թ. կա «այս է նիւթք եւ պէտք Սրբալոյս Մեռոնին»: Այստեղ տրվում են 40 բույսերի ժողովրդական անունները կշռաչափերի հետ:

Մատենադարանում պահվող ձեռագրերը, ուր զետեղված են Ս. Մյուռոնի նյութերի ցուցակները, մոտ մեկ տասնյակ են: Դրանք Մաշտոց-Ծիսարաններ են, ժողովածուներ, բժշկարաններ, և միշտ չէ, որ հայտնի են մանրամասներ դրանց հեղինակների, գրության վայրի, գրչի և այլնի մասին:

Ստորև, աղյուսակի տեսքով, տրվում են Մատենադարանի՝ Ս. Մյուռոնին նվիրված ձեռագրերի համարները և ընդհանուր տեղեկություններ դրանց մասին[4]: Ցուրաքանչյուր սկզբնաղբյուրի համար նշվում է նաև նրանում բերվող նյութերի քանակը:

Ս. ՄՅՈՒՌՈՆԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

ՁԵՌԱԳՐԻ ՀԱՄԱՐԸ	ՁԵՌԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ	ՆՅՈՒԹԵՐԻ ՔԱՆԱԿԸ
4997	Մաշտոց	1461 թ.	40
3211	Մաշտոց ձեռնադրության	ԺԶ դար	40

[3] Մ. Քաջունի, Բառագիրք արուեստից եւ ի գիտութեանց եւ ի զեղեցիկ դպրութեանց, հատոր Բ, Վենետիկ, 1892:

[4] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Բ, Երևան, 1965:

2295	Ժողովածու	1683 թ.	40
6275	Բժշկարան	ԺԷ դար	58
8444	Ժողովածու (Ծաձողարան)	1731-1735 թթ.	46
2939	Ժողովածու	1779-1799 թթ.	40
8219	Ժողովածու	ԺԹ դար (1821 թ. հետո)	40
6233	Բժշկարան	1831-1834 թթ.	48
5466	Օրհնություն մյուռոնի	1864 թ.	44
2786	Ժողովածու	ԺԹ դար	58

Ամենաընդհանուր ձևով ամփոփելով աղյուսակի տվյալները՝ կարելի է նշել, որ Մատենադարանի՝ Ս. Մյուռոնի ցուցակներում նվիրված էջերը հայտնի են սկսած XV դարից: XV, ինչպես նաև XVI դարերից մեզ հայտնի են մեկական ձեռագիր: Ս. Մյուռոնի ցուցակները XVII և XVIII դարերից երկուական են, իսկ XIX դարից՝ չորսը*: Ընդ որում բովանդակության առումով ձեռագրերից երեքը Մաշտոցներ են, որոնցից մեկը (թիվ 5466) հատուկ նվիրված է Մյուռոնօրհնությանը, իսկ մնացածը ժողովածուներ և բժշկարաններ են: Հարկ է նաև նշել, որ հայտնի են դրանցից մի քանիսի գրության վայրերը՝ Գաղատիա (ձեռ. թիվ 2295), Գյուղ Նովիտա, Նոր Նախիջևան, Նորաշեն (ձեռ. թիվ 2939), Զարարերդ (ձեռ. թիվ 8217), Թիֆլիս (ձեռ. թիվ 6233): Ձեռագրերում բույսերի և նյութերի անունները նշված են տարբեր ուղղագրությամբ:

Ս. Մյուռոնի բույսերի և նյութերի թվաքանակի ճշտման և որակական կազմի բացահայտման առումով հետաքրքիր են ցուցակներում ընդգրկված բույսերի և նյութերի քանակի ու անունների համեմատական վերլուծության արդյունքները: Թվական տվյալների համադրումից ստացվում է հետևյալ պատկերը.

40 բույս և նյութ առկա է 5 ձեռագրում (XV-XIX դարեր)

44 բույս և նյութ՝ 1 ձեռագրում (XIX դար)

46 բույս և նյութ՝ 1 ձեռագրում (XVIII դար)

48 բույս և նյութ՝ 1 ձեռագրում (XIX դար)

58 բույս և նյութ՝ 2 ձեռագրում (XVII և XIX դար)

Ս. Մյուռոնի ցուցակներում առկա բույսերի և նյութերի քանակական համեմատությունը ցույց է տալիս, որ ձեռագիր աղբյուրներում գերակշռում են 40 բույս և նյութ պարունակող ցուցակները, որոնք հայտնի են XV դարից սկսած՝ հաջորդա-

* Խմբագրության կողմից - Առավել ամբողջական պատկեր, սակայն, կարող ենք ունենալ միայն այն ժամանակ, երբ այս տեսանկյունից նայվեն մեզ հասած ձեռագիր Մաշտոցներն ու բժշկարանները:

բար բոլոր դարերի ձեռագրերում: 44, 46 և 48 բույս և նյութ պարունակող ցուցակները մեկական են, իսկ 58 բույս և նյութ առկա են երկու ձեռագրում:

Ցուցակների նյութերը միմյանց հետ համեմատելու արդյունքում ստացված ամենակարևոր հետևությունը հետևյալն է. անկախ ցուցակի գրության կամ տպագրության վայրից, ստեղծման ժամանակաշրջանից, կազմող հեղինակից կամ ընդօրինակող գրչից, վերը նշված բոլոր աղբյուրներում, չպահպանվելով հանդերձ բույսերի և նյութերի հերթականությունը, կրկնվում են միևնույն 40 բույսը և նյութը, որոնք առկա են առայժմ մեզ հայտնի առաջին՝ XV դարի թիվ 4997 ձեռագրում: Չի բացառվում, որ դրանք ընդօրինակվել են միևնույն սկզբնաղբյուրից, ընդ որում՝ մեծ զգուշությամբ. երբեմն ստեղծագործական մոտեցմամբ ավելացվել են նոր անուններ, տրվել մեկնաբանություններ և այլն: Սակայն բոլոր դեպքերում ընդօրինակելիս ցուցաբերվել է այդ գործի քաջ իմացություն: Այսպիսով, թեև չի պահպանվել Ս. Մյուռոնի բույսերի և նյութերի ընդհանուր թվաքանակի կայունությունը, այնուհանդերձ Ս. Մյուռոնի 40 բույսի և նյութի տեսակաշարը կայուն է մնացել:

Ս. Մյուռոնի 40 բույսի և նյութի մեջ բացառություն են կազմում «վարդ» և «ճապուտ» բառերը, որոնցից առաջինը ընդհանրապես բացակայում է թիվ 6275 (XVII դար) և թիվ 2786 (XIX դար), իսկ երկրորդը՝ նաև թիվ 8444 (XVII դար) և 6233 (XIX դար) ձեռագրերի ցուցակներում: Իսկ այդ նշանակում է, որ ավելի վաղ ցուցակներում արտահայտված «ճապուտ»-ը ժամանակի ընթացքում առհասարակ վերացել է, իսկ «վարդ»-ը թեև վերացել է, սակայն, բարեբախտաբար, վարդի հետ կապված նյութերը պահպանվել են վաղ ցուցակներում նրանց երեք տարբեր ձևերի առկայության շնորհիվ («պլլուկ վարդ», «վարդ», «վարդէջուր»):

Հատկանշական է և այն, որ բոլոր ձեռագրերում առաջին ամենակարևոր նյութը բալասանն է, թեև այն արտահայտված է տարբեր ուղղագրություններով («Պալասանի, փայտի հունտ»՝ ձեռ. թիվ 3211, «Պալասանի փայատն և հունդ»՝ ձեռ. թիվ 2255): Ավելին. թիվ 2786 (XIX դար) ձեռագիր ցուցակում բալասանը ներկայացված է երկու անգամ՝ հավանաբար այս կերպ կարևորելով դրա նշանակությունը Ս. Մյուռոնի պատրաստման գործում:

Ձեռագիր բոլոր ցուցակներում հավանաբար ակնհայտ լինելու պատճառով բացակայում է Ս. Մյուռոնի հիմնական նյութը՝ ձիթապտղի ձեթը, որն առկա է արդեն ավելի ուշ տպագիր աղբյուրներում նյութերի ցուցակից հետո: Այստեղ հարկ է նաև նշել այն, որ Հին Հայաստանի կյանքում, անշուշտ անհրաժեշտությունից դրդված, ներմուծվող ձիթապտղի ձեթին հաճախ փոխարինել է տեղական կտավատի ձեթը:

Ինչ վերաբերում է Ս. Մյուռոնի ավելի ուշ ցուցակներում հայտնված նոր նյութերին, այսպես կոչված՝ նորամուծություններին, որոնք հանդիպում են ավելի քան 40 նյութ պարունակող ցուցակներում, ապա այդ ցուցակների նորամուծված նյութերից



Մեռոնի ձեռագիր ցուցակ
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան,
Ձեռ. թիվ 2295, թ. 29ա

շատերը նույնությամբ կրկնվում են: Այստեղ առանձնապես կանգ չառնելով Ս. Մյուռոնի ցուցակների նորամուծությունների վրա, որն ուսումնասիրության հատուկ առարկա է, նշենք միայն, որ նոր հավելված *ֆլֆուլ, հապլղար, սմբուկ խաթայի* և այլ անունները հանդիպում են 40-ից ավելի նյութ պարունակող ձեռագրերում:

Ձեռագիր ցուցակները միմյանց հետ համեմատելիս, անհնար էր չնկատել նաև անունների կրկնությունը, որն առկա է միևնույն ցուցակում, ինչպես վերը հիշատակված օրինակում. «Պլլուկ վարդ», «վարդ» և «վարդէջուր» (ձեռ. թիվ 3211, թիվ 2295 և այլն): Այս կապակցությամբ պետք է հատուկ նշել, որ ցուցակների հայատառ բազմալեզու ժողովրդական անուններով առաջնորդվելիս, առանց ճանաչելու, այսինքն՝ ստույգ իմանալու տվյալ նյութի աղբյուր հանդիսացող բույսի ցեղի և տեսակի կրկնակի անունը, հնարավոր չէ որոշել բույսերի կրկնության հարցը: Դրա փայլուն ապացույցն արդեն ունենք 1876 թ. Վաղարշապատում տպագրված «Կանոն օրհնութեան Սրբալոյս Մեռոնին» Մաշտոցի ցուցակի վերլուծության ժամանակ[5]:

Ս. Մեռոնի մատենագիր աղբյուրների ցանկ

Ստորև տրվում են տեղեկություններ Մատենադարանում պահվող՝ Ս. Մեռոնին նվիրված ձեռագրերի մասին, որոնցում առկա են Ս. Մեռոնի բույսերի և նյութերի ցուցակները: Ձեռագրերի ստեղծման ժամանակը, վայրը և գրիչի անունը նշվում է ըստ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի»: Բերվում են նաև Մեռոնի նյութերի ցուցակների վերնագրերը և էջերը:

Ձեռ. թիվ 4997, Մաշտոց
1461 թ.: Էջմիածին: Գրիչ՝ Ստեփանոս:
Վերնագիր՝ «Այս են նիւթք եւ պէտք Սրբալոյս Մեռոնին», թ. 75ա:

Ձեռ. թիվ 3211, Մաշտոց Ձեռնադրութեան
ԺԶ դ.: Գրիչ՝ Մկրտիչ:
Վերնագիր՝ «Այս են նիւթք եւ պէտք Սրբալոյս Մեռոնին», թ. 105-106:

Ձեռ. թիվ 2295, Ժողովածու
1683 թ.: Գաղատիա:
Վերնագիր՝ «Այս են նիւթք Սրբալոյս Մեռոնին», թ. 24:

Ձեռ. թիվ 6275, Բժշկարան
ԺԷ դ.:
Վերնագիր՝ «Այս է նիւթ Սրբալոյս Մեռոնին», թ. 133:

---

[5] Տե՛ս Ն. Ս. Խանջյան, Սրբալոյս Մյուռոնի բույսերը, «Էջմիածին», 1996, № Թ:

Ձեռ. թիվ 8444 , Ժողովածու (Շաճողարան)

1651,1695,1731-1735 թթ.: Ասպահան (գ): Գրիչ՝ Հովհաննես (Ա), Մովսես Ջուղայեցի (Բ) , Հակոբ Շամախեցի, Մարգար դպիր (Գ):

Վերնագիր՝ «Ցաղագս նիւթոց աստուածագործ Մեռոնին», թ. 349-350:

Ձեռ. թիվ 2939, Ժողովածու

1779-1799 թթ.: Ըռուստաց գիւղ Նովիտայ, Նոր Նախիջևան, Նորաշեն: Գրիչ, ստացող՝ Մարտիրոս Ավետիքով Կաֆացի:

Վերնագիր՝ «Վասն Սրբալոյս Մեռոնի ծաղկունաց անունք», թ. 966:

Ձեռ. թիվ 8217, Ժողովածու

ԺԹ դ. (1821-ից հետո):

Վերնագիր՝ «Այս են նիւթք եւ պէտք Սրբալոյս Մեռոնին», թ. 4:

Ձեռ. թիվ 6233, Բժշկարան

1831-1834 թթ.: Թիֆլիս: Գրիչ՝ Գաբրիել Տեր Գրիգորյան Ջալալյանց Ղարսեցի եւ որդին՝ Ստեփանոս:

Վերնագիր՝ «Վասն Մեռոն եփելու դեղեր», թ. 248-249:

Ձեռ. թիվ 5466, Օրհնութիւն Միւռոնի

1864 թ.:

Վերնագիր՝ «Այս են նիւթք եւ պէտք Սրբալոյս Մեռոնին, որք հարկաւորին ի ժամուն», թ. 1-3:

Ձեռ. թիվ 2786, Ժողովածու

ԺԹ դ.:

Վերնագիր՝ «Այս է նիւթ Սրբալոյս Միւռոնին», թ. 128-130:

«ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ Է ՔԱՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԸ...»

Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի տոնակատարության շրջանակներում ճարտարապետությանը հատկացված գլխավոր ձեռնարկներից մեկի՝ Ս. Էջմիածնի գլխավոր մուտքի և բացօթյա խորանի նախագծումը հանձնվեց ճարտարապետության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Ջիմ Թորոսյանին և նույն ակադեմիայի պրոֆեսոր Ռոմեն Ջուլիակյանին: Երկու ճանաչված ճարտարապետներ, որոնք բազմաթիվ կառույցներ են հեղինակել թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս:

Մտորն ներկայացվող հարցազրույցը Ջիմ Թորոսյանի և Ռոմեն Ջուլիակյանի հետ վերաբերվում է նրանց վերջին համատեղ աշխատանքին՝ Ս. Էջմիածնի գլխավոր մուտքի և բացօթյա խորանի կառուցմանը:

- Ինչպե՞ս ծնվեց այս մտահղացումը, ինչո՞վ էր պայմանավորված բաց խորանի կառուցման անհրաժեշտությունը:

Ջ. Թ. - 1700-ամյակի տոնակատարությունների բնույթն այնպիսին էր, որ կարևորագույն արարողությունները զանգվածային բնույթ պիտի ունենային: Մայր Տաճարի փարաքում ընդամենը 700-800 մարդ կարող էր տեղավորվել, մինչդեռ տոնակատարությունների հրավիրյալների թիվը հասնում էր մի քանի հազարի, և մեծ փարաքի խնդիր կար:

Ռ. Ջ. - Այսինքն՝ նման կառույցի անհրաժեշտությունը ժամանակն ինքնըստինքյան թելադրեց: Նախապես կար Մայր Տաճարի փարաքը բարեկարգելու և նոր մուտք կառուցելու ծրագիր, իսկ բաց խորանի գաղափարը Վեհափառ Հայրապետինն է, ու քանի որ երկու խնդիրներն առնչվեցին միմյանց, նաև երբ վանքի հարակից փարաքը հանձնվեց Եկեղեցուն, այնպիսի կառույց ունենալու խնդիր ծագեց, որը պիտի կարողանար հաղորդակցման մեծ հնարավորություն տալ: Մեր ցանկությունն էլ այն էր, որ այդ կառույցը հանդիսավոր ու մնայուն լինի:

Ի դեպ, մեր ճարտարապետական ժառանգության մեջ կա բաց խորանի նախատիպ՝ Եղեգնաձորի շրջանում՝ Զորաց եկեղեցում: Իհարկե, այն առավելապես ավանդական հորինվածքով է, իսկ Էջմիածնի բաց խորանի հորինվածքը մեր մեկնաբանությունն է: Փորձել ենք ավելի նորովի մեկնաբանում տալ: Գտանք, որ այսպես ավելի խորհրդավոր է և տրամադրող: Համենայնդեպս, գլխավոր մուտքը և խորանը միմյանց հետ հաղորդակցվում են, մեկը մյուսի շարունակությունն է: Մեր խնդիրն էր՝ այս կառույցներով նոր ընկալում հաղորդել Մայր Տաճարի փարաքին: Հիմա, փաստորեն, փոխվել է միջավայրը:

Ջ. Թ. - Քանի որ այս հոբելյանը Եկեղեցու և պետականության միասնականության խորհուրդն ուներ, ուրեմն դա էլ պիտի արտացոլվեր կառույցում: Հենց այդ են խորհրդանշում Գրիգոր Լուսավորչի անունը կրող գլխավոր մուտքի հարթաքանդակները. երկու մույթերը ճակատային կողմում միանում են Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Տրդատ արքայի հարթաքանդակներով, իսկ փաճարի կողմից՝ կամարը միացնող

մոյթերի վրա քանդակված են Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները: Խորանի ծածկը կազմող կիսակամարները, երկու կողմից վեցական, խորհրդանշում են 12 առաքյալներին:

Ռ. Ջ. - Հարթաքանդակների հեղինակը մեր ճանաչված, վերջին տասնամյակներում ԱՄՆ-ում բնակվող քանդակագործ Երվանդ Գոջաբաշյանն է: Նրան երավիրեցինք մեզ հետ աշխատելու, քանի որ մեզ հոգեհարազատ են նրա մոտեցումները. ժամանակին նրա հետ աշխատել ենք:

Ջ. Թ. - Զնական խնդիրներին նրա մոտեցումը, պլաստիկան մեզ հարազատ են: Սկզբում, երբ նա տեսավ, որ 5 մետրանոց հարթաքանդակ պիտի անի, մի փոքր զգուշացավ, բայց հետո... Իր խոսքով՝ հենց կանգնում է քարի առաջ, միանգամից ամեն ինչ մոռանում է, ու միանգամից էլ արեց իր գործը. լավ ստացվեց:

- Փաստորեն, շատ կարճ ժամանակամիջոցում կառույցը հառնեց:

Ռ. Ջ. - Մեկ տարվա ընթացքում: Իր պարզությամբ հանդերձ՝ կառուցողական տեսակետից բավականին բարդ և աշխատատար շինություն է: Մեր բախտը բերեց, շատ լավ շինարարներ աշխատեցին: Դա շատ կարևոր էր: Լարվածության ոչ մի պահ չեղավ. երախտապարտ ենք նրանց՝ ինչպես մուտքի, այնպես էլ խորանի շինարարներին՝ հանձինս Գագիկ Գալստյանի, Կիմ Հակոբյանի, Գրիշա Գրիգորյանի, Վրեժ Շեգունցի և եախագծի գլխավոր ճարտարագետ Հենգել Հակոբյանի:

Ջ. Թ. - Երկու կողմն էլ՝ ճարտարապետներս էլ, շինարարներն էլ, զգում էինք այդ գործի կարևորությունը, և ամեն ինչ շատ ներդաշն ու հանգիստ ստացվեց:

Մենք, որպես ճարտարապետներ, փնտրում էինք ավելի հետաքրքիր ու արտահայտիչ ձևեր, ուզում էինք, որ նորովի լինի, բայց միաժամանակ ավանդական. կամարը՝ կամար, բայց ինչպիսի՞ կամար: Վեհարանից դուրս գալիս էլի կամար է՝ Տրդատի դուռը, որի մեջ ընկալվում է տաճարը՝ զանգակատան հետ: Նոր թեմաներ պիտի ցմփնեին, եղածը պետք է շարունակվեր: Մտածեցինք, որ մյուս կողմում էլ կամար լինի, ու եկեղեցին մեջը ընկարվի, բայց արդեն այլ չափերով, այլ լուծումներով: Նոր կամարը թեքություն ունի, որը բարձրանալով՝ հետզհետե ուղղվում, թաղ է դառնում: Այս հատվածը շինարարական առումով շատ բարդ էր, բայց շինարարների ջանքերով իրականացավ:

Ռ. Ջ. - Ցուրաքանչյուր քար առանձին տաշվել է: Ինչո՞ւ էինք ուզում այդպես անել. որովհետև սովորական կամարի դեպքում երկինքը չէր երևա, մինչդեռ ցանկալի էր, որ վերևում պսակի տեսք լինի, ու երկինքը երևա:

- Նախագծի և իրականացված կառույցի միջև անհամապատասխանություն չեղա՞վ:

Ռ. Ջ. - Բացարձակապես. եթե փոխվել է որևէ բան, ապա՝ մեր համատեղ համաձայնությամբ:

Ջ. Թ. - Պիտի ասեմ, որ շինարարության ընթացքում մեզ հետ որոշակի ակտիվ աշխատանք է ունեցել Վեհափառ Հայրապետը:

Ռ. Ջ. - Ամեն օր Վեհափառը անձամբ գալիս-ղեկավարում էր շինարարության ամբողջ ընթացքը՝ առավոտ լիներ, թե երեկո, բավականին ժամանակ էր տրամադրում և շատ ուշադիր էր:

- Ձեր նախագծած հասարակական շինություններից հետո՝ հոգևոր նշանակության (պաշտամունքային) կառույց. այս անցումը օրգանակա՞ն է:

Ջ. Թ. - Որպես մասնագետ՝ պիտի կարողանաս ամեն անգամ տարբեր կերպերով մոտենալ տվյալ խնդրին ու արտահայտել նպատակը: Դիցուք, դերասանը դեր պիտի ստանա. Շեքսպիրի պիեսներից մեկում էլ կարող է ստանալ, ժամանակակից մի հեղինակի պիեսում էլ: Այսպես ասած՝ պիտի մտնես դերի մեջ, այլ հարց է, թե որն է հոգեհարազատ:

Մեզ համար այս թեմաները շատ հարազատ են, վեհ ու հետաքրքիր, որովհետև այստեղ ի հայտ է գալիս ազգայինի և արդիականի առնչակցումը: Դիանալի ճարտարապետություն ունենք: Փաստորեն, մեր ավանդական եկեղեցական ճարտարապետությունն է մնայուն եղել, և շատ հարուստ ժառանգություն է: Ամեն ինչ այնքան գեղեցիկ է մշակված, կոմպոզիցիոն լուծումներում այնքան նրբություններ կան, այնքան նկարչական է մեր ճարտարապետությունը, նաև այնքան ուժ ու հզորություն ունի, որ անհնար է չազդվելը:

Ռ. Ջ. - Շատ կարևոր է զգացողության հարցը. եթե հոգեպես զգում ես, ապա կարողանում ես հաղորդակցվել այդ ժառանգության հետ: Դա մեծ դպրոց է մեզ համար: Իհարկե, ավելանում են նոր ժամանակի խնդիրները, փոխվում են մոտեցումները, բայց հիմքում մնում է ազգայինը: Մեր եկեղեցական կառույցները հատակագծում քիչ են տարբերվում, բայց հորինվածքի տեսակետից բազմազան են, հիմքում ավանդական ձևն է, իսկ արտահայտման եղանակները տարբեր են:

Ջ. Թ. - Ինչպես երաժշտության մեջ, ընդամենը յոթ նոտա է, բայց ինչքեր են ստեղծվում... Եթե ճարտարապետությանը նայում ես արվեստի տեսանկյունից, իսկ դա այդպես է, ուրեմն այնքա՛ն տեղ կա ստեղծագործելու: Դա էլ կախված է տաղանդից ու վերաբերմունքից: Մեր ստացած ժառանգությունը մի ուրիշ աշխարհ է՝ ինքնատիպ, յուրահատուկ: Մեծ է ներշնչանքի դերը, երբ հարազատ գործ ես անում, մի բան, որի ակունքը հայերեն է: Խնդիրը ոչ միայն մեր ճարտարապետության ուրույն և կատարյալ ձևերի պահպանումն է, այլև այդ ճարտարապետության ներգործուն լինելը: Կարևորը միջավայր և տրամադրություն ստեղծելու, մարդուն վեհ գաղափարներ հաղորդելու սկզբունքն է: Այս առումով ճարտարապետությունը ոչ մի չափով չի զիջում մյուս արվեստներին:

- Ֆրանսիացիները, փոփոխելով ամերիկացի ճարտարապետի հայտնի մի արտահայտությունը, ասում են. «Խոհարարն իր աշխատանքի թերությունը ծածկում է ջրախյուսով, բժիշկը՝ հողով, ճարտարապետը՝ փասադով»: Այդպե՞ս է:

Ռ. Ջ. - Մեր ճարտարապետությանը դա չի վերաբերում, քանի որ նրա արժանիքներից մեկն էլ հենց այն է, որ բոլոր կողմերից՝ աջից, ձախից, դրսից, ներսից, անգամ

վերնից, համարժեք հնչեղություն ունի, նույն նյութն է, նույն հագեցվածությունը, և շատ գուսպ: Որեմ բան քողարկելու միտում չկա: Հստակ, սահուն, տրամաբանական, կառուցողական առումով՝ շատ բարձր:

Ջ. Թ. - Այնպես օրգանական է և տեկտոնիկ, որ եթե մի կտոր հանես, ամբողջը կխախտվի:

- «Մանրուքները կատարելություն են ստեղծում, իսկ կատարելությունը մանրուք չէ»,- Միքելանջելոյի միտքն է...

Ջ. Թ. - Այո՛: Մեր այս վերջին աշխատանքը՝ բացօթյա խորանը և գլխավոր մուտքը, ավարտուն տեսքի կգա, երբ տարածքը լիովին բարեկարգվի, լավ կանաչապատվի, հագնվի ճարտարապետական փոքր ձևերով, և ամեն կառույց մյուսի օրգանական մասը դառնա:

Մանրուք չէ նաև քարի ընտրության հարցը: Շատ կարևոր խնդիր է: Նախագծելիս ուզում էինք, որ այս շինությունը գուսպ լիներ, ներդաշնակեր եղածի հետ, իսկ դրա համար հանգիստ գույն էր պետք, և ընտրվեց մոխրագույնի տաք երանգ:

Առհասարակ, մեծ ուրախություն է քարի հետ աշխատելը: Բնությունից վերցրածը էլի վերադարձնում ես բնությանը, ճիշտ է՝ բնույթը փոխելով:

Ռ. Ջ. - Անշուշտ, բնական է, որ ճարտարապետական գործի՝ որպես հոգևոր արժեքի իրական գնահատականը ժամանակն է տալիս...

Զրույցը վարեց ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆԸ

ՍՏ. ՔՅՈՒՐՔՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինձ համար անկարագրելի ոգևորություն առաջացրեց մրցանակաբաշխության հայտարարությունը Երևանի կենտրոնում Մայր եկեղեցի կառուցելու մասին:

Եկեղեցի կառուցելու ցանկությունը իմ մեջ կար դեռևս 1965 թ., երբ ինձ հանձնարարվեց կատարել հայկական դասական կամերային երաժշտության դահլիճի նախագիծը: Սկսեց ծլարձակել վաղուց երազած իմ մեծ ցանկությունը՝ կառուցել հայկական տուֆից, հայկական ճարտարապետության ավանդույթներին հարազատ եկեղեցի: Ավա՜ղ, այդ տարիներին նման բանի մասին մտածելն անգամ անհեթեթություն էր:

Ի՞նչն էր ինձ ձգում դեպի նման լուծումը:

Ես միշտ զգացել եմ, որ եկեղեցական միջավայրը ունի շատ հզոր ներազդեցություն մարդու վրա. այն մարդուն դարձնում է բարի, ներող և զգայուն՝ հանդեպ շրջապատը: Այս սկզբունքով կառուցված կամերայինի դահլիճը տվեց իր դրական արդյունքը: Սրահից դուրս եկողների դեմքերին ես տեսնում էի բարության դրոշմը և մտածում.

«Ես կառուցել եմ իմ եկեղեցին, միայն ափսոս, որ դահլիճի բարձր կետում չկարողացա դնել իսկական խաչ»:

Եվ ահա տարիներ անց նոր հնարավորություն ստեղծվեց ինձ համար. այս անգամ արդեն կարող էի կառուցել իսկական եկեղեցի՝ իր մատուռներով, գավթով, զանգակատնով: Այս անգամ ինձ համար նախագծման հիմնական էլեկտերը երկուսն էին. նախ՝ եկեղեցին պետք է լիներ հայկական ավանդական ճարտարապետությամբ կառուցված կենտրոնագմբեթ շինություն, և երկրորդը՝ այն չլիներ որևէ ճարտարապետական հուշարձանի կրկնություն:

Նախագծման ընթացքում ինձ առաջնորդում էր այնպիսի գործ ստեղծելու երազանքը, որն իր ճարտարապետական ազդեցության շնորհիվ կարողանար մարդուն դարձի բերել, որ մարդ եկեղեցի մտնելիս իրեն զգար Աստծո հովանու ներքո, զգար, որ վերևում՝ գմբեթից էլ վեր կա միայն մեկը՝ Բարձրյալը, Ով Իր անսպառ սերն ու գթությունն է բաշխում մարդկանց...

Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին կառուցվել է Երևանի կենտրոնում, Հանրապետության հրապարակից ոչ շատ հեռու, մի բլրի վրա, ամփոփված զբոսայգու տարածքով, որը շրջակա փողոցների հարթությունից բարձր է

Ա) Բեմ
Բ) Սուրբ Սեղան
Գ) Ավանդատներ



1. Սրահասարակ 1700 նստատեղերով
2. Գավիթ
3. Ս. Տրդատ մատուռ
4. Ս Սահակ մատուռ
5. Զանգակատուն

15 մետր: Զբոսայգին իր ջրային մակերեսներով, շատրվաններով, ծառուղիներով, սաղարթախիտ ծառերով և դեկորատիվ թփերով ամբողջացնում է եկեղեցու համալիրը և շեշտում նրա դիրքն ու նշանակությունը: Եկեղեցին իր բարձրահայաց դիրքով երևում է շրջակա տարածքներից, որը և մեծ դեր է խաղում ամբողջ շրջապատի ճարտարապետական-քաղաքաշինական առումով մարդկանց հոգեբանական վերաստեղծման առումով: Զբոսայգու յուրաքանչյուր ծառուղի բերում է այն հարթակին, որի վրա տեղադրվել է եկեղեցին:

Կառուցման տեղի ընտրությամբ եղած բազմաթիվ պահանջները դժվարացնում էին ընտրությունը, քանի որ Երևանը այժմ բավական խիտ կառուցապատում ունի, և կենտրոնում չկան պահանջվող չափերի ազատ տարածքներ: Բացի այս, տարածքը պետք է լիներ բարձրադիր իր շրջապատի նկատմամբ. սա ևս կարևոր պահանջ է: Այս երկու պահանջների կողքին կար նաև երրորդը՝ մի շատ կարևոր պահանջ ևս. եկեղեցու արևադրությունը՝ պահպանելու նրա արևելք-արևմուտք կարևոր առանցքը կառուցապատման մեջ:

Այս բոլոր պահանջները ընդհանրացնելուց հետո կարելի էր անել վերջնական եզրակացություն. ընտրված տեղը լիովին բավարարում է այս երեք պահանջներին և նրա ընտրությունը միանգամայն բավարար է:

Ամբողջ պուրակում եկեղեցուն հատկացված հողատարածքը փոքր է, մոտ 1,7 հեկտար, սակայն այն հանգամանքը, որ նա շրջապատից չի անջատվելու ցանկապատով, տպավորություն է թողնում, որ եկեղեցուն է տրամադրված այդ ամբողջ պուրակը, որի մեջ կա ազատ և տրամադրող միջավայր:

Եկեղեցու համալիրի վերջնական կազմի մեջ մտնելու են.

ա) գլխավոր եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, բ) մատուռ՝ Ս. Տրդատ, գ) մատուռ՝ Ս. Աշխեն, դ) զանգակատուն, ե) գավիթ, զ) վարչական փոքրիկ կառույց, է) բաց ավտոհանգրվան, ը) ստորգետնյա ավտոհանգրվան:

Կառուցման առաջին հերթի մեջ են մտնում (որի կառուցումը արդեն սկսված է) առաջին հինգ կետերը, մնացած երեք կետերի կառուցումը առաջինի շինարարական աշխատանքների ավարտից հետո:

Առաջին հերթին թվարկված կառույցները իրարից անջատ ծավալ չեն: Նրանք բոլորը կազմում են մի ամբողջական, ճարտարապետականորեն և ֆունկցիոնալ, իրար հետ կապված համալիր, որը կոչվելու է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Որն է նրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Համալիրի գլխավոր կառույցն է, և նրա ճարտարապետական արտահայտչականության հիմնական ծավալը. նրա արտաքին չափերն են - 58 x 58 մ, մինչև խաչի տակը՝ 56 մ: Ներսում միանգամից կարող է տեղավորվել մինչև 3000 մարդ, որից 1700-ը՝ նստատեղերով:

Նստատեղերի յուրաքանչյուր շարքում տեղադրվելու են 12 աթոռ, իսկ շարքերը իրարից հեռավորված են 1.05 մ և ունեն երկու կողմից ազատ անց ու դարձի հնարավորություն: Այս պայմանը պահպանելը եկեղեցիներում չափազանց պարտադիր է, ի տարբերություն թատերական հանդիսասրահների, քանի որ այստեղ ամբողջ օրը կարող է շարունակվել ծիսակատարությունը, և մարդկանց մուտքն ու ելքը պայմանավորված չէ որոշակի ժամի հետ: Եկեղեցու ներսը միանգամայն ազատված է ամեն տեսակ հենարաններից, սյուներից, պատերից, որոնք կարող էին փակել տեսադաշտը դեպի Ավագ խորան: Ամբողջ 1700 նստատեղերը դասավորված են մեկ ամբողջական հարթության մեջ, առանց բարձրացող վերին հարթակների, և ունեն հիանալի տեսանելիություն: Կանգնելու տեղերը դասավորված են այնպես, որ չեն կարող խանգարել նստածներին: Աղոթասրահում այցելուներին հատկացված է 1800 քմ տարածք, որն ամբողջությամբ մարմարապատ է: Նստարանների տակ ընկած մասի մարմարե երեսպատումը չունի հատուկ նկարվածք, իսկ անցումների մասում հատակն աչքի է ընկնում իր երկրաչափական պարզ, հայկական օրնամենտին բնորոշ նկարվածքով:

Գլխավոր, արևմտյան մուտքից դեպի բեմը տանող անցուղին ունի 3 մ լայնք, նույնքան լայնք ունեն նաև հյուսիսային և հարավային մուտքերի անցուղիները:

Մնացյալ, ներքին անցուղիները համեմատաբար նեղ են՝ 1,5 մ: Նստարանների առաջին շարքերը հեռավորված են դասից՝ այնտեղ կատարվող ծիսակատարությանը չխանգարելու համար: Բեմահարթակի ամբողջ երկարությամբ, 4 մ լայնքով և հատակից 80 սմ բարձր, նույն մարմարի երեսպատումով տեղադրված է Դասի հարթակը: Դասից 1,1 մ բարձրության վրա, եկեղեցու արևելյան մասում Ավագ խորանի բեմահարթակն է, որը զբաղեցնում է 180 քմ մակերես: Ավագ խորանի աջ և ձախ կողմերում տեղադրված են ավանդատները, որոնցից յուրաքանչյուրն ունի 100 քմ տարածություն: Ավանդատները աղոթասրահից անջատում են 4 մ բարձրության մարմարաշար պատերը, որոնցից յուրաքանչյուրում հետաքրքիր ձևավորումով, խորշերի մեջ կան 12 առաքյալների բարձրաքանդակները՝ յուրաքանչյուր կողմում 6 առաքյալ:

Այս ամբողջ կոմպոզիցիայի կենտրոնն է կազմում Սուրբ Սեղանը, որը դեպի վերև զարգացող ճարտարապետական հետաքրքիր լուծումով է արտահայտված: Ամբողջությամբ սպիտակ մարմարով երեսապատված Սեղանի կենտրոնում լինելու է Մարիամ Աստվածածնի նկարը՝ մանուկ Հիսուսի հետ: Սուրբ սեղանի ետնամասում կա ազատ տարածք՝ ծիսակատարությունների բազմաթիվ պարագաների համար: Եկեղեցու արևմտյան՝ գլխավոր մուտքի վերևում տեղադրված է հատուկ օթյակ, որը տրամադրված է երգչախմբին և երգեհոնին: Մուտքի աստիճանները գալիս են գավթից: Ամբողջ աղոթասրահի ազատ տարածքը իրականանում է շնորհիվ ընտրված կոնստրուկտիվ հետաքրքիր լուծման: Այն իրենից ներկայացնում է իրարից 16 մ հեռավորված երկու զույգ կամարներ 38 մ թռիչքով, որոնց վրա ննստած է եկեղեցու սյունազարդ գմբեթը: Գմբեթի վերին կետից կախվելու է բյուրեղապակյա մեծ ջահը: Ամբողջ աղոթասրահի ներքին մակերեսները երեսապատված են հայկական ոսկեգույն տուֆի 8 սմ հաստության սալերով, որոնցից յուրաքանչյուրը առանձին

մետաղական ամրաններով զոդված է երկաթբետոնե մետաղական կմախքին և մոնոլիտացված ցեմենտի հատուկ շաղախով: Պատերի երեսպատված տուֆի հարթությունների վրա մեկ-երկու տեղ կլինեն հարթաքանդակներ, իսկ որոշ մասերում Սուրբ Գրքի պատվիրաններից վերցված փորագրված արձանագրություններ:

Աղոթասրահի ցերեկային և արհեստական լուսավորությունը իրականացված է եկեղեցուն բնորոշ լուսավորությամբ՝ պահպանելով որոշ խորհրդավորություն: Դասի հարթակի հյուսիսային պատի կողմում տեղադրված է մարմարյա ավազան՝ մկրտությունների համար: Գլխավոր եկեղեցին ունի երեք մուտք այցելուների համար՝ արևմտյան (գլխավոր), հյուսիսային և հարավային: Վերջին երկու մուտքերը չափերով և նշանակությամբ զիջում են գլխավորին: Երեք մուտքերն էլ ունեն տաք անցումներ՝ դրսից ցուրտը ներս չթափանցելու համար: Մուտքերը գտնվում են աղոթասրահի հարթության վրա, որը դրսի շրջապատի բարեկարգ հարթակից բարձր է 40 սմ: Եկեղեցին ունի նաև իր չորրորդ մուտքը՝ արևելյան կողմի ստորգետնյա մասից: Սա միմիայն հոգևորականների և ծառայողական մասի անձնակազմի համար է: Ամբողջ աղոթասրահի մակերեսի չափով եկեղեցու ստորգետնյա մասում կա 4 մ բարձրությամբ տարածք, որն օգտագործվում է ներքոհիշյալ ծառայությունների համար:

Ս. Գրիգոր Լուսավորչի հուշաքար, ուր կգան հավատացյալները՝ իրենց հարգանքը մատուցելու Հայոց Լուսավորչի հիշատակին: Այն գտնվում է եկեղեցու ուղիղ կենտրոնական մասում, գմբեթի ուղղահայաց առանցքի վրա:

Խաչ հիշեցնող և հատակից մի փոքր ցածր իջնող հատակի վրա տեղադրված է 1,5 x 3 մ չափերի փայլեցված գրանիտի սալը՝ համապատասխան մակագրությամբ: Հուշատարածքը ամփոփում են չորս մեծ որմնասյուները, որոնք պահում են աղոթասրահի ծածկը: Նրանցից յուրաքանչյուրը ունի 3 x 3 մ չափեր, որոնց մեջ տեղադրված խորշերում դրվում են մոմակալներ հիշեցնող բրոնզյա լուսատուներ՝ էլեկտրական հատուկ լամպերով: Հուշաքարը շրջապատված է մոտ 200 քմ թանգարանի տարածքով, որը տրամադրված է ամբողջ համալիրի կառուցման և քրիստոնեության պատմությանը: Այստեղ ցուցադրվելու են նաև ֆոտոնյութեր, որոնք կներկայացնեն կառույցի աշխատանքները տարբեր փուլերում, ինչպես նաև գծագրերի ընտրություններ և մանրակերտեր կատարված կառուցման համար: Այս տարածքներին կից սրահներում կլինեն գրադարան՝ նվիրված քրիստոնեության պատմությանը և նրա տարածմանը Հայաստանում, փոքրիկ դասախոսական դահլիճներ, որտեղ տարբեր խմբեր կարող են լսել քրիստոնեության պատմությանը նվիրված նյութեր և նայել դիտաֆիլմեր: Այս հարթության վրա գտնվում են հոգևորականների և ծառայողների աշխատանքային և կենցաղային սենյակները, որոնք անմիջապես կապված են դրսի հետ հատուկ մուտքով, ինչպես նաև աստիճանների հետ, որոնք տանում են դեպի ավանդատները:

Այս ամբողջ տարածքը, բացի դրսի անմիջական կապից, աստիճաններով կապված է գավթի հետ, որով ստեղծվում է ներքին հարմար կապ մատուռների, գլխավոր եկեղեցու և նույն հարթության վրա գտնվող արևմտյան մուտքի հետ: Ստորգետնյա հարկում են տեղավորված մեծաքանակ տեխնիկական սպասարկման սեն-

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

յակները, էկեկտրականության, ջրամատակարարման և այլնի սարքեր, որոնք շատ անհրաժեշտ են նման մեծ կառույցը լիարժեք օգտագործելու համար:

Ս. ՏՐԴԱՏ ՄԱՏՈՒՌ
Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՈՒՌ

Երկու մատուռները նման են իրար, և երկուսը միասին գտնվում են գլխավոր եկեղեցու հետ նույն ծավալա-տարածական կոմպոզիցիոն լուծման մեջ:

Մատուռը ունի իր որոշակի նշանակությունը: Այստեղ են կատարվելու առօրյա ծիսակատարություններ՝ հարսանյաց հանդես, կնունք, հոգեհանգիստ և այլն, ծիսակատարություններ, որոնք չեն կարող լեցնել մեծ դահլիճը: Նրանցից յուրաքանչյուրը ունի 120-150 նստելատեղ և առանձին գլխավոր արևմտյան մուտքից բացի ներքին մուտքով կապված է մյուսի հետ: Մատուռը հիմքում խաչաձև է, որի միջնամասը լայնացված է, իսկ թևերը՝ մասամբ սեղմված՝ ավելի պլաստիկ ձև ստանալու և մեծ եկեղեցու հետ հարազատ կապի մեջ լինելու համար: Հատակագծում մատուռի խաչը տեղադրված է 18x18 մ չափերի քառակուսու մեջ: Բարձրությունը մինչև խաչի մասը 29 մ է:

Գմբեթը հանգչում է չորս կամարների վրա, ինչպես մեր ավանդական եկեղեցիներում: Գլխավոր մուտքը աստիճանաբար խորացող և դեպի ներս ընկալող սյուներով գլխավորում է ճարտարապետական շեշտը:

Մատուռների ամբողջական միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաները ներսից և դրսից երեսպատված են նույն ոսկեգույն տուֆի 8 սմ հաստության սալերով:

Հատակի նյութը նույնն է, ինչ ամբողջ համալիրինը: Մատուռների պատերը ևս երեսպատված են նույն տուֆի սալերով:

ԳԱՎԻԹ

Գավիթը ամբողջ համալիրի տարբեր կառույցների ներքին կապող օղակն է:

Այն իրենից ներկայացնում է մի ութանիստ կամարակապ սրահ 15 x 15 մ չափերով, որի առաստաղի վրա տեղադրված է ապակեպատ երդիկ հիշեցնող, ութանիստ հատած բուրգ:

Գավիթը առաջին սրահն է գլխավոր՝ արևմտյան մուտքից: Այստեղից սկսվում են ոտիները դեպի մեծ եկեղեցու աղոթասրահ, դեպի աջ և ձախ դռները, դեպի ստորգետնյա տարածք և դեպի վերին հարթակ, որտեղ տեղավորված կլինեն մեծ երգեհոնն ու երգչախումբը: Վաճառքը եկեղեցիներից դուրս բերելու նպատակով այստեղ է լինելու մոմավաառությունը, եկեղեցիների ներքին տարածքի հարթությունները մրից ու ծխից զերծ պահելու համար: Պատերի ներքին հարթությունները երեսապատված են նույն տուֆի 8 սմ հաստության սալերով: Գավթի ստորգետնյա տարածքը լիովին տրամադրվելու է տեխնիկական սպասարկմանն ու պահեստային սենյակներին:

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Ամբողջ համալիրի սկիզբը և գլխավոր մուտքը զանգակատունն է: Այն 8 x 8 մ չափերի քառակուսի կտրվածքով 22 մ բարձրությամբ մի աշտարակ է, որի վերին մասը պսակված է քարի 5 մ բարձրության թեավոր քարե խաչով: Այն ավարտում է զանգակատան ծավալը իր պլաստիկ լուծումով, ի տարբերություն եկեղեցու և մատուռների գմբեթների: Զանգակատան ծավալի հիմնական ճարտարապետական տարրը նախամուտքն է: Այն իրենից ներկայացնում է իրար վրա դեպի երկինք սլացող, աստիճանաբար մեծացող կամարների փունջ, որի ամբողջությունը շրջանակում է բազմապրոֆիլ հայկական կերտվածքը: Ավանդական ձևի մեջ ամփոփվում է 5 մ միջին բարձրության հարթաքանդակը՝ կատարված տուֆի վրա: Թեման Գրիգոր Լուսավորիչն է, որը ձեռքի քրիստոնեության խորհրդանիշ խաչը կարձես հանձնում է Տրդատ արքային և Աշխեն թագուհուն: Նրանց շուրջը հավատացյալ ժողովուրդն է: Զանգակատունը ևս և՛ դրսից, և՛ ներսից երեսպատված է ոսկեգույն տուֆով:

ԵՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

Ամբողջ համալիրը տեղադրված է մեկ մեծ բարեկարգ, բազալտապատ հարթակի վրա, որը հատակից ցածր է 40 սանտիմետրով: Հարթակը բլուրի վրա իրականացվում է տարբեր բարձրությունների հենապատերի շնորհիվ:

Այգու ծառուղիները հասցվում են հարթակին՝ ռելիեֆին հարմարեցված աստիճաններով: Հենապատերը այգու մեջ ցցուն չդարձնելու համար ծածկված են հողով և կանաչապատված: Հարթակի վրա կտեղադրվեն մեծաքանակ նստարաններ և կլուսավորվեն հատուկ էլեկտրական լուսավորությամբ: Ամբողջ համալիրի գիշերային դեկորատիվ լուսավորությունը կիրականացվի նարնջագույն էլեկտրական լուսարձակների միջոցով: Դրսում կտեղադրվեն խմելու մի քանի ցայտաղբյուրներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՐԴ ՌԱՍԵԼ ՋՈՆՍԹՈՆԻՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ, լորդ Ռասել Ջոնսթոնին:

Հանդիպման ընթացքում խոսվեց քրիստոնյա Եկեղեցիների միջև էկումենիկ հարաբերությունների զարգացման, ինչպես նաև խղճի ազատության ու աղանդավորության հարցերի շուրջ:

«Այսօր դավանաբանական և աստվածաբանական տարբերությունները չեն խանգարում եղբայրական կապերի զարգացմանը»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Միաժամանակ Հայոց Հայրապետը մտահոգություն հայտնեց վերջին տարիներին Հայաստան ներթափանցած զանազան աղանդների ու կրոնական կազմակերպությունների գործունեության առնչությամբ, որոնք, ընտրելով քարոզչության դատապարտելի ձևեր, խաթարում են ժողովրդի միասնականությունը և թշնամություն սերմանում միմյանց միջև:

Պրն Ջոնսթոնը նշեց, որ Եվրախորհուրդը, կողմնակից լինելով բազմակարծությանն ու ազատությանը, պատասխանատվությամբ է վերաբերվում խղճի ազատության խնդիրներին:

«Մեր խնդիրը չէ պաշտպանել կամ դատապարտել աղանդավորությունը: Մենք ձգտում ենք պաշտպանել մարդու կրոնական իրավունքները»,- ասաց պարոն Ջոնսթոնը՝ միաժամանակ նշելով, որ աղանդավորության տարածման առնչությամբ մտահոգության աճ է նկատվում նաև Արևմտյան Եվրոպայում:

Ինչ վերաբերում է աղանդավորության ենթեցրած սահազանգերին, պրն Ջոնսթոնը հայտնեց, որ առ այսօր Հայաստանից Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողով նման հարցով չեն դիմել:

***

Նույն օրը Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց նաև Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի գործադիր տնօրենների խորհրդի անդամներին:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց բանկի ներդրումը Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը հյուրերին ներկայացրեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող էկումենիկ գրասենյակների գործունեությունը, որ ներառնում է փոքր բիզնեսի զարգացման մի շարք ծրագրեր:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, ի պատասխան հյուրերի հարցումների, անդրադարձավ Հայաստանի կրոնական կյանքին, հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու դերին՝ նշելով, որ առանց հոգևոր-բարոյական արժեքների հաստատման հնարավոր չէ արձանագրել որևէ հաջողություն սոցիալ-տնտեսական զարգացման ասպարեզում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի շրջանակներում գործող Ատլանտյան դաշնագրի ասոցիացիայի պատվիրակությանը՝ նախագահ Ալան Ռիչյամսի գլխավորությամբ:

Պատվիրակության առաքելությունը Հայաստան ճանապարհական է: Ինչպես Նորին Սրբությանը տեղեկացրեց Ատլանտյան ասոցիացիայի Հայաստանի գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը, հայկական կազմակերպությունն Ատլանտյան դաշնագրին ներկայացրել է անդամագրվելու հայտ, որ կքննարկվի առաջիկա հոկտեմբերին, ասոցիացիայի 47-րդ վեհաժողովում:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբությունը բարձր գնահատեց ասոցիացիայի առաքելությունը՝ նշելով, որ նոր 1000-ամյակի առաջադրած բազմաթիվ խնդիրներն ու դժվարություններն իրենց լուծումը կարող են ստանալ միայն համագործակցությամբ և փոխըմբռնմամբ: Այս տեսանկյունից կարևորվեց Եկեղեցու դերը ժողովուրդների միջև սիրո, եղբայրության և խաղաղության հաստատման գործում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՀԽ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՒ ՄԵՂԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) շրջանակներում գործող Եվ-

ռոպական տնտեսական համագործակցության խորհրդի և ԵՀՍ Հայաստանյան Կլոր Սեղանի տարեկան ժողովների մասնակիցներին:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետը նկատեց, որ Եվրոպական տնտեսական համագործակցության խորհրդի տարեկան այդ հավաքը Հայաստանում կարևոր իրադարձություն է 1700-ամյակի տոնախմբությունների շրջանակներում: Արտահայտելով իր գնահատանքը ԵՀՍ-ին և Հայաստանյան Կլոր Սեղանին, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը նշեց, որ ԵՀՍ-ի գործունեությունը մեծապես նպաստում է աշխարհում բռնության և բիրտ ուժի վերացմանը՝ մարդկանց հոգիներում սերմանելով սեր և բարություն:

Եվրոպական տնտեսական համագործակցության խորհրդի հերթական տարեկան ժողովը գումարվել էր Ծաղկաձորում, սեպտեմբերի 11-13-ը: Ժողովականները նստաշրջանի ընթացքում քննարկեցին քրիստոնյա Եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների ու նրանց դոնորների փոխշահավետ համագործակցության ոլորտները, դրանց արդյունքները և հետագա անելիքները: Ժողովականները ներկայացնում էին Ռուսաստանում, Ռումինիայում, Դանիայում, Մեծ Բրիտանիայում, Նորվեգիայում, Բելառուսում, Վրաստանում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում գործող Եկեղեցիներն ու եկեղեցական կազմակերպությունները, ինչպես նաև տարբեր երկրներում գործող ԵՀՍ ներկայացուցչությունները:

Եվրոպական տնտեսական համագործակցության խորհրդի նիստերը սովորաբար հրավիրվում են տարբեր երկրներում: Այս տարվա հավաքը հրավիրվեց Հայաստանում՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի:

Ծաղկաձորում տեղի ունեցած նստաշրջանին հաջորդեց ԵՀՍ Հայաստանյան Կլոր Սեղանի մեկօրյա նիստը Մայր Աթոռում, սեպտեմբերի 14-ին: Իր գործունեության ավելի քան չորս տարիների ընթացքում ԵՀՍ հայաստանյան ներկայացուցչությունն իրականացրել է գյուղատնտեսական, կրթական, եկեղեցաշինական, սոցիալական և վարկային ծրագրեր՝ նպաստելով գործարարության և ձեռներեցության զարգացմանը Հայաստանում: Ի լրումն մինչև այժմ իրականացված բազմաբնույթ ծրագրերի, Կլոր Սեղանն այս տարի իրականացրել է միջազգային հաշվապահական հաշվառման մեթոդների ուսուցման դասընթացներ, տարբեր շրջաններում և թեմերում հիմնել համակարգչային կենտրոններ: Հայաստանյան Կլոր Սեղանի ծրագրերի շրջանակներում նախատեսված է Սյունյաց թեմում Եղեգնաձորում կառուցել հիդրոէլեկտրակայան, որի շահագործումից ստացված եկամուտը կտրամադրվի տեղի սոցիալական ծառայությունների և ուսուցիչների վերապատրաստման կենտրոններին:

***

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև աշխարհի տարբեր երկրներից Հայաստան ժամանած ճանաչված գիտնականների՝ ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Արմեն Գալոյանի ուղեկցությամբ:

Մեծահամբավ գիտնականներն առաջիկա օրերին մասնակցելու են Ծաղկաձորում կայանալիք իմունային համակարգի մոլեկուլյար հարցերին նվիրված միջազգային գիտաժողովին:

«Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված տոնախմբությունների օրերին կայանալիք գիտաժողովն ընկալում ենք արժեքավոր ներդրում մեր մեծ հոբելյանին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ գիտական միտքն ու մարդու բանականությունը նպաստի միայն մարդկության բարօրությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՓՈԽԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՆՈՐԲԵՐՏՈ ՊԱՂԻՃԱՅԻ ԵՎ ԿԻՊՐՈՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՈԿՐԱՏԵՍ ՀԱՍԻԿՈՍԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի փոխարտգործնախարար, պաշտամունքի քարտուղար Նորբերտո Պաղիժային:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի գլխավոր տոնակատարությունների նախօրեին Մայր Աթոռ Ս. Էջմիածին նման բարձրաստիճան հյուրի այցելության առիթով:

Պրն Պաղիժան նշեց, որ Հայ Եկեղեցու 1700-ամյա հոբելյանը կարևոր իրադարձություն է նկատվում նաև հեռավոր Արգենտինայում, որ հայ ժողովրդի այս մեծ տոնը նշվելու է երկրի Սենատում, նախագահի նստավայրում: 1700-ամյակի մասին են ազդարարում նաև Արգենտինայում հրապարակված հոբելյանական հատուկ բացիկները:

***

Նույն օրը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի պաշտպանության նախարար Սոկրատես Հասիկոսին:

Հանդիպման ընթացքում գոհունակությամբ նշվեց հայ-կիպրական օրավուր զարգացող կապերի մասին, որոնք իրենց բարի պտուղներն են տալիս երկու երկրների զորացմանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 2-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբդ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ ելեալ ետես ամբոխ բազում, եւ գթացաւ ի նոսա» (Մարկ. Զ 34) բնաբանով քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 8-ին, շաբաթ.- Տօն Ծնեալեան Սրբուհւոյ Կուսին Մարիամայ յԱնապատ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբդ. Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 9-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին աբդ. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Առաքեա, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեռն սուրբ եւ ի յարկս քո» (Պատարագամատույց) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սեպտեմբերի 16-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած, եւ նշան յաղթութեան եդուր մեզ: Սովաւ զկեանս մեր պահեա» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս աբեղ. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29) բնաբանով քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 20-ին, հինգշաբթի.- Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Ս. Տրդատի Բաց Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սեպտեմբերի 22-ին, շաբաթ.- Տօն է Խաչի:

Այսօր Ս. Տրդատի Բաց Խորանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:

Սեպտեմբերի 23-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Քեզ վայել է օրհնութիւն, Աստուած, ի Սիօն, եւ քեզ տացցին աղօթք Երուսաղէմ» (Ճաշոց) բնաբանով քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 29-ին, շաբաթ.- Սրբոցն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Աղուկիսի եւ Ռոմանոսի երգեցողին:

Այսօր Մայր Տաճարում, Ս. Գևորգի խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

Սեպտեմբերի 30-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Եպիսկոպոս ձեռնադրվեցին Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Սիոն վրդ. Ադամյանը, Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը և Տ. Եզրաս վրդ. Ներսիսյանը: Ձեռնադրության կարգից հետո Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Сентябрь 2001 г.)

РЕДАКЦИОННАЯ СТАТЬЯ

1. **АРХИМАНДРИТ АРШАК ХАЧАТРЯН** – Юбилейная веха нашей национальной летописи (с. 3-4).

БЛАГОДАРНОСТЬ И НАИЛУЧШИЕ ПОЖЕЛАНИЯ ЕГО СВЯТЕЙШЕЙСТВУ КАТОЛИКОСУ ВСЕХ АРМЯН ГАРЕГИНУ II ОТ ПАТРИАРХОВ РОДСТВЕННЫХ ЦЕРКВЕЙ ПО СЛУЧАЮ ПРАЗДНОВАНИЯ 1700-ЛЕТИЯ

2. Благодарственное письмо Его Святейшества Алексия II, Патриарха Московского и Всея Руси (с. 6-7).
3. Благодарственное письмо Его Святейшества Римского Папы Иоанна Павла II (с. 8).
4. Благодарственное письмо Его Святейшества Петра VII, Папы и Патриарха Александрии и всей Африки (с. 9).
5. Поздравления Его Святейшества Патриарха Ильи II, Католикоса Грузии (с. 10-11).
6. Благодарственное письмо Его Святейшества Патриарха Румынской Православной Церкви Теоктиста (с. 12).
7. Поздравления Его Преосвященства Архиепископа Евангелическо-Лютеранской Церкви Риги и Латвии Яниса Ванагса (с. 13).

8. Поздравления Президента Франции г-на Жака Ширака (с. 14).
9. Поздравления Президента Украины г-на Леонида Кучмы (с. 15).

10. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на церемонии освящения Святого Мира, 22 сентября 2001 г. (с. 16-19).
11. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на церемонии освящения Ереванского Собора Св. Григория Просветителя, 23 сентября 2001 г. (с. 20-22).
12. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю

1700-летия принятия христианства как государственной религии в Армении и 10-летия провозглашения независимости Республики Армения. 21 сентября 2001 г. (с. 23-25).

13. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 10-летия провозглашения независимости Нагорно-Карабахской Республики, Степанакерт. 2 сентября 2001 г. (с. 26-27).

14. Телеграмма соболезнования Его Святейшества Президенту США г-ну Джорджу Бушу по случаю террористического акта 11 сентября (с. 28).

15. Совместное заявление Его Святейшества Римского Папы Иоанна-Павла II и Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Св. Эчмиадзин, 27 сентября 2001 г. (с. 29-31).

16. **ДЬЯКОН ДАВИД МИКАЭЛЯН**

а) Празднование 1700-летия в Первопрестольном Св. Эчмиадзине, 20-22 сентября 2001 г. (с. 32-40).

б) Освящение Св. Мира в Первопрестольном Св. Эчмиадзине, 22 сентября 2001 г. (с. 41-43).

с) Церемония освящения Ереванского Собора Св. Григория Просветителя, 23 сентября 2001 г. (с. 44-52).

17. **ДЬЯКОН АРТУР ОГАНЕСЯН** – Визит Его Святейшества Римского Папы Иоанна-Павла II в Армению и в Первопрестольный Св. Эчмиадзин, 25-27 сентября 2001 г. (с. 53-84).

18. **ЧТЕЦ ГАЙК БАРСЕГЯН** – Возведение в сан епископа в Первопрестольном Св. Эчмиадзине, 30 сентября 2001 г. (Помещены биографии Е.П. епископа Езраса Нерсисяна, Е.П. епископа Сиона Адамяна, Е.П. епископа Микаела Аджапагяна и Е.П. епископа Мовсеса Мовсисяна) – (с. 85-97).

19. **ВОЛОДЯ АБРААМЯН** – Торжественные события (по случаю празднества 1700-летия) – (с. 98-102).

1700-ЛЕТИЕ

20. **НАЗИК ХАНДЖЯН, СИРАНУШ ГАЛСТЯН** – Списки растений, входящих в состав Святого Мира, в рукописях Матенадарана им. Маштоца (научное исследование) - (с. 103-109).

21. «Работать с камнем – огромная радость...» (Интервью Анны Алоян с архитекторами Джимом Торосяном и Роменом Джулхакяном) – (с. 110-113).

22. **СТЕПАН КЮРКЧЯН** - Ереванский Собор Св. Григория Просветителя (представлены общая композиция и архитектурная структура церкви) –(с. 114-120).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ

23. Аудиенция Лорда Рассела Джонстона и руководителей Европейского банка развития и реконструкции у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 11 сентября 2001 г. (с. 121-122).
24. Аудиенция представителей Ассоциации Атлантического договора у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 12 сентября 2001 г. (с. 122).
25. Аудиенция участников заседаний Совета Европейского экономического сотрудничества и Армянского Круглого стола СЕС, а также участников Международного симпозиума биохимиков в Армении у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 14 сентября 2001 г. (с. 122-124).
26. Встречи Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, с заместителем Министра иностранных дел Аргентины г-ном Норбертом Падижой и с Министром обороны Кипра г-ном Сократесом Хасикосом, 20 сентября 2001 г. (с. 124).
27. Краткие церковные новости. Информация о Богослужениях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Св. Эчмиадзине в течение сентября 2001 г. (с. 125-126).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(September 2001)

EDITORIAL

1. **ARCHIMANDRITE ARSHAK KHACHATRIAN** - The Jubilee Landmark of our National History (p.3-4).

GRATITUDE LETTERS AND BEST WISHES TO HIS HOLINESS GAREGUIN H, CATHOLICOS OF ALL ARMENIANS, FROM PATRIARCHS OF SISTER CHURCHES ON THE OCCASION OF 1700-th ANNIVERSARY CELEBRATION

2. Gratitude letter of His Holiness Alexy II, Patriarch of Moscow and all Russia (p. 6-7).
3. Gratitude letter of His Holiness Rome Pope John-Paul II (p. 8).
4. Gratitude letter of His Holiness Pope and Patriarch of Alexandria and all Africa Peter VII (p. 9).
5. Congratulation letter of His Holiness Ilia II, Catholicos of Georgia (p. 10-11).
6. Gratitude letter of His Holiness Patriarch of Romanian Orthodox Church Theoctist (p. 12).
7. Congratulation letter of His Eminence Archbishop Janis Vanags of Riga and Latvia Evangelic-Lutheran Church (p. 13).

8. Congratulation letter of Mr. Jacques Chirac, President of France (p. 14)
9. Congratulation letter of Mr. Leonid Kuchma, President of Ukraine (p. 15).

10. Speech of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, on the occasion of the Holy Chrism benediction ceremony, St. Echmiadzin, September 22, 2001 (p. 16-19).
11. Speech of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, on the occasion of Yerevan St. Gregory the Illuminator Cathedral benediction, September 23, 2001 (p. 20-22).
12. Speech of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, at the reception devoted to the 1700th anniversary of the adoption of Christianity as State religion in Armenia and the 10th anniversary of Independence Declaration of the Republic of Armenia, Septemher 21, 2001 (p. 23-25).
13. His Holiness blessing message to the Nagorny-Karabagh Republic on the occasion of the Independence Declaration 10th anniversary, Stepanakert, 14. September 2, 2001

(p. 26-27).
14. His Holiness condolence message to USA President George Bush on the occasion of September 11 act of terrorism (p. 28).
15. Joint Declaration of His Holiness Rome Pope John-Paul II and His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, St. Echmiadzin, September 27, 2001 (p. 29-31).

16. **DEACON DAVID MIKAELIAN**
a) 1700th anniversary celebration at the Holy See of St. Echmiadzin, September 20-22, 2001 (p. 32-40).
b) Benediction of the Holy Chrism at the Holy See of St. Echmiadzin, September 22, 2001 (p. 41-43).
c) Holy Ceremony of Yerevan St. Gregory the Illuminator Cathedral benediction, September 23, 2001 (p. 44-52).
17. **DEACON ARTHUR HOVHANNISSIAN** - Visit of His Holiness Rome Pope John-Paul II to Armenia and to the Holy See of St. Echmiadzin, September 25-27, 2001 (p. 53-84).
18. **DPIR HAYK BARSEGHIAN** - Bishop ordination at the Holy See of St. Echmiadzin, September 30, 2001 (Biographies of H.E. Bishop Ezras Nersissian, H.E. Bishop Sion Adamian, H.E. Bishop Mikael Ajapahian and H.E. Bishop Movses Movsissian) - (p. 85-97).
19. **VOLODIA ABRAHAMIAN** - Solemn Events (on the occasion of 1700th anniversary celebration) - (p. 98-100).

1700th ANNIVERSARY

20. **NAZIK KHANJIAN, SIRANUSH GALSTIAN** - Lists of the Saint Chrism Ingredients in the Manuscripts of the Mashtots Matenadaran (investigation) - (p. 103-109).
21. «It is a great pleasure to work with stone...» - (An interview of Anna Aloyan with architects Jim Thorossian and Romen Julhakian) - (p. 110-113).
22. **STEPAN KURKCHIAN** - The Yerevan St. Gregory the Illuminator Cathedral (Presentation of the church general composition and architectural structure) - (p. 114-120).

AT THE HOLY SEE

23. Audience given by His Holiness Gareguin II to Lord Russell Johnston and Leaders of European Bank of Development and Reconstruction, September 11, 2001 (p. 121-122).

24. Audience given by His Holiness Gareguin II to the representatives of Atlantic Treaty Association, September 12, 2001 (p. 122).

25. Audience given by His Holiness Gareguin II to the European Economic Cooperation Council and ECC Armenian Round Table sittings participants, as well as to the participants of International Biochemistry Symposium in Armenia, September 14, 2001 (p. 122-124).

26. Meetings of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, with Argentina Vice-minister of Foreign Affairs Mr. Norbert Padija and Cyprus Minister of Defense Mr. Socrates Hasikos, September 20, 2001 (p. 124).

27. Brief Church News. Information about the Holy Masses, sermons and other ceremonies held at the Holy See and the Saint Echmiadzin Cathedral during September 2001 (p. 125-126).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(Septembre 2001)

EDITORIAL

1. **ARCHIMANDRITE ARCHAK KHATCHATRIAN** – Le jalon jubilaire de notre histoire nationale (p. 3-4).

LETTRES DE REMERCIEMENTS ET SOUHAITS A SA SAINTETE GAREGUINE II, CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS, DE LA PART DES PATRIARCHES DES EGLISES SOEURS A L'OCCASION DE LA CELEBRATION DU 1700-e ANNIVERSAIRE

2. Lettre de remerciements de Sa Sainteté Alexy II, Patriarche de Moscou et de toute la Russie (p. 6-7).
3. Lettre de remerciements de Sa Sainteté le Pape Jean-Paul II (p. 8).
4. Lettre de remerciements de Sa Sainteté Pierre VII, Pape et Patriarche d'Alexandrie et de toute l'Afrique (p. 9).
5. Lettre de félicitation de Sa Sainteté Ilia II, Catholicos de Géorgie (p. 10-11).
6. Lettre de remerciements de Sa Sainteté le Patriarche Théoctiste de l'Eglise Orthodoxe de Roumanie (p. 12).
7. Lettre de félicitation de l'Archevêque Janis Vanags de l'Eglise Evangélique Luthérienne de Riga et de la Lettonie (p. 13).

8. Lettre de félicitation de M. Jacques Chirac, Président de la France (p. 14).
9. Lettre de félicitation de M. Léonid Koutchma, Président de l'Ukraine (p. 15).

10. Intervention de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la cérémonie de la bénédiction du Saint-Chrême, Saint-Etchmiadzine, 22 septembre 2001 (p. 16-19).
11. Intervention de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la cérémonie de la bénédiction de la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur d'Erevan, 23 septembre 2001 (p. 20-22).
12. Intervention de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à la célébration du 1700[e] anniversaire de l'adoption du Christianisme comme religion d'Etat en Arménie et du 10e anniversaire de la Déclaration de l'Indépendance de la

République d'Arménie, 21 septembre 2001 (p. 23-25).

13. Message de bénédiction de Sa Sainteté Garéguine II à l'occasion du 10e anniversaire de la Déclaration de l'Indépendance de la République du Haut-Karabagh, Stépanakert, 2 septembre 2001 (p. 26-27).
14. Message de condoléances de Sa Sainteté Garéguine II au Président Georges Bush à l'occasion de l'acte de terrorisme du 11 septembre (p. 28).
15. Déclaration commune de Sa Sainteté le Pape Jean-Paul II et de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, Saint-Etchmiadzine, 27 septembre 2001 (p. 29-31).

16. **DIACRE DAVID MIKAELIAN** -
    a) Célébration du 1700e anniversaire au Saint-Siège d'Etchmiadzine, 20-22 septembre 2001 (p. 32-40).
    b) Bénédiction du Saint-Chrême au Saint-Siège d'Etchmiadzine, 22 septembre 2001 (p. 41-43).
    c) Cérémonie de bénédiction de la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur d'Erevan, 23 septembre 2001 (p. 44-52).
17. **DIACRE ARTHUR HOVHANNISSIAN** - Visite de Sa Sainteté le Pape Jean-Paul II de Rome à Erevan et au Saint-Siège d'Etchmiadzine, 25-27 septembre 2001 (p. 53-84).
18. **DPIR HAYK BARSEGHIAN** – Ordination d'évêques au Saint-Siège d'Etchmiadzine, 30 septembre 2001 (Biographies de S.E. l'évêque Ezras Nersissian, S.E. l'évêque Sion Adamian, S.E. l'évêque Mikael Adjapahian, S.E. l'évêque Movses Movsissian) – (p. 85-97).
19. **VOLODIA ABRAHAMIAN** – Evénements solennels (à l'occasion des festivités du 1700e anniversaire) – (p. 98-102).

1700e ANNIVERSAIRE

20. **NAZIK KHANDJIAN, SIRANOUCHE GALSTIAN** – Listes des ingrédients du Saint-Chrême dans les manuscrits du Maténadaran Machtots d'Erevan (recherche scientifique) – (p. 103-109).
21. «C'est une grande joie de travailler la pierre… » (Interview d'Anna Aloyan avec les architectes Jim Thorossian et Romen Djoulhakian) – (p. 110-113).
22. **STEPAN KURKTCHIAN** – La Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur d'Erevan (Présentation de la composition générale et de la structure architecturale) – (p. 114-120).

AU SAINT-SIEGE

23. Audience donnée par Sa Sainteté Garéguine II à Lord Russell Johnston et aux responsables de la Banque de Développement et de Reconstruction, 11 septembre 2001 (p. 121-122).
24. Audience donnée par Sa Sainteté Garéguine II aux représentants de l'Association du Traité de l'Atlantique, 12 septembre 2001 (p. 122).
25. Audience donnée par Sa Sainteté Garéguine II aux participants du Conseil de Coopération Economique Européenne et de la Table Ronde d'Erevan du CCE, ainsi qu'aux participants du Symposium International de Biochimie d'Arménie, 14 septembre 2001 (p. 122-124).
26. Rencontres de Sa Sainteté Garéguine II avec M. Norbert Padilja, Vice-ministre des Affaires Etrangères d'Argentine, et M. Socrates Hasikos, Ministre de la Défense de Chypre, 20 septembre 2001 (p. 124).
27. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres cérémonies accomplies au Saint-Siège et à la Cathédrale d'Echmiadzine au mois de septembre 2001 (p. 125-126).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения. Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine". Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ